

ԳԻՏՈՒԹԻՒՆ  
ԶԱՍՏՈՒԾՈՅ




ԹԱՐԳԱՆԵԱՅ  
Տ. Հ. Թ. ՍԱԻԱԼԱՆԵԱՆՅ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
ՍՐԲՈՅ ԶԱՆՈՎԱԲԵԱՆՅ  
ՅԵՐՈՒՍԱԼԵՄ



1888



ԳԻՏՈՒԹԻՒՆ ԶԱՍՏՈՒԾՈՅ

(THEODICÉE)

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Տ. Հ. Թ. ՍԱԻԱԼԱՆԵԱՆՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷԶՄԻԱՆՆԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ


Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՍՐՔՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՅ

ՅԵՐՈՒՍԱԴԷՄ

1888

A 7535



ՀՐԱՄԱՆԱԻ

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԳՈՅ

Ա. Ա. ԲԱՆՈՒՆՅԱՆ

Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Թ Ա Լ Ա Ս Յ Ի

Հ Ա Ն Գ Ո Ւ Յ Ե Ա Լ Ա Ր Գ Ա Ս Ի Բ Ա Շ Ե Գ Ե Ա Ն

Յ Ա Ա Ն Ո Ւ Մ Ա Ն Ա Ն

Է Ֆ Է Ն Տ Ի Ի

Ե Ի

Բ Ա Ր Ե Հ Ա Մ Բ Ա Ի

Գ Ե Ր Գ Ա Ս Տ Ա Ն Ի Ի Ի Ր Ո Յ



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԱռՅն թարգմանութիւնս՝ լրացուցած՝ էրբ կը սրատրատուէի մի քանի խօսք յառաջարանել զլրջոյկիս կարեւորութեան նկատմամբ և իմ նպատակս յայտնել, որ թողո՞վ այնչափ սիրոյին վկայեր և զբօսեցուցիչ պատմութիւններ այսպիսի մի ցամաք նիւթի վերայ ճառող հեղինակութիւն մի բնարեցի թարգմանութեան համար, և ահա զարմանալի իմն զուգագիպութեամբ թանգ բարեկամներես մին յուզարկեց ինձ նոյն պահուն մի քանի լրագրաց հետ նաև Մասիսի 3781—82 թիւերը այլովք հանդերձ: Ահայ զանոնք կարգալ անհամբերաբար, ուր հանդիպեցայ Ն. Տաղաւարեան ստորագրութեամբ յօգուած մի «Քաղաքակրթութիւն և իւր աղէտքն» մակագրեալ: Որչափ յառաջ կը տանէի բնթերցումն, այնչափ աւաւել կը զգածուէի: Արբանձանայի գանձելով նորա մէջ նոյն հոգին՝ որով ևս ոպեւորուած էի, նոյն կարծիքներն զորս ևս կը տածէի՝ ՚ի մասին ներկայ ժամանակիս երիտասարդութեան բարուց և վարուց ապականութեան, մանաւանդ կրօնի պակասութեան և անտարբերութեան, որ սկսած է տարածուիլ արդի երիտասարդաց մտացը մէջ: Կարծես թէ Պ. Տաղաւարեան իմ զերս իւր վերայ առած աշխատասիրած է յօրինել իմ յառաջարանս, այնպիսի զգացուն և յաղթահարիչ գրչու ձեռնարկած է ՚ի մէջ բերել Քաղաքակրթութեան աղէտքը, թուումն մասանց անելով բոլոր այն շարիքն որ արդիւնք են նորա քողին տակ ծածկուած մի թշնամոյ: Արդի քաղաքակրթութիւնն՝ որ թիւրած է քրիստոնէութեան գծած սահմանէն, և կը ձգտի դէպի Հոռոմեական կայսերութեան դարը, յորում կը թագաւորէր մարդկային կիրքը յանուն բնութեան:

կը պատճառայ , ըստ առից մեր բանասիրին , \* Մեր առողջութեան , երկարակեցութեան , բարոյականութեան . . . երջանկութեան և նոյն իսկ Արծնի » մահացու հարուած մի տալ :

Ի՞նչ զգացած վիշտս առաւելագէտ կրօնական անտարբերութիւնն է , որ երթալով մինչեւ անկրօնութեան երես կը պարզէ : Աւելի մեծ է սորա պատճառած ցաւը ճշմարիտ քրիստոնէի սրտին , ըստ սրում սրա հետեւութիւնն է անբարոյականութիւնը , անբարոյականութենէ կը հետեւի խանգարմունք առողջութեան , արգելք աճման և երկարակեցութեան մարդկային ազգի , այլովք հանդերձ : Աւելորդ է մեզ հետազոտել թէ ո՞չք են բուն պատճառ և աղբիւր , ուստի կը բռնեն յառաջ կուգան այսչափ ազեւոր , այլ մտածել հարկ է առաւելագէտ թէ ինչ գարման կայ սոցա առաջին սանկլու համար , ինչպէս է որ մարդս օրինակ կ'առնու միշտ քան զինքն հասակաւ մեծ են կամ զեթ հաւատարէն : Ինչ որ կը տեսնէ կրտսերն իւր երէց եղբորէ կամ ընկերակցէ , նորա կը հետեւի անդիտակցարար թէ 'ի բարին եւ թէ 'ի չարն , առանց մասնուոր համոզումն ունենալու , որ ցոյց կուտայ դատադութենէ զուրկ լինելնին : Եւ այս հետեւութիւնս այնչափ փոանգաւոր և աղիտարեր է երբ շունի նա իւր աչաց առջեւ մի ուրիշ կամ գործով և կամ բանիւ ցոյց տուող բարի օրինակ , որ իւր երէցն ուսած ու հետեւած օրինակին քանի միասակար լինիլը ուսուցանէ նմա և զգուշացնէ : Այսպէս շղթայարար փոքրը մեծն զխթելով երիտասարդութեան հետ հետզհետէ մանկութիւնն ալ կը կանխէ երթալ մերձեւալ կորստեան մէջն եղբրբը :

Ուստի մանկութիւնն աղատելու համար սոյն հոգեկան կորստենն ի՞նչ անել հարկ է , եթէ ոչ՝ մինչդեռ տակաւին նորա միտքը չէ իտղաւ կորուսած իւր անմեղութիւնը , կազդուրել պէտք է կրօնական սկզբունքներով և սիրան ազնուացնել բարոյական հրահանգներով : Եւ այս ոչ ուրիշ կերպով կարելի է յաջողել , բայց եթէ զսրբոցայ մէջ կրօնագիտութեան դասն ստիպողական անել ստորին դասերու



աղայոց համար հանդերձ յորդորակներով և բարձրագոյն գաստու աշակերտաց զերբնական կամ բրիտաննական աստուածաբանութիւնը գաստիտուել ոչ հարեւանցի : այլ հիմնական և գասական եղանակաւ : ինչպէս այն գրքուկիս մէջ կը տեսնէ ընթերցողը : որոյ նպատակն է ծանօթացընել հաստատելով մեկտեղ՝ զոյ մի անհուն իսկ հարկաւոր : որ է Աստուած : սակզմիչ տիեզերաց : ընդդէմ այնոյիկ որք ուրանալով զԱստուած՝ ամեն ինչ բնութեան կուտան : և շեն կամենար հաւատալ ինչ որ իւրեց մտաց հասկացողութեան տահանեն մեր է : առանց բերանելու թէ ինչ է բնութիւն ասածը : որ զորութեամբ աստուածային անեղ բնութիւնը կ'ենթադրէ :

Կրթարանաց մէջ միայն կարելի է : ինչպէս ասացինք : ճշմարիտ հաւատոյ մէջ զարգացընել զեռահաս մանկտին : ցոյց տարով նոցա կրօնքի հարկաւորութիւնը : և բրիտաննութեան միակ փրկարար կրօնք լինիլը : մարդոյ վախճանական նպատակը և բարոյական վարդապետութիւնը կրօնքի : Բոլոց այն ուսմունքը նոցա մտաց մէջ խոր տարւորելու համար : պետք է զորացընել տակաւ նոցա գաստումք : և այն ժամանակ կը լինի այն մի պայծառ ջան նոցա իմացականութեան և կանոն սրտից : Այսպէս ուրեմն կրթարանաց մէջ կրօնական ուսմունքը պարտաւորիչ անելով հարկ է ուսուցանել մանկանց թէ հաւատքն և կրօնական պաշտամունքն այնչափ հարկաւոր են մարդոյ : որչափ հարկաւոր է կերակուրը մարմնոյ սննդեան համար : այսպէս և կրօնքն սնունդ է հոգւոյ և մի կուց որ յարաբերութեան մէջ կը դնէ զմարդ իւր Ստեղծողին հետ : ուստի իրաւամբ ասած է Պ. Կոտլէ կրթական արդի նախարարը Չաղլիոյ : թէ « Մեծ ազգ մի չէ կարող ապրիլ առանց հաւատոյ և առանց հոգւոյ » : Եթէ մի մեծ ազգ չէ կարող : ևս առաւել Հոյ ազգի նման փոքր ազգ մի չէ կարող ապրիլ առանց հաւատոյ : որ իւր արդի գոյութիւնը կրօնքին կը պարտի : որ ինչպէս արարածն իւր Արարչին : նշնպէս և մի ազգի բուր անհատները իրարու հետ կը կուգէ բարոյականապէս :

և կը կազմէ մի հաւարական մարմին, որոյ կենսատու հոգին նոյն ինքն կրօնքն է :

Թէ որչափ կարեւորութիւն ունի սոյն գրքոյկս արգի քաղաքակրթութեամբ սնամ երիտասարդաց համար, որոյ սիրտը առգորուած է նորա սիտղ ըմբռնումէ պատճառաւ յսուութեամբք և միտքը խանգարուած հակակրօնական գաղափարներով, ողջամիտ կարգացողն ինքնին պիտի գնհատէ, Աթէ պիտի կարողանամ, ինչպէս կը յուսամ, սոյն աշխատութեամբս օգտակար լինել 'ի բաց հեռացընէ լով անկրօնութեան վտանգէ զամեն յերիտասարդաց և զարձրնէ զնոսա 'ի ճշմարիտ հաւատն Քրիստոսի, և ներշնչել նոցա մտաց մէջ կրօնքի ճշմարիտ լուսոյ մի սիրքիկ նշուլք, մեծ ծառայութիւն արամ պիտի համարիմ զիս իմ սիրելի ազգիս բնծայելով նմա սոյն թարգմանութիւնս իբր գասազիրք և իբր առաջնորդ կրօնքի, զոր պարտի իւրաքանչիւր երիտասարդ ունել իւր գրչանին մէջ և կամ իւր գրասեղանին վերայ :

1885

ՁԳ-ԻՆ :



# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԶԱՍՏՈՒԾՈՅ

## ԳԼՈՒԽ Ա.

**Է**լսե մի Աստուած . ասիկայ բոլոր ազգերէ , ամեն երկրի մէջ և ամեն ժամանակ ճանչցուած մի ճշմարտութիւն է : Մարդկային ազգը սոյն աւանդութիւնն ամեն ընտանեաց և ամեն ժողովրդոց մէջ պահած է , որով կ'ելնէ մինչեւ իւր նախահայրը կամ մինչեւ յԱստուած , որոյ գոյութիւնը դարուց 'ի դարս միաձայնութեամբ հաստատուած մարդկային ազգի և օրհնութեաց գոյութեան չափ ստոյգ է , եւ որոյ պատճառն է (1) :

(1) « Ի սկզբանէ յայտնեց Աստուած մարդոյն ինչ որ յայնժամ պէտք էր նմա որ գիտնայ . ասաց նմա զանցեալն . այսինքն թէ ի՞նչ եղանակաւ յընչէ 'ի դարս հանեց զնա և բոլոր օրհնութիւնն որ նորա աչաց կ'երեւէին : Ասաց նմա ներկայն , այսինքն ուսոց նմա ինչ որ էր ինքն և ինչ որ էին իւր շուրջն եղողները : զինքը պահպանելու միջոցներն և իւր մտաց : որտի եւ զգայարանաց դրած պարտաւորութիւնքը : Ասաց նմա զսպասարանն , վարժութեամբ ճանչընելով նմա զիւր անմահ վախճանն : Արդէս զի մարգս լինի ինչ որ Աստուած կամեցած է , պարտ էր ճանչել բոլոր այս

Կարելի չէ երբէք որ համազմամբ անասուած մարդիկ եղած լինին, բայց տեսնուած են ամեն դարու մէջ բաւական արիւմարութեամբ անտարբեր մարդիկ այսպիսի մի կարեւոր հարցի մասին հետեւեալ լեզուն բանեցրնող, զոր Յասկալ նոյս բերանը կը գնէ :

« Չը գիտեմ՝ ո՞վ դրաւ զիս աշխարհիս մէջ . ի՞նչ է աշխարհս, և ի՞նչ եմ ես . այս ամեն ասածներուս վերայ բոլորովին ագէտ եմ . . . : Գիտցածս այս է միայն՝ որ շատ չքանէր պիտի մեռնիմ . բայց աւելի չը գիտցածս այս մահն է, ուսկէ չը պիտի կարենամ խոյս տալ : Ինչպէս որ ուստի գալս չը գիտեմ, նոյնպէս չը գիտեմ ո՞ւր երթալս,

իրերն . և ըստ որում սոցա ծանօթութիւնն հաւատարացես անհրաժեշտ է ամեն մարդոց գիտնալ, մարդկային ազգի հոյրը զայն բանի բերանոց աւանդեց իւր որդւոց, և աքս եւս իրենց սերնդին : Աւստիկ աւանդութեան սկզբնաւորութիւնը » : ( Լամբէ ) :

Աստուած է միայն մեր խնայտասիրութեան հիմը, ըստ բանի Առարկայն . « Աստուած արաւ աշխարհս ևս ինչ որ կայ եօրս մէջ . եւ երկնի ևս երկրի տէր է . . . անոջ կ'արդիմբ կը շարժիմբ ևս եմբ » : ( Գործ . ԺԷ . 24—28 ) : Ուրեմն Աստուած է մեզ համար ազրիւր ամեն կատարելութեան . սկիզբն բնական . բնազանցական ևս խնայական . բազաքական աշխարհներու . բարոյական և կրօնական կարգի և այլն . և ամեն խնայտասէր . որ ճշմարտացէս արժանի է սոյն անուան, չէ կարող ուրիշ գրութիւն մի ունենալ :

գիտեմ միայն որ այս աշխարհէս ելնելուս պիտի ընկնիմ մշտապէս կամ ոչնչութեան մէջ կամ ցասուցեալ Աստուծոյ մի ձեռաց մէջ, առանց գիտնալու թէ սոյն երկու վիճակաց ո՞ւմ բաժին պիտի լինիմ մշտնջենապէս: Աւասիկ իմ վիճակս լի թշուառութեամբք, տկարութեամբք և մթութեամբք. և բոլոր այս բաներէս կ'եղբակացընեմ թէ՛ պէտք է որ իմ կենաց բոլոր օրերն անցընեմ առանց մտածելու ինձ պատահելիքն, և և հետեւ իմ մի միայն իմ միտումներուս, ոչինչ մտածելով և անհանգիստ լինելով, յաւիտենական թշուառութեան մէջ ընկնելու համար ինչ որ պէտք է գործելով, թէ եւ ճշմարիտ լինի ինչ որ կ'ասեն ինձ այս մասին: Արբելի է որ իմ տարակուսանաց մէջ կարող կը լինիմ նշոյլ մի գտնել, բայց աշխտանք կրել չեմ կամենար. . . . Ար կամիմ առանց նախատեսութեան և առանց երկխղի այսպիսի մի մեծ դիպուած փորձել, թողուլ զիս հեշտօրէն մեղկաբար դէպ ՚ի մահ առաջնորդուիլ անստոյգ լինելով իմ ապագայ վիճակիս յաւիտենականութեան վերայ ։

Ետ պարզ է որ այսպիսի մի լեզու առողջ մտքէ յառաջ չը գար, այլ միայն ՚ի կրից անզգայ դարձած սրտէ:

Աստուծոյ գոյութեան այլ և այլ ապացոյցներն երեք տեսակ են, այսինքն, բնական, բարոյական և բնագանձական :

Բնական ապացոյցք թուով երեք են. նիւթոյ գոյութիւնը, նիւթոյ շարժումն և տիեզերքիս կարգը :

Մեր ապացոյցները մանրամասնելէ յառաջ, աւասիկ մի ընդհանուր ձեռնարկութիւն որ կը պատրաստէ առ այն :

Կը տեսնեմք մեր շուրջը անհուն էակներ, զորս շատ լաւ կարեմք ըմբռնել իբր չ'եղած, և որ կարող էին չք գոյանալ իսկ ուրեմն իրենց բնութեան հարկաւորութենէն չէ որ գոյացեր են. դարձեալ, անոնք իրենք իրենցմէ չեն գոյացած, որովհետեւ գոյանալէ յառաջ չէին կարող ներգործել. ուրեմն ինքնին գոյացած չեն. ուրեմն առաջին պատճառ մի ունին : Այս առաջին պատճառն մի ուրիշէ ստացած չէ իւր գոյութիւնը, որովհետեւ բացարձակապէս առաջին լինելով, իրմէ առաջ ուրիշ բան մի չք կար. կամ ուրիշ խօսքով, նա չէ կարողացած ինքզինք գոյացընել, որովհետեւ լինելէ յառաջ չէր կարող ներգործել. ուրեմն իւր բնութեան հարկաւորութենէ կամ ինքնին գոյացած է : Արդ իւր բնութեան հարկաւորութեամբը գոյացող էակը հարկաւոր է

և գերազանցապէս կատարեալ, սոյնը պիտի  
սպաղուցանեմք մի քիչ յետոյ :

### ՅՕԴՈՒԱԾ Ա .

1. Առաջին աղացոյց Աստուծոյ գոյութեան՝  
նիւթոյ գոյութենէ առնուած :

Նիւթը կայ . արդ նա հարկաւոր չէ ,  
որովհետեւ նորա մէջ ամեն ինչ պատահաւ  
կան է . ուրեմն նիւթը ստեղծող մի կ'են-  
թաղրէ : Այս ստեղծողն ևս Աստուած  
կ'անուանեմ . ուրեմն Աստուած կայ :

Բայց այս աղացոյցն ստեղծման վերայ  
հիմնուած ըլլալով, պէտք է պարզեմք սոյն  
տեսութիւնը :

Ի՞նչ է ստեղծելը : Ստեղծելը , կ'ասէ ,  
երեւելի մի փիլիսոփայ , այնչափ դժուար  
բան չէ հասկանալ , որովհետեւ այնպիսի  
բան մի է զոր մեք ամեն վայրկեան կը գոր-  
ծեմք . արդարեւ ամեն անգամ որ մի ազատ  
գործ կանեմք , կը ստեղծեմք , վասն զի մեր  
անձին միայն կ'ընծայեմք զայն : Չէր այն ,  
և կը սկսի լինել մեր ստացած յատուկ պատ-  
ճառողական սկզբան զօրութեամբը : Այս-  
պէս սխառնառեչն՝ ստեղծել է . բայց ինչով,  
արդեօք ոչնչով, ոչ անշուշտ . այլ բոլորովին

հահառակը . բուն իսկ մեր էութեամբը ,  
ասել կամիմ՝ բոլոր մեր ստեղծիչ զօրու-  
թեամբը , բոլոր մեր ազատութեամբը , բու-  
լոր մեր կամական գործօնէութեամբն եւ  
բոլոր մեր անձնաւորութեամբը : Մարդս  
դեռ իւր չ'արած և անելիք գործը ոչնչէ  
յառաջ չը բերէր , այլ իւր անելու կարող  
եղած զօրութենէն , իւր անձէն կը հանէ :  
Աւասիկ ստեղծման մի նախագաղափարը :

Աստուածային արարչագործութիւնն  
եւս այսպէս պէտք է իմանալ : Աստուած՝  
եթէ պատճառ է , կարէ ստեղծել , և եթէ  
բացարձակ պատճառ մի է , չը կարէ չըս-  
տեղծել , և տիեզերքն ստեղծելովք , ոչ թէ  
ոչնչէ կը գոյացնէ զայն , այլ յիւրմէ ,  
պատճառաւորութեան եւ ստեղծագործու-  
թեան այն զօրութենէ , որոյ մեք տկար  
մարդիկս մի մասն միայն ունիմք , և բոլոր  
մեր և Աստուծոյ ստեղծագործութեան մէջ  
եղած տարբերութիւնը , բացարձակ պա-  
ճառի եւ յարաբերական պատճառի մէջ  
եղած տարբերութիւնն է : Ուրեմն ես կ'ըս-  
տեղծեմ , որովհետեւ կը պատճառեմ , բայց  
իմ ստեղծումս , ինչպէս և իմ ստեղծիչ զօ-  
րութիւնս յարաբերական , պատահական ,  
սահմանափակ են : Աստուած կը ստեղծէ  
ուրեմն իւր ստեղծիչ կարողութեան զօրու-



Թեամբը . աշխարհս կը գոյացընէ՝ ո՛չ թէ յոճնչէ , որ չըկայ , այլ յիւրմէ , որ է բացարձակ էութիւնը : Իւր վսեմ բնութիւնը բացարձակ ստեղծիչ զօրութիւն լինելով , որ չէ կարող չը գործել , կը հետեւի որ ստեղծումը հարկաւ որ է , կը հետեւի որ Աստուած անդուլ ստեղծելով , անսպառ է ստեղծումը և կը մնայ հաստատուն :

2. Երկրորդ ապացոյց՝ նիւթոյ շարժումէն առնուած :

Նիւթոյ շարժումը կայ . այս շարժումն կամ անոր էական է , կամ ո՛չ : Պէտք է երկուսին մին ընդունիլ : Արդ , շարժումն անոր էական չէ , վասն զի կարեմք մեր մտօքն ըմբռնել զայն հանդարտութեան մէջ . դարձեալ , ամեն էական շարժում չընդունիր բնաւ փոփոխութիւն ո՛չ ուղղութեան և ոչ արագութեան մէջ . սակայն ամեն օր սորա հակառակը կը տեսնեմք : Ուրիշ կերպով , նիւթն ինքն իրեն շարժում տուած չէ , և ոչ զխպուած է ընդունած է զայն . վասն զի նա չէր կարող ինքն իրեն տալ զայն առանց ստացած լինելու իմացականութիւն և կամք , երկու կարողութիւնք որ ներհակ են նիւթոյն . և ի՛նչ է զխպուածը . մի անիմաստ բառ , որ անաստուածից բերնին մէջ պատճառի մի բացակայութիւնը կը յայտնէ :

Ուրեմն նիւթը առաջին շարժիչ մի ունի ,  
արդ սոյն շարժիչն Աստուած է , ուրեմն  
Աստուած կայ :

3. Երբորդ ասացայ՝ տիեզերքիս մէջ տիրող  
կարգաւորութենէ առնուած :

Տիեզերքիս կարգաւորութիւնը կայ ,  
արդ , որ և է կարգաւորութիւն՝ զինքը յա-  
ռաջ բերող իմացականութիւն մի կը հաս-  
տատէ , այսպէս իմ իմացական հոգի ունե-  
նալս կ'իմաստասիրէք , որովհետեւ իմ խօս-  
քերուս և գործերուս մէջ կարեւորութիւն  
կը նշմարէք : Բայց սոյն կարգաւորութիւնը  
որչափ աւելի առարկայից վերայ տարած ուի ,  
այնչափ աւելի մեծ կը լինի նորա հեղինակին  
իմացականութիւնը , կամ որ նոյն է՝ բանա-  
կանութիւնը : Ուրեմն տիեզերքս կառա-  
վարող իմացականութիւնը գերազանց է ,  
որովհետեւ սոյն սքանչելի կարգաւորու-  
թիւնը բնաւ հարկաւոր չէ , ոչ գիտուածոյ  
արդիւնք և ոչ մի բնական և կոյր հարկաւո-  
րութեան արդիւնք է , ապա թէ ոչ՝ միշտ  
և ամեն ուրեք մի և նոյնն եղած կը լինէր  
եւ յորմէ ոչ մի զանազանութիւն կարող  
կը լինէր յառաջ գալ էակաց մէջ , սա եւս  
կայ որ , աշխարհս կառավարող բնդհանուր  
օրէնքներն անհուն իմացականութեան մի

տեսութիւնները միայն կարեն լինել. արդ  
այն խնայականութիւնն Աստուած է .  
ուրեմն Աստուած կայ (1) :

ՅՕԴՈՒԱԾ Բ .

**ԲԱՐՈՅԱԿԱՆ** ապացոյցները եւս թուով  
երեք են . բնական օրէնքը, մարդոյն անդի-  
մադրելի պէտքը և ժողովրդոց միաձայն հա-  
ւանութիւնը :

1. Առաջին ապացոյց՝ բնական օրէնքն աւանուած :

Բնական օրէնքը կայ : Մարդկային խիղ-  
ճը , ստոյգ է որ ամեն ուրեք բարին չարէն

(1) Օրինակի համար յիշեմք 1885 Մարտի 18ին պատա-  
հած լուսնի փնտ՝ տեսիլը : Որչափ եւս ընտանեցած լինիմք  
այսօր այսպիսի սքանչելի երեւութի զոր նախագուշակած  
կը լինի մարդս , կարելի է չը զարմանալ այն ահագին մար-  
մնոց կարգաւորութեան վերայ , որոց ընթացքը մի բանով  
չը խանգարուիր , և առանց փոքրիկան մի , մանրերկրոց մի  
սխալելու կը հեռուին այն ճանապարհին զոր Աստուած  
գծեց իրենց՝ միջոցին մէջ ձգելով զերկնք : Քիչ զարմանալի  
չէ արգարես մարդկային խելքը , որ գիտցաւ բոլոր այս  
աշխարհաց տարածութիւնքն ՚ի հաշիւ առնուլ , որպէս թէ  
նոցա ստեղծագործութեան առաջակայ եղած լինէր , կամ  
թէ Աստուած արեգեկրիս օրէնքներն նմա յայտնած լինէր :  
Եւ ո՞ւմ պարտաւոր է մարդս այն սքանչելի կարողութիւնն .  
էթէ ոչ՝ գերագոյն կառավարչին : ամեն ինչ ստեղծողին :

կը զանազանէ , մին գործելու եւ միւսէն խոյս տալու պարտաւորութեամբ : Արդ , ամեն օրէնք մի օրէնագիր կ'ենթադրէ , ե այս օրէնագիրն չէ կարելի որ մարդս լինի , ըստ որում բնական օրէնք ասածնիս նորա մէջ կը կայանայ , նորա վերայ եւ առանց նորա կամեցողութեան : Ասիկայ մարդէն գերագոյն կարողութիւն մի կարէ լինել միայն , ե սոյն գերագոյն կարողութիւնն Աստուած կ'անուանեմ ես , ուրեմն Աստուած կայ :

2. Երկրորդ աստուծոց մարդոյն անգիմարելի պէտքէն առնուած :

Անգիմարելի պէտք մի կայ որ կը ստատաւորէ թշուառ մարդը՝ մի գերագոյն էակի դիմելու , ե երջանիկ մարդն՝ անորմէ չնորհակալ լինելու . սոյն գերագոյն էակը մարդկային վերջին վիճակի տէրն՝ Աստուած է , ուրեմն Աստուած կայ :

3. Երրորդ աստուծոց ժողովրդոց միաձայն հաւանութենէ առնուած :

Աստուծոյ գոյութեան վերայ միաձայն հաւանութիւն կայ ժողովրդոց , ե այս հաւանութիւնը միայն Աստուծոյ ե բնական օրինաց վերայ է : Արբայ Լամբնէ գիտողութիւն կ'անէ թէ , մեզ ծանօթ եղած ամենէն

հին սրամուծիւնը սա խօսքերով կը սկսի .  
 « Ի սկզբանէ Աստուած ստեղծեց . այս խօս-  
 քիս մէջ կը տեսնեմք մեք նախ զԱստուած՝  
 ինքնագոյ և անսկիզբն և ասրա միւս էակ-  
 ները , որք իրմէ գոյութիւն կը ստանան  
 ժամանակին հետ : Չըկայ ասկէ աւելի  
 ընդհանուր և հաստատուն աւանդութիւն  
 ըստ վիտյութեան նոյն իսկ անասաւածից .  
 ուրեմն ասկէ աւելի ստոյգ բան չը կայ .  
 Շրջեցէք երկրիս ամեն կողմերը . քաղաքա-  
 կրթեալ աշխարհներէ , իմաստութեամբ  
 փայլող ազգերէ անցիք վայրենի թափա-  
 ռական ազգաց անասուներու խորը . թող  
 չը մնայ և ոչ մի ժողովուրդ , ոչ մի ընտանիք  
 որ ձեր հետազոտութենէն խուսափած լինի .  
 մտէք Արարացւոյն վրանը , Խափշիկին խոր-  
 ճիթը , Քաֆրաստանցւոյն և Կամոյեաին  
 հիւղը , պիտի գտնէք ամեն տեղ մի առա-  
 ջին էակի հաւատքը , հայր ամեն էակաց .  
 ամեն տեղ պիտի լսէք Աստուծոյ անունը .  
 Պէտք է Կիկերոնի հետ լաւ ճանչել ժողո-  
 վրդեան այս միաձայն հաւանութեան մէջ  
 նոյն իսկ բնութեան օրէնքը . Մի բանի մէջ  
 եղած ընդհանուր հաւանութիւնք , համարելի է  
 իբր օրէնք բնական : Վասն զի բնութիւնն  
 և իւր օրէնքներն ուրիշ բանով չեն ճանչ-  
 ցուիր , բայց եթէ իրենց հաստատութեան

և ընդհանրականութեան նշանէն . ուրեմն  
Աստուծոյ գոյութիւնը նոյն իսկ ժողովրդոց  
եւ նոցա ձանաչած օրինաց գոյութենէն  
աւելի անտարակուսելի է :

### ՅՕԴՈՒԱԾ Գ .

**Ք**ՆԱԶԱՆՅԱԿԱՆ ապացոյցները բազմա-  
թիւ են . մէք բաւական պիտի համարինք  
միայն երեք գլխաւորները յառաջ բերել,  
որք են . առաջին էակի մի հարկաւորութիւնը  
կամ բացարձակ պատճառի գաղափարը .  
անհունին ճանօթութիւնը եւ մեր մտածելու  
կարողութիւնը :

1. Առաջին ապացոյց առաջին էակին  
հարկաւորութենէն ածուած :

Երկուսին մին , կամ ամեն էակներ զիւ  
պուածական են և կամ մի հարկաւոր էակ  
կայ , այս երկուսին մին պէտք է ընդունիլ .  
Եթէ ամեն էակներ զիպուածական են ,  
ժամանակ մի եղած է որ նոցա և ոչ մին  
գոյութիւն ունեցած է . արդ ոչինչը չէ կա-  
րող ինչը կամ էակը գոյացընել . այսպէս  
աշխարհիս գոյութիւնը անհնարին կը լինէր  
սոյն ենթադրութեան մէջ . Բայց կը տես-

նեմք որ աշխարհս կայ, զոր ոչ որ կարէ  
 ուրանալ : Ուրեմն հարկաւոր էակ մի է  
 նմա գոյութիւն տուող ու հաստատող .  
 սոյն հարկաւոր էակն Աստուած է . ուրեմն  
 Աստուած կայ :

2. Երկրորդ ազգացոյց անհունին ծանօթութենէ  
 առնուած :

Անհունին ծանօթութիւնը կայ մեր  
 հունաւոր մտաց մէջ : Թէ որ անհունը  
 գոյութիւն չունենար, մեր հունաւոր մտաց  
 ծնունդը կը լինէր այն, որ արդարեւ ան-  
 տեղի է մտածելն իսկ . արդ անհունն Աս-  
 տուած է . ուրեմն Աստուած կայ :

3. Երրորդ ազգացոյց խորհելու կարողութենէ  
 առնուած :

Խորհելու և իմանալու կարողութեամբ  
 օժտուած եմ, և սոյն կարողութիւնը կամ  
 ինձմէ, կամ նիւթէն և կամ յԱստուծոյ  
 ընդունած եմ. արդ, ո՛չ ինձմէ և ոչ նիւ-  
 թէն է, վասն զի այն ժամանակ հարկաւոր  
 կը լինէր որ սոյն կարողութիւնը կամ իմ  
 անձիս և կամ նիւթին մէջ եղած լինէր,  
 ըստ որում չունեցածը տալ կարելի չէ .  
 ուրեմն յԱստուծոյ ընդունած եմք զայն .  
 ուրեմն Աստուած կայ :

Մարդկային սեռի մէջ կանն այնպիսի հրէշներ որ անաստուած կը հոչուին : Սոյն հարցման պատասխանելէ յառաջ ասեմք թէ , ասոնք կը զանազանին իրենց մէջ , կան անաստուածներ գործնական , կան և տեսականներ . սորա եւս կը ստորաբաժանին ժխտականներու եւ դրականներու կամ կարգաւորեալներու : Այս այսպէս ցոյց տալէ յետոյ պատասխանեմք թէ՛ շատ ճշմարիտ է որ կան գործնական անաստուածներ , այսինքն այնպիսի մարդիկ որք իրենց կրից աւելի ազատօրէն անձնատուր լինելու համար ամեն միջոց ՚ի գործ կը գնեն որ համոզեն զիրենք թէ չը կայ Աստուած :

Տեսական ժխտական անաստուածք նորա են , որ մտաց կամ մտադրութեան պակասութենէ շնն ճանչեր Աստուած մի : Սոյն տեսակէ եղողներուն մոլորութիւնը երկար չը պիտի տեւէ չը տեսնելով այն բաղմաթիւ և լուսաւոր ապացոյցները , որ գերագոյն էակին գոյութիւնը կը հաստատեն :

Իսկ դրական կամ կարգաւորեալ անաստուածք նորա են որ իմաստակութիւններէ խաբուելով կ'ուրանան Աստուծոյ գոյութիւնը . անհնար է որ սոցա մէջ ողջամիտ անձ մի գանուի բարեմիտ , թէեւ ունենայ հասարակ զգացումներ : Ոչ , բնաւ ամենե-



ւին մարէ չը ճնիր անաստուածութիւնը ,  
այլ սրտէ : « Ասաց անգգամն իւր սրտին մէջ՝  
Թէ Չը կայ Աստուած (1) » . և կարող եմք  
հաստատել թէ անհաւատութիւնն ընդհան-  
րապէս ոչ թէ գիտութեան յառաջ կուգայ ,  
այլ թերի գիտութեան . Բաղնի ասածին հա-  
մեմատ . Բնութեան վերայ թեթեւակի ճան-  
թութիւն ունենալը , կ'ատէ , Աստուածութեան  
կը հեռացնէ զմեզ . իսկ խորունկ եւ հիմնա-  
կան ուսմունքը կը մտնեցնէ անոր :

Պարզաբանեմք անաստուածութեան և  
անկրօնութեան վնասակար հետեւանքները :

Մէկդի հանէ մի վարձահատոյց և վրէժ-  
խնդիր Աստուծոյ գաղափարը մարդոյս մտաց  
մէջէն , կ'ատէ Վոլդէր , Սիզլա և Մարիոս  
կը լողան այն ժամանակ իրենց քաղաքակցաց  
արեան մէջ մեծագոյն հեշտութեամբ . Աւ-  
գոստոս , Անտոնիոս և Լէպիգոս պիտի գե-  
րազանցեն քան զՍիզլա . Ներսն անխռով  
սրտիւ հրաման կ'անէ որ իւր մայրն սպան-  
նեն : Անաստուածը նենգամիտ , ապե-  
րախտ , զրպարախչ , սրիկայ և արիւնարբու-  
գոյով , ըստ այնմ հետեւապէս կը արամազրէ

(1) Կը կամեի , կ'ատէ Լարրիւյեր տեսնել մի մարդ  
ժուժկայ , հասեալ , ողջմտն , արգարտանք , որ ասելը  
Թէ Չը կայ Աստուած . բայց այսպիսի մարդ ոչ ուրիւր  
կը գտնուի :

և կը գործէ եթէ ասպահով լինի անսպասիժ մնալու մարդոց կողմէ . վասն զի եթէ չըկայ Աստուած , սոյն հրէշ մարդն ինքն իւր անձին Աստուածն է : Կը զոհէ իւր անձին ինչ որ կը ցանկայ և ինչ որ արգելք է իրեն , Խիստ սրտաբուխ աղաչանքներն և իմաստուն խօսքերն եթէ սովատանջ և գիշակեր գայլուն կ'աղղեն , անաստուած մարդոյն սրտին ալ կ'ազգեն :

Հանէ մտքէ Աստուծոյ գաղափարը , կ'ասէ , Յ . Յ . Բուսոյ , և արդար Աստուծոյ մի որ կը պատժէ և կը վարձատրէ , ոչ եւս կը տեսնեմ մարդոց մէջ ուրիշ բան , եթէ ոչ անիրաւութիւն , կեղծաւորութիւն եւ ստուծիւն : Մասնաւոր շահը , որ ամեն բանի կը յաղթէ , մոլութիւնն առաքինութեան քողով ծածկել կ'ուսուցանէ նոցա : Իւրաքանչիւր մարդ սա լեզուն պիտի բաւ նեցրնէ . թող այլ ամեն մարդիկ իրենց վնասով իմ երջանկութիւնս կազմեն . թող ամեն ինչ իմ միայն լինին . թող մարդկային ազգը ջնջուի մեռնի , եթէ հարկ լինի , վշտաց և թշուառութեան մէջ , որպէս զի ես վայրկեան մի ցաւ և անօթութիւն չը կրեմ :

Արօնասէր և աստուածավախ թագաւորն առիւծ մի է որ զինքը գգուող ձեռքին և հանգարտեցրնող ձայնին վնաս չը հասուցաւ

ներ, Կրօնքէ վախցող և զայն ատողը վայրի  
գազանաց կը նմանի, որ անցուղարձողաց  
վերայ յարձակելու համար ղինքն արգելող  
չլթայն կը խածնէ: Նա որ ամենեւին կրօնք  
չունի, մի ահռելի գազան է, որ իւր ազա-  
տութիւնն յայն ժամանակ կը զգայ՝ երբ կը  
գիշատէ և կ'ուտէ . . . :

Այս չարիքները թուած ատեն ուղիղ  
տրամաբանած չեմք լինիր կրօնի դէմ, եթէ  
նորա բարիքները հաշուի չ'առնեմք: Եթէ  
կամենայի քաղաքական օրինաց, միասլե-  
տութեան, հասարակասլետական կառա-  
վարութեան պատճառած բոլոր չարիքները  
պատմել, սոսկալի իրողութիւններ պիտի  
յառաջ բերէի:

(Մտնտէսքիէօ)

Եթէ չէր տեսնուած երբէք, կ'ասէ  
մի մատենագիր, այսչափ ապականութիւն  
հասարակային բարուց մէջ, այսչափ նեն-  
գութիւն ընկերութեանց մէջ, այսչափ  
յանդգնութիւն եւ անուանարկութիւն  
փառասիրական կնճիռներու մէջ, այսչափ  
չռայլութիւն սղճնասիրութեան մէջ, այս-  
չափ անհաւատարմութիւն ամուսնութեանց  
մէջ, այսչափ լրբութիւն և խարդախութիւն  
հեշտախտութեան մէջ, եթէ ուրիշ անգամ  
չըլտուած ոճիրներ հասարակ եղած են մեր

մէջ, եթէ որ չանցնիր կըլսեմք որ տկարա-  
միա եւ խստասիրտ մարդիկ իրենք իրենց  
ձեռք վերջ տուած են իրենց կենաց, ում  
չեն կարողացած համբերել տանիլ իրենց  
մեղիութիւնն եւ անպիտանութիւնը, մի  
տարակուսիք բնաւ, բոլոր այս թշուառու-  
թեանց պատճառը ուրիշ տեղ որոնել հարկ  
չէ, այլ միայն անկրօնութեան մէջ, որ օր  
աւուր յառաջ երթալու վերայ է :

Թօսքերնիս եղբակացընեմք ասելով, թէ  
պարտիմք սոսկալ անաստուածութենէ եւ  
անկրօնութենէ, երկուքն եւս հաւասարա-  
պէս ազէտարեք են անհասանելու և ընկե-  
րութեան, և սրտանց ու հոգւով պարտիմք  
յարիլ Աստուծոյ գոյութեան հաւատոյն,  
որոյ օգուաներն և հարկաւորութիւնը նոյն  
ինքն Վսլտէր կ'ասէ մեզ. Աստուած

« Ի սրբազան կայ սերընդոյ մարգկան :  
Առաջին խորխոս սուրբ արգարութեան ,  
Սանձ անօրինին և յոյս արգարոյն .  
Թէ երկինք կապտեալ յիւր շքեղ կնքոյն ,  
Դազարեք երբեք գալ 'ի տես մարգկան ,  
Թէ չէր իսկ Աստուած : հարկ եր հնարել զոյն :  
Խեղատնոյն հանձար գուշակ է նրձին .  
Թագաւորք անտի ահիւ երկնչին :  
Իշխանք մեծագորք : թէ հարստ'հարեք ,  
Եւ մեծութեամբ ձեր առ ոչ ինչ գրեք  
Զարասար անմեղին զոր դուք տայք հեղուլ .  
Վրէժխնդիր յերկինս կայ , երկերուք անգուլու :

Աստուծոյ գոյութեան դէմ ուղղուած առարկութեանց մեծ մասը, կը դիտէ Մ. Կարոս, բառից զեղծման, սխալ ենթադրութեանց, սկզբանց խնդրոց, հոմանիշներու և ուրիշ խմաստակութեանց վերայ կը լինին, որոց մօլորութիւնն ուշադիր մարդոց աչքէ չը վրիպիր: Սոյն առարկութիւնները մեր տգիտութենէ և մարդկային տկարամտութենէ կը ծագին, որ չէ կարող աստուածային բնութիւնն ըմբռնել: Որպէս թէ՛ իրի մի բնութիւնը հասկանալու և բացատրելու անկարող լինելնիս կը զած ասպացոյցներն եղծանէր, որք նորա գոյութիւնը կը հաստատեն. որպէս թէ իսկաւ բացայայտ գիտութեանց մէջ մարդոյս մտաց անթափանցելի գաղտնիքներ չը սլատահին. վերջապէս՝ որպէս թէ զարմանալ սէտք էր մեզ Աստուծոյ անհուն էութիւնն իմանալ չը կարելնու, մեզ կ'ասեմ, ում բոլոր արարածոց բնութիւնը և մերն իսկ անձանօթ սլեախի մնաց յաւիտեան: Խմացական աշխարհն, առանց անկէ դուրս ձգելու երկրաչափութիւնը, լեցուն է անխմանալի բայց հաւաստի ճշմարտութեամբք, կ'ասէ Բուսոյ, վասն զի միտքը, որ նոցա գոյութիւն ունենալը կ'ապացուցանէ, չէ կարող, այսպէս խօսիմ, շօշափել զանոնք զիրենք արգելող սահմա-

նաց մէջէն , սյլ մի միայն կը նշմարէ զանոնք : Այս է Աստուծոյ գոյութեան վարդապետութիւնը : Գերագոյն էն անմատոյց լուսոյ մէջ կը բնակի . նորա էութիւնն անտես կը մնայ մեր տկար աչաց . բայց որոշակի կը նշմարեմք զայն իբր պատճառ ամեն պատճառաց , աղբիւր ամեն էակաց , իմաստութիւն որ կը բովանդակէ հարկաւորապէս զամեն ինչ որ է :

### ՅՕԴՈՒԱԾ Դ .

Աստուծոյ զիեաւոր յատկութիւնքը :

**Ա**ՍՏՈՒԾՈՅ բոլոր յատկութիւնքը իւր էութենէ կը ծագին . արդ , սոյն էութիւնն է առաջին պատճառ լինելը :

Առաջին պատճառն անհուն է . որովհետեւ եթէ հունաւոր լինէր նա , ուրիշ մի պատճառէ կախում կ'ունենար . ուրեմն ոչ եւս առաջին պատճառ կը լինէր :

Եթէ առաջին պատճառն անհուն է , նոյնպէս են նաև իւր բոլոր յատկութիւնքը . վասն զի չիք ինչ որ կարենայ սահմանաւոր լինել այն բանի մէջ որ չունի բնաւ սահմաններ :

Առաջին պատճառն, իբր պատճառ՝ զօրաւոր է. ուրեմն անհումապէս զօրաւոր է : Բանական է նա, ուրեմն անհումապէս բանական է : Ազատ է նա. ուրեմն անհումապէս ազատ է :

Անհունապէս զօրաւոր եղող պատճառը հարկ է որ յանհումս բարի լինի, և հետեւապէս յանհումս արդար, իմաստուն, սուրբ. չարն ու անիրաւը չեն կարող անհունին հետ միաբանիլ : Անհունապէս բանական եղող պատճառը պէտք է որ գիտութեան մէջ եւս անհուն լինի : Զը սահմանափակի նա միջոցի մէջ, ուրեմն ամբար է նա և ոչ ժամանակի մէջ, ուրեմն յախտենական է նա : Սոյն երկու վերջին յատկութեանց վերայ յաւելցուր նաև անխոխոխութիւնը, պարզութիւնը, միութիւնը, էակութիւնը (*l'aseité ou l'entité*), կը տեսնեմք որ Աստուծոյ բոլոր այս յատկութիւնք և բոլոր այս կատարելութիւնք՝ մի և եթ են : Եթէ զատոնք կը բաղմաստակեմք, մեր մտաց տկարութենէն է : Ստիպուած եմք այլ և այլ դէմքով ներկայացընել մեզ այն միակ էակն իւր գործոց հետ ունեցած յարաբերութեանց համեմատ, ըստ որում չեմք կարող միով տեսութեամբ միայն ըմբռնել անհունապէս կատարեալը :

Ինքնագոյ էակը , կ'ասէ Ֆե՛նեւըն , քան զամեն էս էագոյնն է : ոչինչ չեմք կարող աւելցրնել նմա , ուրեմն գերագոյն կատարելութեան մէջ է , վասն զի էութիւն եւ կատարելութիւն մի և նոյն բան ասել է , և չք կարեն ոչնչի յարմարիլ : Նա որ մի քիչ կատարեալ է , մի քիչ էութիւն ունի , աւելի կատարեալն աւելի ունի , նա որ բնաւ կատարելութիւն չունի , բնաւ էութիւն չունի , ուրեմն ինքնագոյ էութիւնը կատարելութեան գերագոյն աստիճանի մէջ է :

Բայց Աստուած կարէ՞ լինել որ միանգամայն ազատ և անսխալ լինի : Տարակոյս չք կոյ որ Աստուած ներքին գործոց մէջ ազատ չէ . ըստ այսմ՝ չէ կարող , օրինակի համար , կատարելութիւններ ստանալ կամ կորուսանել , և ոչ ինքզինքն ասել : Բայց արտաքին գործոց մէջ այնպէս չէ . օրինակի համար ստեղծագործութիւնը : Այս տեղս արդարեւ չեմք կարող վէճի տակ ձգել ազատութիւնը , բայց եթէ ենթադրելով զԱստուած հարկաւորապէս սահմանուած լինել ստեղծելու կամ իւր բնութեամբը և կամ իւր էութեան որոշ մի սպառճառով : Արդ , անտեղի է ենթադրել զԱստուած իւր բնութեամբն ստեղծելու սահմանուած , ըստ որում ինքնեղ էութիւն գոյով , իւր



բնութեամբն անկախ է այն արարածներէն , որոց կարող է գոյութիւն տալ : Այ գոյն անտեղի է ենթացրել նաեւ թէ՛ Աստուած իւրմէ որոշ մի պատճառով սահմանուած է , ըստ որում ինչ որ կայ ՚ի նմանէ ունի գոյութիւն : Գարձեալ , սոյն պատճառն ինքն իսկ ուրիշ մի պատճառ է պէտք էր սահմանուած լինել , այս ալ երրորդ է մի , և այսպէս յանհունս : Հետեւապէս արարչութիւնն անկարելի կը լինէր , վասն զի անհուն թուով սահմանումներու ենթացրութենէ կախումն պիտի ունենար . ուրեմն Աստուած ազատ է իւր արտաքին գործոց մէջ :

Աստուած նոյնպէս անվուրիւ է , որովհետեւ ամեն փոփոխութիւն արտաքին կամ ներքին մի պատճառէ յառաջ կուգայ . արդ ընդդէմ կը լինէր մտաց պնդել թէ պատահական էակներ կարողութիւն ունենան հարկաւոր Էակին վերայ՝ նորա բնութիւնը փոխելու : Նմանապէս ընդդէմ է մտաց որ գոյանալու հարկաւորութիւնը փոփոխման սկզբունք մի եղած լինի . ուրեմն Աստուած անփոփոխ է :

## ՅՕԴՈՒԱԾ Ե .

Աստուածային Նախախնամութեան և փեղեղբիս  
ծրագրին վերայ :

**Ա**ՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒԻՆ ասել-  
լով կ'իմանամք երբեակ գործողութիւնն  
Աստուծոյ անհուն բարութեան, կարողու-  
թեան և իմաստութեան՝ փեղեղբաց ծրագ-  
րին մէջ : Սոյն ծրագիրն ընդ ազօտ միայն  
կը տեսնեմք . բայց որքան ալ սահմանափակ  
լինի մեր տեսութիւնը, զարմանալի մի կար-  
գաւորութիւն կը տեսնեմք ամեն ուրեք,  
և սոյն կարգաւորութեան մէջ գերազան-  
ցապէս իմացական եղող պատճառն որ զայն  
երկնեց, գերազանցապէս զօրաւոր պատ-  
ճառն որ զայն ստեղծեց, և գերազանցա-  
պէս բարի եղող պատճառն որ զայն կը  
պահպանէ իւր արարածոց երջանկութեան  
համար :

Նախախնամութեան գաղափարը, կ'ասէ  
մի մատենագիր, կը ներկայէ մեզ մի էութե-  
թիւն, որ սոյն ընդարձակ փեղեղբաց մէջ  
կը տնօրինէ, կը կառավարէ, կը կարգադրէ,  
կը կանոնէ ամեն գէպքեր . իւրաքանչիւր  
արարած իւր կարգին կը զետեղէ, իւրա-  
քանչիւրին իւր չափն, իւր աստիճանն,

իւր համեմատութիւնը կուտայ . կ'ուզէ , կը վարէ զամենքն որչափ մեղմ՝ նոյնչափ զօրաւոր գործողութեամբ . կը գործէ ՚ի մարդիկ և մարդիկներով՝ ինչ որ հաճոյ է իրեն , և ինչ եղանակաւ որ կը հաճի . իւր խորհրդոց մէջ կանգ չառնուր սրտերու ընդդիմութեամբ և խստութեամբ . վասն զի իւր ձեռաց մէջ ունի ամենակարող զօրութիւն մի զանոնք միտեցընելու իւր կամեցած կողմը . վերջապէս կ'առաջնորդէ զիւրաքանչիւր արարած մասնաւորապէս և զամենքն ընդհանրապէս իրենց վախճանին , և կը միաւորէ զանոնք բազկացընելու սոյն մեծ ամբողջութիւնն , որոյ սրտակերը կազմեց իւր խորհրդոց խորութեան մէջ :

Տիեզերաց մէջ ամեն ինչ սոյն աստուածային Նախախնամութիւնը կը քարոզեն : Սոյն ամբաւ և սքանչելի մեքենայիս մեծութիւնն ու գեղեցկութիւնը , նորա պէսպիսութիւնը , կարգն ու ներդաշնակութիւնն որ նորա ամեն մասանց մէջ կը փայլին , չեն ներեր որջամիտ մարդոյն որ տարակուսի թէ ընդհանուր Նախախնամութիւն մի չէ որ կը պահէ և կը պահպանէ զսոյն :

Արդարեւ , քանի որ կը տեսնեմք թէ օգերեւոյթներն ատեղերական կարգի մէջ հաստատուն և մի օրինակ են , թէեւ պա-

տահական, յայտնի է որ Աստուած, որ սոյն կարգն ազատ կամքով մի հաստատեց, նոյն պէս կը պահպանէ զայն առանց որ և է հարկէ բռնադատուելու :

Երկնային մարմնոց սարբերական շարժումն կը կատարուի երկու հակառակ զօրութեան ուժով զոր Աստուած տուած է նոցա . մին է կեղրոնախոյս, որ մի մղումէ յառաջ կուգայ . միւսն է կեղրոնամիզ, որ է ծանրութեան կամ ձգողութեան արդիւնք : Սոյն շարժումը կը տեւէ քանի որ այս երկու զօրութիւնք հաւասարակշռութեան մէջ կը մնան . եթէ երկուսին մին տկարանալու լինի, միւսը կը յաղթէ եւ ամբողջ դրութիւնը կը խանգարէ : Այս հաւասարակը ռութիւնը առանց առաջին շարժչին շարունակ գործողութեանը կարող է տեւել : Ծանրութիւնը մարմնոց մէջ աւելի զօրաւոր կը լինի՝ քանի որ կեդրանին կը մօտի : Որովհետեւ երկնային գունտերը թերատմի (ձուածեւ) կը գծեն, իրենց ծանրութիւնը պէտք էր աւելնալ՝ երբ աւելի կը մօտին արեւուն և ընկեցիկ շարժման զօրութեան յաղթել : Այսու ամենայնիւ մօլորակաց և գիսաւոր աստեղաց արեւու շուրջն արած ձուածեւ շարժումը վեց հազար և աւելի տարիներէ ՚ի վեր կը յարատեւէ . ուրեմն

Աստուծոյ հաստատուն կամաց և անդուլ  
գործողութեան մի զօրութեամբն է :

Ինչպէս կարելի է որ մարդ չը ճանչէ  
այս մի և նոյն գործողութիւնը կենդանի  
էակաց կանոնաւոր սերնդեան մէջ, տեսա-  
կաց այլեւայլութեան եւ մշտնջենաւորու-  
թեան մէջ, և մի և նոյն տեսակի անհատից  
միաձեւութեան մէջ : Աոյն յարատեւ ճնրն-  
դաւորութիւնը մի շարունակական սքանչե-  
լիք է . վեց հազար ամաց ՚ի վեր Աստուծոյ  
դրած կարգին բնաւ ընդհատումն պատա-  
հած չէ :

Մարդկային տեսակին մէջ, թէեւ մի  
և նոյն օրինակին վերայ կաղմուած, այսու  
ամենայնիւ զանազան անհատից մէջ բա-  
ւական զգալի տարբերութիւն կը գտնուի  
իրարմէ ճշդիւ որոշելու համար : Ամեն  
դէմք մի և նոյն կաղապարին մէջ թափուած  
են, բայց երկու դիմաց գծագրութիւնը  
կատարելապէս իրարու չեն նմանիր : Այս  
աչքի զարնող զանազանութիւնը մի և նոյն  
միաձեւութեան մէջ ուստի յառաջ կու-  
գայ . . . : Եզրակացընեմք որ բնութեան մէջ  
ամեն բան հրաշից շղթայ մի է, որ խիտ  
համոզիչ կերպով Նախախնամութեան մի  
գոյութիւնը կը յայտնէ, որ արարչութեան  
բոլոր գոյից վերայ կը տարածի :

Արդ, քննութեան առնումք Աստուծոյ գոյութեան և ստորոգելեաց դէմ եղած առարկութիւնքը, սորա հանուած են բնական, թէ բարոյական, և թէ բնազանցական չարիքներէն :

1. Բնական չարիքէ հանուած առարկութիւնք :

Բնական չարիք ասելով կ'իմանաւմք ցաւերը, հիւանդութիւնները, մահը, վնասատու կենդանեաց, թունաւոր բուսոց գոյութիւնը, պէկոծութիւնքը, հրաբուխները, երկրաշարժները և այլն : Ասկէ կը ծագին շատ առարկութիւնք, զորս դիւրին է հերքել :

Ա. Առարկութիւնք : Եթէ Աստուած ամենախարոզ լինէր, բնական չարիքը կը խափանէր. արդ, չը խափանեց. ուրեմն իւր կարողութիւնն անհուն չէ :

Պատասխան : Աստուած բնաւ խափանած չէ բնական չարիքը : — Բայց նախ և յառաջ, ո՞վ այն մասին օրէնք մի դրաւ. յետոյ ո՞վ կը ճանչէ արարչութեան գաղտնիքը. ո՞վ կարող է թափանցել նորա վախճանական սրտածառներուն : Եթէ մարդկային միտքը չէ կարող ըմբռնել արեգերբս նորա ամբողջութեամբն և նպատակաւ, ինչպէս կարող է գիտաբար դատել նորա մասունքը,

նոցա յարաբերութիւնները և նոցա վերջին նպատակը : Մարդոյ տգիտութիւնն պարտի ուրեմն լռեցընել իւր գոռոզ դատողութիւնները , գոռոզութիւնն և իւր տկարութիւնը . պարտի յարգել ամենակարողութեան գաղանխքը :

Անաստուածն աշխարհիս մէջ ուրիշ բան չը տեսներ , կ'ասէ Շաթորբիան , եթէ ոչ անկարգութիւնք , ճախիններ , հրաբուխներ , վնասատու գաղաններ , հրէշներ . և որպէս թէ ցեխին մէջ պահուրտելու աշխատէր . սողուններն և միջատները կը հարցափորձէ , որպէս զի Աստուծոյ դէմ ապացոյցներ դուրս բերէ : Քու երեսիդ տալու համար իւր ձեռքն ունի միշտ բորտութիւնն ու ժանտախտը : Նկատողութեան արժանի է որ սոյն գոյութիւնքը մեզ սուկում կուտան , այսչափ հզօր է մարդոց քով Աստուծոյ բնազգումը . այսչափ կը սարսափին նոքա երբ անմիջապէս չեն նշմարեր գերագոյն իմացականութեան նշանը . . . : Սոյն անկարգութիւններէ կամեցած են նոքա Նախախնամութեան և աստուածային իմաստութեան դէմ առարկութիւններ հանել . մեք ընդհակառակը կը նկատեմք զայն իբր ապացոյց նոյն իսկ Նախախնամութեան և նոյն իսկ իմաստութեան : Մեզ կը թուի

Թէ Աստուած Թոյլատրած է որ այս վնասակար համարուածները լինին ուսուցանելու համար Թէ առանց իրեն՝ ինչ պիտի լինէր արարչութիւնը . ստուերն է որ լոյսը կ'արտափայլէ . զիպուածի օրինաց մինմոյն է , որ ըստ անաստուածից տիեզերքն արտադրած պէտք է լինի :

Բ. Առար. Եթէ Աստուած յանհունս արգար լինէր , չէր Թոյլատրեր որ բնական չարիքն անխտիր կերպով ամեն մարդոց հանդիպեր . արդ , Թոյլատրած է . ուրեմն իւր արդարութիւնը յանհունս չէ :

Պատ. Աստուած Թոյլատրած է որ բնական չարիքն անխտիր ամեն մարդոց հանդիպի : — Բայց նախ և յառաջ , ո՞վ նմա օրէնք մի տուած է , որ այս ինչ մարդոյն կամ այն ինչ մարդոյն խնայէ . յետոյ , ո՞վ կարէ ասել Թէ աստուածային արդարութիւնն սլարտի գործադրիլ մի միայն այս աշխարհիս մէջ . ո՞վ գիտէ զարձեալ Թէ չարիքը բարիք մի չէ այն մարդոց համար զոր կարծեն Թէ բնաւ արժանի չէ նեղութիւն կրելու . Թշուառութեանց մէջ , որ մեղաց հետեւանք է , կ'ասէ մի հեղինակ , ծնունդ կ'առնուն մեծադոյն առաքինութիւնքը . համբերութիւնը տառապանաց եւ ցաւոց մէջ , անյողզողութիւնը փորձութեան մէջ .



ղօրութիւնն ու արիութիւնը հալածանաց  
 և տանջանաց մէջ, գթութիւնը տառապելոց  
 եւ առատարտութիւնը կարօտելոց դէմ :  
 Այս առարիներութիւնը չէին տեղի ունենար  
 մի ուրիշ ծրագրի մէջ՝ եթէ նա դուրս ձգէր  
 բոլոր թշուառութիւնները :

Գ. Առար. Եթէ Աստուած յանձուէն  
 բարի լինէր, կը պահպանէր զմարդ բնական  
 ամեն չարիքներէ . արդ, չէ պահպանած .  
 ուրեմն իւր բարութիւնը յանձուէն չէ :  
 Բայց, եթէ Աստուծոյ բարութիւնը յան-  
 ձուէն չէ, ասել է՝ չը կայ Աստուած, վասն  
 զի չէ կարող կայ լինել առանց անձուէնա-  
 պէս բարի լինելու, ինչպէս և անձուէնապէս  
 արդար եւ անձուէնապէս կարող : Կը տես-  
 նուի որ սոյն երեք առարկութեանց ամեն  
 մին կը հակառակի Էակին գոյութեան,  
 որոյ բուն էութիւնն է յանձուէն լինել :

Պատ. Աստուած չէ բնաւ պահպանած  
 զմարդ բնական չարիքէ : — Նախ և յառաջ,  
 Աստուած չէր կարող իւր խորհրդոց պատ-  
 շած եղած պոյմանը գնել մարդոյն . և նմա  
 անիրաւութիւն վերագրելը՝ չէ՞ որ Աստու-  
 ծոյ դէմ Աստուած կանգնիլ է յանդգնա-  
 բար : Յետոյ, եթէ մարդ ցաւոյ անդգոյ  
 լինէր, չը կարէր իւր պահպանութեան  
 հսկել : Գամք հիւանդութեանց, աստիք,

Թող որ ըստ մեծի մասին մեր չափազան-  
ցութեան հետեւանք են , մարդոյս համար  
առարկնութեանց եւ բարեմասնութեանց  
առիթ մի են , ինչպէս վերն առցաւ ,  
Տառապանքներն զմեզ կրքերէ կ'ազատեն ,  
նոյնպէս և երկրաւոր բաները , եւ մահն  
զմեզ կը տանի դէպ 'ի մեր սկզբնական ծա-  
ղու մը :

2. Բարոյական շարիք հանուած առարկութիւնք :

Բարոյական շարիք ասելով կ'իմանամք  
հոգւոյ անկատարութիւնքը և մեր ազա-  
տութիւնը չարաչար գործածելէ յառաջ  
եկած անկարգութիւնքը : Ասկէ կը ծագին  
այն առարկութիւններն որք բնական շարի-  
քէ ծագածներուն յար և նման են ,

Առարկութիւն . Բարոյական շարիքը կը  
մեղադրէ զԱստուծոյ կարողութիւնը , ար-  
դարութիւնը կամ բարութիւնը :

Պատասխան տալէ յառաջ դիտողութիւն  
անեմք որ , երկու ինչ կարեն անմիաբան  
լինել սահմանաւոր էականց համար , առանց  
հակասական լինելու անհուն մի էակի հա-  
մար : Սակեղծողն է միակ դատաւոր իւր  
յատկութեանց յարաբերութեան զոր ու-  
նի իւր արարածոց հետ :

Պատ . Ա . Աստուած բնաւ արգելք

չրդբաւ բարոյական շարեաց : — Եթէ չրդբաւ արգելք , ոչ թէ անկարողութենէն էր , այլ թէ՛ զմարդն երբ ստեղծեց , ազատ ստեղծեց զայն , և ջնջած կը լինէր նորա ազատութիւնն եթէ շարաշար գործածուելուն առաջքն տռնէր , շարիքը սոյն զեղծմունքէ յառաջ գալուն , ապացոյցն ուրեմն մարդոյն հակառակ կ'ենէն :

Բ . Աստուած թոյլատրած է որ բարոյական շարիք անխտիր ամեն մարդոյ պատահին : — Անտարակուսելի է որ , բարի մարդը շարին նման նեղութիւն կը կրէ , և շատ անգամ իսկ արդար մարդը քան զանիրան տակի թշուառ է ըստ երեւութին , Ի՞նչ բանի ապացոյց է այս , զայս կ'ապացուցանէ թէ՛ Աստուծոյ արդարութիւնն այս երկրիս վերայ չը գործադրիր , ուր տեղ ճանապարհորդ եմք երթալ ուրիշ աշխարհի մէջ աւելի տեւողական վշտեր կամ վարձքեր գտնելու : Ուրեմն Աստուծոյ արդարութիւնը հակառակ և անմիտարան չէ բարոյական շարեաց հետ , այլ միայն անպատիժ թողուելուն :

Գ . Աստուած չը պահպանեց երբևք զմարդն բարոյական շարիքէ : — Նախ չը կարէր պահպանել առանց կապտելու զնա յիւր ազատութենէ , որ քան զամենայն բարիս

Թանկագին է , որ մարդկային գործոց բարոյականութեան և մարդոյն արժանապատուութեան կազմողն է : Յետոյ , հոգւոյ անկատարութիւնքն , ուստի կը ծագին մալորութիւնք , չար միտումներն և վատ գործերն , ինչ կ'ապացուցանեն , եթէ ոչ զայս՝ թէ ամեն արարած հարկաւորապէս հունաւոր լինելով , բացարձակապէս կատարեալ լինել չէ կարող : Բացարձակ կատարելութիւնն՝ միայն Աստուած կը բնակէ , միակ յարաբերական կատարելութիւնն՝ ում մարդս կարենայ ընդունակ լինել , այն վախճանին յարաբերութիւնն է , որում պիտի հասնի իրեն օժտեալ միջոցներով : Արդ , սոյն միջոցաց լաւ գործածումն իւր վախճանը կատարելու կ'առաջնորդէ միշտ զինքը : Մարդս ծնած է բարւոյ համար , կարող է կատարել զայն (աստուածային օգնութեամբ) , և եթէ իւր կարողութիւնքը լաւք գործածելով՝ թերի գանուի , թող զիւր անձը միայն ամբաստանէ : ( Լք Ֆրանգ ) :

Բայց կ'ասեն թէ՝ Աստուած նախատեսեց զանոնք որ իւր շնորհած ազատութիւնը չարաչար պիտի գործածեն , ուրեմն սոքա թշուառ են միւս աշխարհի մէջ , և յանցանքն Աստուծոյ է :

Ար պատասխանեմ թէ՝ Աստուծոյ նա-

խառն սութիւնը կը նմանի մի հայելու , որ հաւատարմաբար կը ներկայացընէ մարդկային անցեալ , ներկայ և ապագայ գործերն առանց սոյն նախատեսութեամբ մարդկային կամքը երբէք բռնաբարուելու այս կամ այն բանը կատարելու : Ըստ այսմ Աստուած նախատեսած էր որ Ազամ կամաց ազատութեան մի գործով պիտի մեղանչէր , միթէ սոյն նախատեսութիւնն է որ մղեց զինքը մեզք գործելու : Միթէ չէր կարող Ազամ ուրիշ կերպ կամենալ : Գիցուք թէ , հասարակաց մի կին ծանր հիւանդութենէ մի ազատուելով , իւր գիմաց նիհարութիւնը հայելու մէջ ստեղծամբ նկատելով , բարկութենէն հայելին խորտակէ , միթէ հայելույն վերագրելու է իւր կերպարանաց փոփոխութիւնը : Այսպէս է նաեւ մարդոց ամեն գործերն , թէ՛ բարի և թէ՛ չար , Աստուծոյ նախատեսութեան մէջ պատկերացած կան : Այս իրողութիւնը միթէ իրաւունք կուտայ չարին սոյն նախատեսութեան դէմ բարկանալու , զոր և ոչ կինն ունեցաւ իւր հայելուոյն դէմ բարկանալու :

Յ. Բնագանցական շարիքէ հանուած առարկութիւնք :

Բնագանցական կամ հողեբանական շարիք առկալ կ'իմանամք թէ Աստուած ան-

հաւասար չափով բաշխեց հոգւոյն կարողութիւնքն՝ ինչպէս և մարմնոյն :

Առար . Բնազանցական չարիքն անբացատրելի է , երբ կը ստորոգեմք ՂԱստուած՝ կարող , արդար և բարի :

Պատ . Աստուած , որ առ հրեշտակս խիստ առատասիրտ գտնուեցաւ , առ մարդն նուազ եղաւ , աւելի նուազ առ անբան կենդանին , աւելի եւս նուազ առ բուսականս և աւելի նուազագոյն եւս առ անգործարանաւոր գոյութիւնս : Ուրեմն ինչն համար , նախ և յառաջ , իւր շնորհած սարգեւներուն գերագոյն տէրը չը կարողացաւ աւելի կամ նուազ շնորհել այս մարդոյն քան այն մարդոյ : Յետոյ , այն մարդը , ում Աստուած նուազ տաղանդ շնորհեց , այնու իսկ աւելի մեծ ապահովութիւն գտած կը լինի : Եթէ խեղացի է , վտանգի չը հանդիպիր , որում ենթակայ է առ երեւոյթս խիստ երջանիկ եղող ուրիշ մի մարդ , աւելի ճոխագոյն առաքինութիւնք և արժանիք կը ստանայ եւ գերագոյն Տիրոջմէ աւելի նպաստաւոր վճիռ կ'ընդունի : Ասկէ աւելին եւս կայ , որ Նախախնամութեան այն իմաստուն տնօրէնութեամբ , որ այսչափ անհաւասար եղանակաւ կը բաշխէ թէ հոգւոյ և թէ մարմնոյ որպիսութիւնքը ,

Հարստութիւնը , երկրի բարիքն և բնութեան միւս պարգեւներն , ընկերութեան անդամները մէջերնին կատուած կը մնան զօրաւոր և անքակտելի մի շղթայով , և աւելի արիարար կ'ոգեւորին ընկերային կենաց պարտքերը կատարելու : Եւ արդարեւ , եթէ կատարեալ հաւասարութիւն օրէր մարդոց մէջ , ո՛ւր կը մնայր ընկերութեան կարգն ու կանոնը : Ո՞վ պիտի փափայէր կարգ մի մեքենական արհեստներն 'ի դործ դնել , և կատարել այնպիսի պաշտօններ որք բնութեան սուղի կը նստին : Վերջացընեմք խօսքերնիս սա ընդհանուր գիտողութեամբ , զոր նոյն ինքն Պէյլ (¹) մեզ կը թելադրէ .

« Մեր բնական դաղափարները չեն կարեր բնաւ հասարակ չափ լինել աստուածային բարութեան և սրբութեան և մարդկային բարութեան և սրբութեան . հունաւորին և անհունին մէջ բնաւ համեմատութիւն չը լինելով , պէտք չէ ներելի լինել մի և նոյն կանգնով չափել Աստուծոյ վարմունքն և մարդոց վարմունքը :

Նախախնամութեան թշնամիք տակաւին ուրիշ շատ դժուարութիւններ կ'առարկեն :

(¹) Bayle.

Ա. Առար. Չը հասկացուիր, կ'ասեն, Աստուած ի՞նչպէս մեր խորհուրդները կը ձանձախէ:

Պատ. Մեր զգացմունքը մի բնական լեզու է, որով Աստուած շարունակաբար կը խօսի մեր հոգւոյն հետ. ի՞նչ փոյթ է որ հասկանամք զայն կամ ոչ: Գործոյ մի անիւ մանալիութիւնը գործոյն իրականութիւնը չը քննէր: Աստուած այլ աւելին արաւ. կարողութիւն տուաւ քեզ քո զգացմունքդ և քո խորհուրդներդ քեզ նման մտքերու ծանօթացրնելու: Մասց յարարելութիւնը, թէ՛ մարդոց իրարու մէջ լինի և թէ Աստուծոյ և մեր մէջ, գաղտնիք մի է, որ կ'ընդունիս, բայց փորձով հաստատեալ գաղտնիք մի: Մեր որչափ ալ նուազ մեր ներօրդին ամփոփուելու լինիմք, կը գգամք որ Աստուած մեր հոգւոյ հետ կը խօսի, մեզ գաղափարներ և կամեցողութիւններ կուտայ, զոր առանց նորա չէինք ունենար: Խղճին տաղտուկ տուող ձայնը շարագործը տակն ու վերայ կ'անէ. ահամայ կը զգայ նա վկայ մի և աներեւոյթ գատաւոր մի, որոյ աչաց տեսութիւնը չէ կարող խարել:

Աստուծոյ կատարելութիւնը, կ'ասէ Ֆենելոն, այն վիճակի մէջ կը գնէ զինքը, որ ամեն ինչ կը ներգործէ մեր վերայ եւ



մեզնէ աւելի մօտ կը լինի մեզ : Նա որ մեր  
աչաց տեսնել կուտայ , մեր ականջաց լսել ,  
մեր մտայ իմանալ եւ մեր կամաց սիրել ,  
կարելի է որ նա ուշադիր չը լինի ինչ որ կը  
գործուի մեր ներսիդին : Այն ուշադրու-  
թիւնը դժուարութիւն չը տար մի անհուն  
խնայականութեան և բարութեան . նորա  
մէջ ամեն ինչ գործողութիւն և ամեն ինչ  
անգործութիւն է :

Բ . Առար . Եթէ աստուած այլն նախախ-  
նամութիւնը բանի աեղ դնէր մեր ազա-  
չանքն և աղօթքը , կը սպարտաւորէր իրաց  
բնական բնթացքը փոխել 'ի շնորհս մեր ,  
և յետս կոչել այն վճիռները զորս տուած  
է յաւիտենից յաւիտեանս :

Կը սպատասխանեմ , որ կամքը , զոր Աս-  
տուած ունեցաւ յաւիտեանս յաւիտենից ,  
իւր նախախնամութեան կարգին մէջ կը  
մտնէ : Իւր վճիռներն անելուն , մեր ազա-  
չանքները կը նախատեսէր , եւ կամեցաւ  
բնութեան կարգն այնպէս իմն յարդարել ,  
որ աղգու լինին այս կամ այն ազաչանքները  
զորս կը կամենար կատարել :

Գ . Առար . Անտեղի է խնդրել յԱս-  
տուծոյ լաւ եղանակ կամ անձրեւ , ալէկու  
ծութեան մէջ հանդարտութիւն , տարախո-  
խիկ հիւանդութեան փարատումն . զասոնք

խնդրելն ասել է որ Աստուած հրաշքով մի  
փոխէ բնական պատճառաց գործը :

Պատ . Չեմք գիտեր թէ Աստուծոյ ան-  
միջական գործողութիւնը մինչեւ որ կէտ  
կ'ազդէ բնական երեւոյթներու վերայ , և  
բնաւ ամենեւին փիլիսոփայք չը պիտի կա-  
րողանան գիտնալ զայս . ուրեմն Աստուած  
կարող է առանց մեր գիտելոյն՝ այս ինչ  
գործն ըստ իւր հաճոյից չափաւորել ու  
բարեփոխել : Արբ որ և իցէ մի պատուհաս  
դադարելու լինի , չեմք գիտեր թէ այս դէպ-  
քիս մէջ գերբնական մի բան կայ՝ թէ ոչ :

Հասարակաց կամ մասնաւոր վշտակրու-  
թեան մի մէջ ոչ թէ միայն մեր ժամանա-  
կաւոր ազատութեան համար կ'ազօթեմք ,  
այլ և համբերութիւն , արիութիւն և շնորհք  
ստանալու համար , որ օգուտ քաղեմք մեր  
վիշտերէն . սոյն շնորհքը՝ թէեւ գերբնա-  
կան , բայց չէ մի հրաշք , այլ Նախախնա-  
մութեան հասարակ գործոյն մէջ կը պա-  
րունակի : Աստուած շատ անգամ հրաշքներ  
գործած է իւր ծառայից հաւատքը վար-  
ձատրելու համար , և երբ կամենայ՝ կարող  
է հրաշքներ գործել :

Անհաւատից մոլորութիւնն է մտածել  
թէ Աստուած զաշխարհս ստեղծելէն յե-  
տոյ , թողուց որ ինքն իրեն քալէ երթայ ,

ինչպէս մի ժամագործ կը թողու ժամացոյցը դառնալ իւր մեքենական շարժումով, Քայց մտաւոր աշխարհը, բարոյական աշխարհը մարմնոց աշխարհին նման չը կառավարիր, բանական և ազատ էակները աստուածային օգնութեան շարունակ կարօտ են, այս եւս հետեւեալութիւն մի է իրենց բնական անկախութեան և մեղօք ստացուած տկարութեան:

Գ. Առար. Ուրեմն Աստուծոյ մի միայն զբաղմունքը մահկանացուաց կոյր և անձնօգուտ ուխտերն և շատ անգամ իրարու հակասական եզրղ աղօթքները մտիկ անելն է:

Ար սպաստախանեմ թէ՛ Աստուծոյ կամաց առջեւ դրուած աղօթքներն ամենեւին հակասական չեն, նա կը սրահանջէ զաստիք իրր նշան մեր հպատակութեան եւ մեր անձնատուութեան, նա մեզնէ աւելի բուզիտէ մեր օգուտը:

Ե. Առար. Աշխարհս կամ այն է որ իւր յատուկ բնութեամբն, իւր բնական օրէնքներով կայ ու կը կենայ. կամ մի գերազայն էակ կազմաւորած է զայն իւր գերազայն օրինաց համեմատ: Թէ՛ մի եւ թէ՛ միւս սպարազայի մէջ ամեն ինչ հարկաւոր է:

Պատ. Աշխարհս ոչ բնաւ իւր յատուկ բնութեամբ կայ ու կը կենայ, որովհետեւ

պատահական է այն . ուրեմն իւր բնական օրէնքներն Արարչին ազատ կամաց գործն է : Ա՛ր գերազայն օրինաց կարողացաւ նա ենթարկիլ տիեզերքս ստեղծելու ժամանակ : Բնական օրէնքներն անփոփոխ են արարածոց կողմանէ , որք չունին այն կարողութիւնը զանոնք փոխելու . բայց չեն այնպէս նկատմամբ Աստուծոյ , որ ազատասպէս հաստատեց զանոնք . ուրեմն կարող է զանոնք փոխել կամ անոնց ընթացքը ընդհատել երբոր հաճի , կամ , ուրիշ կերպ խօսելով՝ հրաշքներ գործել :

Ար միարանխմբ ասել թէ՛ Տիեզերքիս մէջ ամեն ինչ կարգաւարեալ է . և այն կարգաւորութիւնն այս բանին մէջ կը կայանայ , որ Աստուած զամեն գոյացութիւն իրենց բնութեան համեմատ կը վարէ . անկենդան գոյացութիւնքը բնական օրէնքով , ազատ գործողները բարոյական օրէնքով և պատճառներով : Երբ ազատ գործողներն իրենց ազատութեան զօրութեամբը բարոյական օրէնքը կը դրժեն , այս բանս բնաւ Նախախնամութեան խորհուրդները չը խանդարեր . Աստուած զամեն ինչ նախատեսած է , եւ կարող է դարման տանիլ ամենուն . նա կը կամի որ կարգը վերահաստատուի յանցաւորաց թէ՛ զղջմամբն և թէ՛ պատժուելովը :

Զ. Առար. Բայց ի՞նչպէս համաձայնել  
պէտք է աստուածային Նախախնամութիւնն  
արդարոյն թշուառութեան և շարագործաց  
յաջողութեան հետ :

Պատ. Ամենեւին չեմ հասկացած, կ'ա-  
սէ կոմս Դը-Մէստրը, անդգամաց Նախախ-  
նամութեան դէմ արած սա յաւիտենական  
ձեռնարկութիւնը : Եթէ բարի մարդը՝  
բարի լինելոյն համար տառապէր, և չարը՝  
չար լինելոյն համար յաջողութեան մէջ լի-  
նէր, ձեռնարկութիւնն անլոյծ կը մնար .  
իսկ ՚ի դուր կը լինի երբ կենթադրեմք թէ  
բարին և չարն անխափր ամեն մարդոց մաս-  
նաւորուած են : Բարի մարդը սրտերազմի  
մէջ կը սպաննուի, անիրաւութիւն է այս .  
ոչ, թշուառութիւն է : Եթէ յօդացաւ  
եղած է, կամ աւազ ունի երիկամանցը մէջ,  
եթէ իւր բարեկամը զինքը կը մատնէ, եթէ  
բարձր տեղէ ընկնելով կը մնասուի, սորա  
եւս թշուառութիւններ են. վերջապէս ա-  
մեն մարդիկ առանց խտրութեան, այս կերպ  
դժբաղդութեանց կենթակայ են : Աչքէ մի  
կորուսանէք բնաւ սա մեծ ճշմարտութիւնը,  
թէ ընդհանուր մի օրէնք, եթէ ամենուն  
համար անիրաւ չէ, չը կարէ անիրաւ լինել  
անհատի համար : Նա որ սրտերազմի մէջ  
ընկաւ, կարէր խոյս տալ, նա որ անկէ ողջ

եա կը գառնայ, կարէր այն տեղ մնալ : Ամենքը չը մեռան, բայց ամենքն ալ մեռնելու գնացին : Արդ, քանի որ այնպէս է, ոչ եւս է անիրաւութիւն, արդար օրէնքն ոչ թէ ամենուն վերայ ազդեցութիւն ունեցողն է, այլ այն որ ամենուն համար եղած է. ուրեմն այս կամ այն անհատին վերայ եղած գործը պատահմունք մի է :

Աստուած հեղինակ է չարեաց զոր կը սլաոժէ, կամ բնական չարեաց, ինչպէս վեհապետ մի հեղինակ է տանջանաց, որ իւր օրինաց համեմատ կը տրուին : Անուղղակի մտօք առնելով՝ ճիշտ վեհապետն է կախողը, որովհետեւ ամեն իշխանութիւն, ամեն օրինական գործադրութիւն անկէ կ'առնու ծագումը. բայց ուղղակի և անմիջական մտօք, գողն է, դրամանենդն է, աւազակն է զիրենք սլաոժող չարեաց ճշմարիտ հեղինակները. նոքա են բանտեր հաստատողք, նոքա են գլխատարեմեր կանգնողք . . . : Ար կամենայիք որ կարկըտած ժամանակ արդարոյն արտին խնայէր : Աւասիկ ուրեմն մի հրաշք : Բայց եթէ գէտքը բերէր որ այն արդարը հունձքը քաղելէն յետոյ մեղաց մէջ ընկնէր, հարկ էր որ հունձքը համբարանոցին մէջ փառէր. աւասիկ մի ուրիշ հրաշք : Այս կերպով

ամեն մի պահու հրաշք մի պէտք լինելուն ,  
աշխարհիս հասարակ վիճակը հրաշքը պի-  
տի լինէր :

Է. Առար . Բայց , կ'ասեն դարձեալ ,  
ի՛նչպէս թոյլ կը տայ Աստուած որ մեզք  
գործուի :

Ար պատասխանեմ , որ մեզայ թոյլատ-  
րութիւնը Աստուծոյ սչ արդարութեան կը  
դպչի , որովհետեւ արդարութեան առար-  
կան է բարին վարձատրել և չարը պատժել  
որ ազատօրէն կը գործուին . ոչ նորա իմաս-  
տութեան կը դպչի , որովհետեւ բարոյական  
աշխարհիս ճշմարիտ գեղեցկութիւնը մար-  
դոյս առարկնութիւնն ընտրանօք և նախա-  
պատուութեամբ գործելուն մէջ կը կայա-  
նայ . սչ նորա բարութեան կը փնտսէ ,  
որովհետեւ սոյն բարութիւնը բարին կամե-  
նալու և զայն գործելու մէջ կը կայանայ .  
ոչ նորա սրբութեան , որովհետեւ նմա փնաս-  
տալու ուրիշ ոչինչ կայ , բայց միայն մեզքը  
կամենալէն եւ գործելէն , որ այս երկու  
իրողութիւնքը չեն կարող գանուիլ Աս-  
տուծոյ մօտ . և ամենէն գեղեցիկ յարգն  
ու մեծարանքը զոր մարդ կարող է մատու-  
ցանել Աստուծոյ սրբութեան , մեզանչելու  
կարողութեան դիմագրելն է :

Դարձեալ , Աստուծոյ յատկութեանց

մեծութիւնը դատելու ուրիշ լուսազոյն կերպ չը կայ՝ բաց ՚ի մեզաց թոյլատրութենէ : Արդարեւ, ի՞նչ քան կայ որ նորա անհուն սրբութիւնը մեզ լուսազոյն կերպիւ ծանօթացրնէ քան զայն որով կը կամենայ որ մեզքք քաւուի, ի՞նչ քան կայ նորա արդարութիւնը ծանօթացրնելու քան զայն սաստիկութիւնքը՝ որով դործուած մեզքք կը պատժէ : նորա վեհանձնութիւնն և անասածեանութիւնը քան զայն վարձարութիւնքը՝ որով զանանք կը պսակէ, որք մեզք դործելու համար ունեցած միամանց կը յաղթեն :

Վերջացրեմք Աստուծոյ Մեծարի սա դիտողութեամբ :

«Յանդուգն հարցումներ ասկէ կը սկսին . Ուրեմն ինչո՞ւ համար այսքան տառապանք կը կրեմք արդարասէր տիրոջ մի ձեռաց ասկէ : Քրիստոսնեական վարդապետութիւնն և հասարակաց կործիքը միարան կը պատասխանեն . Վասն զի արժանի եմք այնմ : Աւասիկ աղէտայի հանդուցին խնայողութեամբ եղած լուծումը, և ամենեւին այն լուծումներէ չէ կարելի հեռանալ առանց թիւր տրամարանելու » :





## ԳԼՈՒԽ Բ .

Մարդոց վախճանական նորատակը :



ՄԱՐԴՈՅ վախճանական նորատակը աւել-  
զախառ վարդապետութեան սա բառերու  
մէջ կը բովանդակի . նամաչել , սիրել եւ  
ճառայել Աստուծոյ այս աշխարհիս մէջ եւ  
վայելել զինքը հանդերձելոյն մէջ : Մարդս  
կը ճանչէ զԱստուած իմացականութեամբ ,  
պարտի սիրել զնա զգացողութեամբ եւ  
ճառայել նմա ազատութեամբ , շանաչել ,  
սիրել եւ ճառայել Աստուծոյ , կը նշանակէ  
իւր կարողութիւնքը լաւ գործածել . կը  
նշանակէ բարին ճանչել , սիրել եւ գործել .  
եւ առաքինութեամբ երջանկութեան հաս-  
նել . այս է մարդոց ծայրագոյն նորատակը :

Արդ , մի կողմէ կը տեսնեմք , որ այս  
աշխարհիս մէջ երջանկութիւնը միշտ չըն-  
կերանար առաքինութեան հետ , այս ան-  
հակառակելի է . միւս կողմէ կը տեսնեմք ,  
որ չէր կարէր միշտ ընկերանալ նմա ,  
առանց նորա արժանապատուութիւնը վը-  
տանդելու . վասն զի այն ժամանակ մի հաշիւ

եղած կը լինէր, կամ այսպէս ասե՛նք. եթէ ամեն մի առարինական գործ ժամանակաւ որ մի շահով, փոխարինելու լինէր, ոչ եւս գործը գերբնականութիւն ունենալով, չըսկափ կրնար այլ եւս այս տեսակ մի վարձու արժանի լինել: Ուրեմն ուրիշ մի այլ կեանք պէտք է որ բարոյական օրէնքն հաստատելու ծառայէ<sup>(1)</sup>. բայց այս բանիս համար պէտք է որ հոգին անմահ լինի:

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ապացոյց հոգւոյն անմահութեան:

**Ա.** ՅՅ ապացոյցներու մէջ ոմանք ցոյց կուտան հոգւոյ կարելիութիւնն, այլք նորա հարկաւորութիւնն և անմահութիւնը. վարդապետութիւն մի որ Աստուծոյ գոյութեան վարդապետութեան ամենէ աւելի կարեւորն է ողջամիտ փիլիսոփայութեան մէջ:

Ա. Ասլացոյց. Հոգին է աննիւթ (ապացուցուած ճշմարտութիւն է այս). արդ, պարզ եւ հոգեկան մի գոյացութիւն որ

(1) Այլակեր ըստ զգաց սոյն ճշմարտութիւնն երբ ասաց. Մի փեթինգիր եւ փորձարիշ Աստուած չը ճանչիլը. ճշմարտապէս անաստուած լինել է:

բոլորովին զուրկ լինի մասերէ, ՚ի բնէ անեղծ  
 և անմահ է . որովհետեւ մահն ոչ այլ ինչ է,  
 եթէ ոչ քակուումն մասանց : Աւրեմն հոգին  
 չէ կարող մեռնիլ : Բայց ըստ որում մեր  
 հոգին հարկաւորապէս պատահական լինե-  
 լով, չը կարէ անմահութիւն վայելել, եթէ  
 չը հաճի ամենակարող Ասեղծողն երկարա-  
 ձգել միշտ նորա գոյութիւնը զոր անորմէ  
 ընդունած է, կ'իմացուի հարկաւ որ այս  
 փաստերս մի միայն կարելիութիւնս կը հաս-  
 տատեն :

Բ. Ասլացոյց . Սոյն իսկ ամբարիշտք կը  
 խոստովանին՝ որ սոյն վարդապետութեան  
 հաւատն ընդհանուր է : « Անհնար է, կ'ա-  
 սեն, գտնել ժողովուրդներ որոց մէջ հա-  
 սարակաց կարծիքը մի տեսակ անմահու-  
 թիւն չը տայ մեր հոգիներու . . . : Չը կայ  
 աւելի հասարակ եղած մի բան քան զհոգ-  
 ւոյ անմահութեան վարդապետութիւնն,  
 աւելի տարածուած բան՝ քան մի ուրիշ  
 կենաց ակնկալութիւնը . սոյն նախապաշար-  
 ման վերայ հիմնուած են ամեն կրօնական  
 և քաղաքական դրութիւնները . . . : Բա-  
 լինգրոք, թէեւ սոյն վարդապետութեան  
 թշնամի, կը խոստովանի թէ՛ մեր ունեցած  
 պատմական ծանօթութիւններէ աւելի հին  
 է այն . . . : Այրենեաց մօտ դաւանական

Նշանակներ և ապացոյցներ դանուած են , որք թէ եւ հասարակային նուիրական սաշտամանն ոչ մի նշան ունեցած են ։ Արդ , մի ուրիշ կենաց վերաց եղած սոյն ընդհա նուր հաւատքը , նոյն իսկ անհաւատներէ վկայուած է , ոչ նախապաշարմանց արդիւնք է եղած և ոչ կրից , զոր այնքան զսպելու կը ծառայէ այն , ուրեմն ճշմարտութեան վերաց հիմնուած է ։

Գ . Ապացոյց . Աշխարհ բոլոր կը ճանչէ որ հոգին բնականապէս մի երջանկութեան կը ցանկայ , որ անոյր քան զմահ կ'երկարաւ ձգի , մի անսահման երանութեան ։ Արդ , սոյն բնածին ցանկութիւնը յԱստուծոյ կու գայ 'ի մեզ , որ չը կարէ զմեզ խաբամ լինել ։ Ուրեմն հոգին է անմահ ։ Մտիկ անեմք Ռասինի որդւոյն ։

Բարեացս համայն կորստական չե գոհ հոգիս .  
 Քեզ մնաց . Տեր իմ , այդ լընուլ զակնկալիս ։  
 Թէ 'ի համայն բոցեական 'ի շարու կամ ։  
 Զինչ հարկ կոչել զիս յոչեից զիս բախտաւ ։  
 Թէ մայրապար մնամ սպասեալ փառաց անմահ ,  
 Հարկ ինձ շնորհել սիրտ 'ի սիրել արցն և եթ . սն ,  
 Ոհ , զինչ ասեմ . ազատ համակ 'ի գործս քաջիկ ,  
 Այլ յիմ կամոց կոխի լինել ինձ երջանիկ ,  
 Աս 'ի կամել զնայն , զգամ զի շեմ ազատ .  
 Արդ չեք կրչիս շարի հաւատար 'ի սիրան իմ վատ .  
 Եւ զի յաւետ միշտ ցանկաբալ երջանկութեան ,  
 Հարկեալ մընամ 'ի սեր պատուոյն իմ ընդունայն ։

ԶԻՆԷ. ո՛չ արդեօք իցին մարդիկ գործ մեռակերտ  
 Տեառն բարոյ .  
 Արդ զի կամին գող երջանիկ . ապա փանն այն  
 աճան ՚ի գոյ .

Քայց եթէ հոգին անմահ է , կ'ատէ  
 Վոլտէր , անոր համար որ անմահութեան  
 կը ցանկաց , նոյնպէս մարդ պէտք է հա-  
 բուստ լինի , որովհետեւ կը ցանկաց լինել .  
 արդ այն երկրորդ փաստը սուտ է , սուտ  
 է ուրեմն առաջինն ալ :

Պատ . Չեանարկութեան այն եզանակը  
 խարէական է . այսպէս են նոյն հեղինակին  
 բոլոր փաստերն , և չէ ուղիղ . Աթէ հա-  
 բուստ լինելու ցանկութեամբ պիտի իմա-  
 նամք դրամական մեծ գումարներ ունենալ ,  
 այդ ամենեւին անյաղթելի և ամենուն հար-  
 կաւոր ցանկութիւն մի չէ , ինչպէս որ է  
 միշտ ապրելու եւ միշտ երջանիկ լինելու  
 մեր փափաքը . և խիստ շատ մարդիկ կան  
 բաւական խելաց տէր , որք գոհ են իրենց  
 համեատ ապրուստով , երջանիկ և պարզա-  
 կեաց միջակ աստիճանով , Քայց եթէ հա-  
 բուստ ասելով կ'իմանամք ըստ ներքին մտաց  
 իւր հանդիսան վայելելու փափաքը , այն  
 ժամանակ երջանկութեան անյաղթելի ցան-  
 կութեան կարգին մէջ կը մտնէ , ցանկու-  
 թիւն մի որ պէտք է լեցուի կամ ներկայիս  
 և կամ ուրիշ աւելի երջանիկ կենաց մէջ ,

Գ. Ապացոյց . Բայց եթէ Աստուած գերազանցապէս արդար է , գերազանցապէս արդար եղող մի էակ պարտաւոր է զիւրաքանչիւր որ իւր գործոց համեմատ վարձատրել . արդ , սոյն վարձատրութիւնն արդարութեամբ 'ի գործ չը դրուիր այս աշխարհիս մէջ , որովհետեւ շատ անգամ ամբարիշտը մինչեւ ցմահ յաջողութեան մէջ է , երբ արդարը թշուառութեան և շղթայից մէջ կը տառապի . Աստուած ոչ մին կը պատժէ և ոչ միւսը կը վարձատրէ երկրիս վերայ . ուրեմն յետ ժամանակաց պիտի անէ . ուրեմն կայ ուրիշ մի կեանք որ ներկայիս մէջ գործուած անկարգութեանց դարմանը պիտի տանի : Բայց այս կեանքը չէ կարելի լինել՝ եթէ ոչ մարդկային անձին անդր քան զգերեզման շարունակելովը . Ուրեմն հոգին է անմահ :

Սոց է , զի յազետս տեսնեմ աշխարհի  
 Զայր բարի յողբ 'ի սուգ , և զչարն 'ի պատուի .  
 Այլ 'ի վեր բարձեալ զայս առ Տէրն գերազանց ,  
 Նոյն յանկարգ վիճակիս ճանաչեմ ես բղնա ,  
 Թէ ներէ , այլ ապա հատուցե՞ զարժանին ,  
 Երջանիկ եւս վայրի կամի զի յուսացին :  
 Ար ինքն անաշտա և արգար՝ առ յապացոյ  
 Պահէ զիւր բարութիւն , նոյն և զիւր պատուհաս :

Ե. Ապացոյց . Աստուծոյ բարութիւնը հոգւոյն անմահութիւն տալով խնամօք

վարուած է . վասն զի սոյն անհուն բարութիւնը չէ կարացած իրաց այնպիսի մի կարգ հաստատել , որ աւելի արժէք ունենար առաքինի անձանց համար բնաւ գոյութիւն չունենալը քան թէ ունենալը . արդ եթէ չը լինէր մի ուրիշ կեանք , յորում Աստուած զառաքինութիւնը վարձաարէր և զմոլութիւնը պատժէր , աւելի լաւ արժէք ունեցած կը լինէր առաքինի մարդոց համար բնաւ ամենեւին գոյութիւն չունենալը՝ քան թէ ունենալը , որովհետեւ այս աշխարհիս մէջ միայն միշտ և թշուառութիւն եղաւ կրածնին . ուրեմն Աստուծոյ բարութիւնը խնամք մի եղաւ հոգւոյ անմահութեան համար : Ուրեմն գոչեմք մեք եւս Գաղղիացի բանաստեղծին հետ :

Մինչ տեսից ես 'ի դաշտս երկնային կապուտակ  
 Զաստեղս մղորեալ 'ի շաւղաց լուսափակ ,  
 Յաստարեղս Նթերի ընդհարեալ 'ի միմեանց  
 Վայրապար սլացեալ 'ի յերկինս սարսափած :  
 Մինչ լուաց զկոծել և զաւեր աշխարհին ,  
 Մինչ տեսից զերկրագուննս թափառել յառանձին  
 Հեռածուփ յաստեղաց , լալ զմարդին կործան  
 Եւ 'ի վհոս կորնչել գիշերոյն յախտեան :  
 Մինչ յետին ես վեկայ ցաւալի այս տեսլեանց  
 Շուրջ փակեալ 'ի վահից , 'ի մահէ , 'ի մրթմանց .  
 Ես միայն յանկաց , թեպէտեւ ահափետ ,  
 Ես միայն անմարս յուսացաց քեզ յաւետ ,  
 Աներկրայ լեալ ընդ դարձ մշտափայլ արեգին  
 Ի փուլս աշխարհաց քեզ մնացից կախողին :

2. Ապացոյց. Աստուծոյ խնաստութիւնը  
 խնամօք սահմանած է որ հոգին մարմնոյ  
 մահուանէն յետոյ դեռ ապրի : Ստուգիւ ,  
 չէ՞ որ անմիտ համարած կը լինէաք այն  
 օրէնագիրն , որ զանցառութեամբ գնէր իւր  
 օրէնքներն այն աստիճան՝ որ մի և նոյն աչօք  
 նկատէր թէ՛ զանոնք պահողներն և և թէ  
 դրժողները : Արդ , սոյն վարմունքն ունե-  
 ցած կը լինէր Աստուած , եթէ սոյն կեանքէ  
 յետոյ ուրիշ մի կեանք չը լինէր , յորում  
 օրինապահները վարձատրէր և դրժողները  
 պատուհասէր . որովհետեւ այս աշխարհիս  
 մէջ նորա՝ որ աստուածային օրինաց հաւա-  
 տարիմ կը կենան , շատ անգամ ոչ մի ակըն-  
 կալութիւն կ'ունենան , երբ այն դին օրի-  
 նադանցներն ոչինչ ունին վախնալիք : Գար-  
 ձեալ , եթէ Աստուած ոչնչացընէր հոգին ,  
 յանցանք գործելու բաղձանաց օգնած կը  
 լինէր . վասն զի ոճրագործ մարդիկ կը սու-  
 կան անմահութենէ , ում առաքինիք և ուն-  
 դագին կը բաղձան : Աւրեմն աստուածային  
 խնաստութիւնը կը պահանջէ որ մեր հոգին  
 անմահ լինի : Մտիկ անեմք նաեւ Գրլիզ  
 Գաղղիացի հեղինակին սոյն նիւթիս վերայ  
 մի բանաստեղծական գրածին , զոր արձա-  
 կօրէն կը գնեմք աստ աւելի պարզ խնա-  
 ցուելու համար : Անմահութեան բաղձալը՝



«Ո՛չ, բնաւ ունայն մի դրութիւն չէ, մի խոր բնազդում է, որոյ մէջ ՚ի զուր կը մարտնչուի, և անշուշտ նոյն ինքն գերագոյն էակը ձեր սրտից մէջ տալաւորեր է մոլութեան դէմ կռուելու և առաքինութեան ծառայելու: Իւր անսասան բնակարանին մէջ յաւիտենականութեան ակնարկով կերայ բազմաձև խաղաղ անմահութիւնը, քաղցրահամբոյր առ բարին և սոսկալի առ յանցաւորն, ժամանակիս, որ հսկայաքայլ կը դիմէ իւր աչաց ներքեւ, կը սաշտապանէ արդարութեան բարեկամին և կը խղէ մալութեան ձեռքէ սոյն ակնկալութիւնն որ սոսկալի ապաստանարան է ոչնչութեան: Ո՛վ դուք, որ զկայծակն յախշտակելով Ողիմոսէն, յաւիտենական օրինաց խորանները կը կործանէք, վստահարսասհարիչք երկրի, սարսափեցէք, անմահ էք դուք: Աւ դուք, թշուառութեան վաղանցուկ զոհեր, դուք՝ որոց վերայ կը հսկէ մի Աստուծոյ հայրական ակնարկը, բոպէական ուղեւորք դէպ յօտար երկիրներ, միփթարուեցէք, անմահ էք դուք »:

Է. Ապացոյց. Ճշմարտութիւնը ճանչելու համար մեր ունեցած փափաքը ցոյց կուտայ թէ հոգին մարմնոյն հետ չը մեռնիր: Արդարեւ, կ'ասէ փիլիսոփայից մին,

Ճշմարտութիւնը քանի թանկագին է իմ  
 մտացոյս . քանի սիրելի է իմ սրտիս , Նմա  
 հասնելու համար որչափ և տաժանելի լինին  
 իմ ջանքերս , այսու ամենայնիւ ներքին հա-  
 ճութիւն մի կը զգամ իմ հետազոտութեան-  
 ցրս մէջ , որ ժամերը բողէներու կը փոխէ ,  
 Ամեն ճշմարտութիւն առարկայ է իմ բազ-  
 ձանացոյս . կատարեալ և յաւիտենական ծա-  
 նօթութենէ մի յետոյ կը զգամ մի տար-  
 փանք : Բայց որչափ սակաւ են իմ ճանաչած  
 իրերս . եւ այս սակաւս որչափ թերի կը  
 ճանչեմ : Դատ անգամ մի ծանօթութիւն  
 միւսը կ'անհետացրնէ . . . : Արխարութիւ  
 արդեօք եթէ ճշմարտութեան սոյն անյադ  
 բազմանքը կը նկատեմ իբր մի տպաւորու-  
 թիւն անհուն իմաստութեան : Ո՞չ ապաքէն  
 ակն յայտնի է թէ սոյն աստուածային  
 աղբիւրէ կը բխեն մեր ծանօթութիւնքը :  
 Ո՞չ ապաքէն նոյն է դարձեալ , որ իւր  
 ետեւէ տարփանք կրել տալու համար ,  
 այսպէս սաստիկ զգալ կուտայ մեզ մեր  
 մտաց լուսաւորութեան սահմաններն եւ  
 տկարութիւնը : Ըստ այսմ , ճշմարտութիւնն  
 ուսանելու մէջ յառաջադիմութիւններ ա-  
 նելը , սոյն աստուածային լուսոյն մերձեցալ է :  
 Կարե՞մ ուրեմն հաւատալ թէ սոյն անհուն  
 իմաստութիւնը , զօր տեսնել կարենալու

համար այսքան եռանդազին կը փափաքիմ , մշտնջենապէս որոշած լինի մերժել այն փափաքները զոր նոյն ինքն ներշնչած է :

Առար . Թէեւ ընդունելու լինիմք հոգւոյ անմահութիւնը , կը հարցանեն անհաւատք , ի՞նչպէս ընդունիմք որ յանցանաց և պատժոց մէջտեղ առանց մի համեմատութիւն լինելու , չարագործք մշտնջենապէս պատժուին :

Պատ . Պատիժը քան զյանցանքը չափէն աւելի լինելն ասպացոյցանելու համար , կ'ատէ Յերժիէ , հարկ էր բոլոր չարութիւնը ճանչել թէ սրբան կը դոյժի այն անհուն բարձրութեան , և թափանցել մտօք այն յատկութեանց որք զյանցանքը կը ծանրացնեն , առանց որոյ չէ կարելի երբէք նորա եւ պատժոյն մէջտեղ եզած համեմատութեան կամ անհամեմատութեան վերայ դատաստան անել : Արդ յանցանաց չարութիւնն և նորա ծանրութիւնն ամբողջ ճանչելու համար , հարկ էր յայտնի տեսնել թէ սրչափ հակառակ է այն աստուածային սրբութեան . հարկ էր տեսնել բոլոր միջոցները , օգնութիւնները , շնորհները և մտայլութեամբ զորս ստացաւ խոյս տալու անկէ և գործելէն յետոյ քաւութեան հոգ տանելու . հարկ էր ճանչել սոյն շնորհաց

բոլոր արժէքը. հարկ էր գիտնալ թէ ինչ կայ  
 ապերախտութեան, կամասպաշտութեան և  
 Աստուծոյ օրէնքներն արհամարհելու յան-  
 յանաց մէջ: Այս է աւասիկ որ մարդոյս  
 անկարելի է որոշումն տալ. ուրեմն որքան ալ  
 յաւիտենական լինի պատիժն և անցաւոր  
 յանցանքը, չեմք կարեր ասել թէ պատիժը  
 գործուած յանցանաց չափէն աւելի է:

Գարձեալ, պատժոց յաւիտենականու-  
 թիւնը չը թուիր թէ ներհակ լինի մտաց  
 քան զվարձուց յաւիտենականութիւնը.  
 Վասն զի առաքինութիւնն չունի աւելի զօ-  
 րութիւն արժանաւոր լինելու քան զմոլու-  
 թիւնն անարժան դատուելու: Վերջապէս,  
 փիլիսոփայութիւնը չըպնդեր բնաւ մի միայն  
 բնութեան զօրութիւններովն ապացուցա-  
 նել պատժոց յաւիտենականութիւնը:

Երաւունք է, կ'ասէ Լրֆրանսէ, որ  
 մեղաւորը, որ չը կամենար սիրել զԱստ-  
 ուած, պատժուի այնքան՝ որքան ժամանակ  
 որ չը պիտի սիրէ. արդ բնաւ երբէք չը պի-  
 տի սիրէ: Վասն զի ինչ հիման վերայ կա-  
 րեմք ենթադրել թէ մի մեղաւոր մարդ,  
 որ չը կամենար բնաւ զԱստուած սիրել  
 այս աշխարհիս մէջ, հանդերձելոյն մէջ  
 չնորհք պիտի ընդունի սիրելու:

## ԳԼՈՒԽ Գ .

Բարոյագիտութիւն կրօնական .  
կամ պարտիք առ Աստուած :

**Ա**ՍՏՈՒԱԾ ստեղծեց զմարդ , կը պահ-  
պանէ զնա , կը ծանօթացընէ նմա զինքն և  
կը դատէ զնա : Սոյն յարարերութիւններէ  
կը ծագին մարդոյս համար պարտիքներ ,  
զորս կարեմք հինգ գլխոյ վերածել , այն է՝  
հաւատալ , յուսալ , սիրել , հնազանդիլ , պաշ-  
տել : Եւ յիրաւի ճանչել , սիրել , գործել ,  
աւատիկ այս է մարդ ասածնիս :

**Ա**ստուած կայ , ամեն ինչ կ'ապացու-  
ցանէ զայս , միտքը , բարոյական զգացում-  
ները , տիեզերաց կարգն , և այլն : Ուրեմն  
պէտք է հաւատալ մարդ Աստուծոյ և յուսալ ,  
նորա անհուն սղորմութեան :

**Մ**արդս գոյութիւն ունի Աստուծով և  
իւր գոյութեան պահպանութիւնն Աստու-  
ծոյ կը պարտի : Նմա պարտաւոր է բանա-  
կանութիւնն եւ ազատութիւնն որ Բնու-  
թեան (աշխարհի) թագաւորը կը կացուցա-  
նեն զինքը . նմա կը պարտի և մի երջանիկ

անմահութեան խոստումն . ուրեմն կը պարտի մարդ սիրել զԱստուած :

**Ա**ստուած , ստեղծող մարդոյ , ցոյց կուտայ նմա զինքն իբր մի կարողութիւն , ոչ միայն բարերար , այլ և յանհունա գերագոյն : Ուրեմն պարտի մարդ հնազանդիչ Աստուծոյ :

**Մ**արդ զամեն ինչ յԱստուծոյ ունի , անկէ կախումն ունի և կոյ հաստատուն . ուրեմն նմա կը պարտի բոլոր իւր էութեան յարգն ու մեծարանքը . ինքը գոլով հունաւոր էակ , պարտի խոնարհիլ անհուն էութեան առջեւ , պարտի պաշտել զԱստուած :

**Հ**աւատ , յոյս , սէր , հնազանդութիւն և պաշտօն , սոքա են կրօնքը կազմողն , որ , ինչպէս ցոյց կուտայ հաւանօրէն իւր աւանը , կը ստուգաբանի կրել բան մի օրինօք , կամ ըստ Վատին ստուգաբանութեան կը նշանակէ կապ , որ զմարդ կը կապէ ընդ Աստուծոյ պարտաւորութեամբք , որոյ գիտութիւնը կը կոչուի բարոյագիտութիւն կրօնական . արդ , ամեն կրօնք կ'ենթադրէ մի պաշտամունք , ինչպէս պիտի տեսնեմք սակաւ մի յետոյ :

## ՅՕԴՈՒԱԾ Ա .

ՅԱՅՏՆԻ Է, թէ մարդս ստեղծուած է ընկերութեամբ ասորելու, եւ թէ չը կայ մարդկային ընկերութիւն կարելի՝ առանց մի առաջին անկախ եւ գերագոյն հեղինակութեան, որոյ ներքեւ հոլատակ լինին ամեն կամք: Արդ, ընկերութեան եւ գերագոյն հեղինակութեան սոյն գաղափարն անյաղթելի կերպիւ իւր հետ կը բերէ կրօնի գաղափարը, որովհետեւ կրօնքը միայն կարող է պատուիրանքը օրինաց ուժ տալով վաւերացընել և հրատարակութիւնն աշնուացընել: Ուրիշ կերպ խօսիմք, միայն գերբնական և աստուածային օրինաց մէջ կարող է մարդ բաւական իրաւունք գտնել հասարակաց բարւոյն համար անձնանուէր լինելու, իւր կամքն ուրիշ մի մարդոյ կամաց խոնարհեցընելու: Սոյն ճշմարտութիւնը ճանչցուած է նախնեաց իմաստութեանէ, որ հակառակ իւր մոլորութեանց հասկացած էր՝ թէ ոչ մի մարդկային ընկերութիւն չէ կարող կազմաւորիլ և ոչ յարատեւել, եթէ կրօնքը չը նախագահէ իւր ճննդեան և չը հաղորդէ նմա սոյն աստուածային զօրութիւնն, որ օտար է մարդոյն

գործերէն և որ կեանք և ամեն տեսական  
 հաստատութեանց : Քաջ ընկերութեան  
 գոյութեանը հարկաւոր եղող և մարդկային  
 մտայ մէջ անեղծ մնացող կրօնքի սոյն գա-  
 զաւորն իւր մէջ կր պարունակէ ակամայ  
 կրօնական ընկերութեան գաղափարք : Առ-  
 ստոր արգարե աստուծոց և սոյն , որ մարդիկ  
 միշտ այսպէս գաստուգութիւն արած են ,  
 վայրենի ժողովրդոց , բարբարոս ու քաղա-  
 քակիրթ ազգաց մէջ , ամեն ուրեք քաղա-  
 քական ընկերութեան մօտ կր գտնուի կրօ-  
 նական ընկերութիւնք , նաեւ շատ ժամա-  
 նակ քաղաքականին հետ նշնանացած և կրօ-  
 նականը և գոյն իւր մէջն ընկզմած և նմա-  
 տիրացած , հարկ և ուրեմն որ սորա մէջ  
 հարկաւոր և բնութեան ու բանաւորու-  
 թեան համաձայն բան մի լինի , որովհետեւ  
 ոչ մի ժամանակ և ոչ մի տեղի չէ եղած  
 քաղաքութիւն սոյն իրողութեան : Առ ար-  
 գարեւ , անտեղի չէր լինէր որ մարդիկ ,  
 որք իրենց երկրաւոր գոյից և ժամանակա-  
 ւոր սգախց պաշտպանութեան և պահպա-  
 նութեան համար ընկերութեամբ ապրին  
 և երկնաւոր գոյից , հոգեկան սգախց եւ  
 մարդոց ամենն աւելի պիտանայու իրաց  
 գալով իրարմէ բաժնուած ապրին առանց մի  
 կապակցութեան : Այլ , չէ կարելի այսպէս



վնիլ, և ամեն ուրիշ ուր որ գտնուին մար-  
գիկ, պիտի հասարակին իրենց գահաթեան  
քաղցրամայն երգերը գեղ ՚ի Ամենաբարձ-  
րեալն ուղղելու, ամեն ուրիշ միտքան պի-  
տի երգեն իրենց գահարանական սպսմը-  
ները :

Քոչց եթէ կրօնական բնկերութեան  
գոյութիւնը հարկաւոր իրողութիւն մի է,  
և եթէ՝ ուրիշ կողմէ, ոչ մի բնկերութիւն  
չէր կարող գոյանալ առանց մի գերազայն  
հեղինակութեան, որ կառավարէ և սնուն-  
սէ զայն, ոչ սարսիւն ակն շայտնի կը վնէր  
կրօնական հեղինակութեան մի հարկաւո-  
րութիւնը : Առ այս ինքնին ջոջ կուտայ,  
ժամ զի ՚ի նշուէս կարելի է խաղաղութեան  
և միութեան մէջ հաստատուն մնալ կրօնա-  
կան բնկերութիւնը : Վ՛նշուէս կարող էր  
խոյս տալ գաւանդութեանց անիշխանու-  
թենէ, անիշխանութիւն՝ որ աւելի աւերիչ  
և աւելի փոխադրական է իւր ճոյսին մէջ  
քան թէ քաղաքական բնկերութեան մէջ,  
եթէ կրօնական օրէնքն յամենից չէ ճանշ-  
ցուած, չէ պարզօրէն սահմանուած, ու  
անց մի կենդանի հեղինակութեան որ  
յանձնառու կգամ լինի ճանտթայքնեղ զայն  
ամենուն և կանանաւ օրել :

Արծիքը կարէ սահմանիլ Աստուծոյ կեա

մարդոց հաղորդակցութիւնը, որ նորա հետ  
խօսակցի պատուելով զնա և, ծառայելով նմա  
սոյն աշխարհիս մէջ, հանդերձելոյն մէջ յախ-  
տենակամ երանութեամբ վարձատրելու համար:  
Այս սահմանը աշխարհիս չափ հին և մարդ-  
կային սեռին չափ բնդհանուր իրողութիւն  
մի ցոյց կուտայ. ուստի կարօտ է՝ ոչ բա-  
ցատրութեան և ոչ աստացուցի (¹) :

Արեւն կրօնքն ու բիշ բան չէ՝ եթէ ոչ  
բնական օրինաց մի մասը : Կրօնքի սրա-  
ճառքն են այն յարարելութիւնքն որ կան,  
և կամ Աստուած հաստատած է իւր և մեր  
մէջ, Մեր ստեղծողն է նա, առաջին սկիզբն  
ամենայն իրաց. Նա է սոյն աշխարհի մէջ  
զմեզ պահպանողը, սրատրատողն ու կազ-  
մաւորողը, վարձուց արժանի լինելու հա-  
մար հանդերձելոյն մէջ. նա կը սնուցանէ  
մեր հոգին իւր օրէնքներով և շնորհքնե-  
րով. վերջապէս միւս աշխարհի մէջ պիտի  
արժանացընէ երանական խնդութեան՝ ու  
բում սահմանած է զմեզ, եթէ սոյն կենաց  
մէջ հաւատարմութեամբ իրեն ծառայելով  
արժանի լինիմք. եւ այսպէս կատարեալ

(¹) Կրօնի վերայ տրուած բնդհանուր սահմանաց մէջ  
նշանուոր է Քանտինը. « Կրօնքը, կ'ստէ, կատարուած է  
ամենայն սրատրատութեանց, համարելով զանանք իր  
Աստուածութենէ սահմանուած :

կը լինի՞ք նորա հետ միանալով, վասն զի նա է մեր վերջին վախճանը :

Միջոցն՝ որով կրօնքը հաստատուն կը մնայ և յերջանկութիւն կ'առաջնորդէ մեզ, մեր առ Աստուած մատուցած ճառայութիւնն և պատիւն է, որ ընդհանրապէս սրբազան կը կոչուի: Կրօնքի վախճանն է մարդոց երջանկութիւնը, երջանկութիւն՝ զոր սոյն կեանքէ յետոյ միայն պիտի վայելեն: Նորա որ անհաւատ են պաշտաման, պիտի զրկուին սոյն երջանկութենէ և իրենց վերջին վախճանէն: ուրեմն Քրիստոս, պիտի լինին: Ըստ այսմ՝ սոյն աշխարհիս մէջ Աստուծոյ հետ եղած հաղորդակցութիւնը, յախտենական հաղորդակցութեան կ'առաջնորդէ ու կը պատրաստէ: առաջինը կ'ապրի գործով, և այս երկրորդս միութեամբ և սիրով: Այսպէս ամեն ինչ կը վերջանայ 'ի փառս Աստուծոյ:

Աւասիկ գլխաւոր հարցերը զոր փիլիսոփայութիւնը կարէ ուզել կրօնքի մասին և լուծումն տալ՝ համարելով զայն իբր ընդհանուր և անհակառակելի իրողութիւն:

Ա. Ի՞նչ բանի մէջ կը կայանայ կրօնքը:  
 Բ. Ո՞րն է կրօնքի սկզբնաւորութիւնը:  
 Գ. Կրօնքն ընդհանրապէս բարի, ճշմարիտ, հարկաւոր և պարտաւորիչ է: Գ. Ուստի՞ կը ծագին կրօնից զանազանութիւնն և

բաղմապատկութիւնը : Ե . Ամեն կրօնք լու-  
են : Ձ . ճշմարիտ կրօնքը ճանչելու համար  
ոյք են նշանները : Է . Ի վերջոյ , ո՞րն է  
ճշմարիտ կրօնքը :

Ա . Հարցումն . Ի՞նչ բանի մէջ կը կայա-  
նայ կրօնքը :

Կրօնքն է ներքին հաղորդակցութիւն մեր  
հոգւոյ ընդ Աստուծոյ . պաշտօնը որ զայն  
կը պահպանէ և սոյն յարաբերութեան տակ  
նորա միտքը կը բացատրէ , է պարզապէս  
ներքին . պաշտօնը կը կայանայ մի միայն  
մտայ ներքին գործողութեանց մէջ , այն է  
հոգւոյ ճշմարիտ երկրպագութիւնը , գոհա-  
բանութիւններն , աղօթքը , և այլն :

Կրօնքն է գարձեալ արտաքին հաղոր-  
դակցութիւն մարդոյ ( նկատելով զնա մարմ-  
նաւոր ) , Աստուծոյ հետ , որ ինչ և իցէ  
կերպիւ տեսանելի կամ զգալի կը կայքնէ  
զինքը իւր գործօլը կամ իւր առարեալնե-  
րով : Սոյն յարաբերութեանս տակ բացատ-  
րուած պաշտօնն է արտաքին , կը կայանայ  
այն մարմնայն զգալի գործողութեանց մէջ ,  
այն է բերանացի պաշտամունքը , աղօթքը  
և այլն :

Ամեն ընկերութիւն ենթադրելով որ  
զոնէ հարկաւորապէս երկու համանման  
անհատ ունենայ իւր մէջ , որոց մին միւսին

կարօտ լինի և չը կարենալով առանձին ապ-  
րուիլ և պահպանուիլ առանց սոյն անհա-  
տից իրարու հետ ունեցած փոխադարձ  
գործոյն <sup>(1)</sup>, ըստ այնմ պէտք է կրօնքի մէջ,  
մարդոյ կողմանէ մի Տառայութիւն կամ  
պաշտօն՝ թէ ներքին և թէ արտաքին, որ  
պաշտէ, խնդրէ և արժանաւոր լինի խնդ-  
րածն ընդունելու, և Աստուծոյ կողմանէ  
մի գործողութիւն որով կուտայ նոցա ինչ  
որ կը խնդրեն և ինչ բանի որ պէտք ունին:

Սոյն գործողութիւնն Աստուծոյ կող-  
մանէ կը կայանայ իւր պատուիրանքներով  
մարդոյ միտքը հրահանգելու, սրտին բաղ-  
ձանքները կանոնաւորելու, և իւր շնորհ-  
քով կամայ և գործողութեանն օգնելու,  
իսկ մարդոյս կողմանէ կառաստալու, սիրելու  
և Տառայելու մէջ: Ի վախճանի՝ պիտի տայ  
Աստուած երջանկութիւնը, և մարդս պիտի  
յարի նմա անեղծական սիրով, կրօնից  
տարերքը նոյնպէս կ'աւսուցանեն մեզ թէ  
մարդն ուրիշ բանի համար չըստեղծաւ,

(1) Հեթանոսութեան մէջ անգամ կը գտնուի Աստու-  
ծութեան կողմանէ եղած մի գործողութիւն. կանխաստ-  
ցութիւնք, զատգամք, և այլն: Բայց նորա մէջ ամենեւին  
չէ ճանչցուած բարիք գործելու համար ներքին շնորհաց  
փոխադարձութիւնք: Det vitam, det opes, animum mi  
aequum ipse parabo. Ո՛խափաւ:

բայց եթէ զԱստուած նանչկու, սիրկու և ճառայկու, նմա, ևւ այնու յախանձակամ կեանքն ընդունկու:

Ուրեմն կրօնքը, նկատմամբ մարդոց հեառանկցած յարարերութեան, երեք բան բազանդակած ունի. վարդապետութիւնքը, բարոյագիտութիւնն և սրաշածնը:

Վարդապետութիւնք են Աստուծոց գոյութիւնք, իւր նախափնամութիւնք, հանդերձեալ կեանքը, քան զմարդն գերազոյն եզոզ սղւոց գոյութիւնն, և այլն, և ինչ ինչ խորհրդաւոր ճշմարտութիւններ, առ որս չէ կարող բարձրանալ մարդկային միտքը: Ամեն կրօնից, ինչպէս և ամենէն աւելի սուտ կրօնից մէջ եղած են միշտ խորհրդաւորութիւններ:

Բարոյագիտութիւնն է ընդհանրապէս բնական ինչպէս նաև դրական օրինաց սկզբութիւնները, որք ամեն ժամանակ և ամեն ուրեք յԱստուծոց բղխած ընդունուած են:

Սրաշածնը, անխօփ մտօք առնելով, ամեն ուրեք զոհն եղած է թէ այս կամ այն ձևէին տակ, քիչ շատ պատահական արարողութեամբք հանդերձ: Սոյն գործողութիւնն ուղղակի սրատուիրուած է կրօնքը սրահպանելու կամ զայն յայտարարելու համար. նա ինքնին կը յայտնէ Աստուծոց և

մեր մէջ եղած յարաբերութիւնն . և ահա սորա համար է որ շէ եղած բնաւ արտաքին պաշտամունք առանց զգալի որ և է մերձաւորութեան Աստուծոյ՝ հաղորդակցելով մարդոց հետ . Արեւի շէ իսկ մտքը մերունել արտաքին պաշտամունք մի առանց որ և է արտաքին ներկայութեան Աստուծոյ կամ իւր գործողութեան . արտաքին մի արարողութիւն շէ կարելի ուղղութիւն գէղ յանտեսանելի մի սահման . սոյն երկու իրողութիւնք շեն միատեսակ . Այսպէս իսկ Աստուած երեւութապէս միշտ ներկայ եղած է ճշմարիտ կրօնքի մէջ .

Արտաքին զոհն ամեն ուրեք մի զգալի իրի նուերն ու սղջակէզն եղած է . գրեթէ միշտ մի կենդանի և շատ անգամ իսկ մի մարդ .

Զոհի նպատակներն եղած են ամեն տեղ պաշտել զԱստուած . շնորհակալ լինել . թողութիւն խնդրել և թախանձել զնա իւր պարզեւներն՝ ու շնորհները մեզ սաղա .

Այսպէս միշտ և ամեն ուրեք մարդիկ համազուեցան . Ա թէ պարտաւոր են զԱստուած պաշտել խոստովանելով նորա անհուն կատարելութիւնն և ամեն իրաց վերայ գերազոյն տէրութիւնը . Ն թէ զամեն ինչ անկէ ունին ստացած . և թէ երախտա-

զէւս պարտին լինել նմա . Գ . Թէ կր մեզան  
 չեն նորա գէտ . և Թէ կարեն ներպուծիւն  
 ձեռք բերել ինչ ինչ պայմաններով . Գ . Թէ  
 պէտք աւնին նորա օգնութեան , նաև . Ժա  
 մանակաւոր իրաց կարգին մէջ . Ս . Թէ զո՞ն  
 ա պոփօքն այս նպատակաց համար օգտա  
 կար են . և ըստ այսմ մի զո՞նի փոխարէն  
 աբիշ մի այլ զո՞ն կարէր անցնիլ . Ասկէ  
 յառաջ կուգայ

Բ . Հարցումն . Որն է կրօնքի սկզբնա  
 ւորութիւնք .

Կրօնքը մի աստուածային սկզբնաւորու  
 թիւն և եթ կարէ աւնենայ , և է այն հար  
 կաւորապէս յայտնիւղ , զիսն զի . Ա . Ժա  
 մանակաց մթութեան մէջ Թաղուած է այն  
 ոչ մի ինչ կարող է նորա մի սկզբնաւորու  
 թիւն յոյց ստլ . այսինքն Թէ ոչ աբիք  
 սեննուած է կրօնքի սկզբնաւորիլն արդէն  
 կազմաւորուած մի Ժողովրդեան մէջ . Բ .  
 Կրօնքը չէ կարող գոյութիւն աւնենայ ա  
 սանց նկատուելու և ճանչցուելու այն իրք  
 հարկաւոր . աբիմե ժողովրդային սենին շտի  
 հնագոյն է . ինչ միջոց կայ Ժամանակի մը  
 համար միայն իրք հարկաւոր ընդաւնել սա  
 ըս բան մը . երբ եթէ այն իրապէս կարե  
 ւոր էր . պէտք էր այն յառաջագոյն և միշտ  
 գոյութիւն աւնեցած է . Կսկ եթէ կրօնքն



աշխարհի հետ սկզբնաւորած է , ուրիշն  
 Պատու ճոյ կու գոյ , զոր աշխարհն ստեղ-  
 ճելու ժամանակ հաստատեց , Գ . Թարգիկ՝  
 զիրենք Պատու ճոյ հետ կապոց յարարերու-  
 թիւնքն իրենք արած շքիներով , այդ յարու-  
 բերութիւններէն ծագոց օրէնքներն ալ  
 իրենք արած չեն , ուրիշն կրօնքն անկախ  
 է իրենցմէ : Գ . Թի կրօնք նմարեղու կամ  
 ստեղծելու համար , հարկ կը լինէր հնարել  
 զՊատուամ , զարարչապարծութիւնք , Նու-  
 խափանամութիւնք , հանգերմեալ կեանքք ,  
 օրէնքներք , պաշտամունքք , զոհք , խոր-  
 հարգներն , և այլն , արդ , բնգունամ  
 ճշմարտութիւն մի է որ բոլոր այս ասան-  
 ներէս և ոչ մին կարելի էր բնականապէս  
 որ մարդոյ մտքք զար , մանաւանդ զոհու  
 գործութիւնք , Աւ եթէ մարդիկ հնարած  
 լինէին զասանք , ուստի պիտի գար սոցա  
 մի մասին այսչափ միմին և մինչեւ , բառ ե-  
 բեւութին՝ մտաց այսչափ հակասակ լինելը ,  
 Ե . Վերջապէս մարդիկ չեն հնարած կրօնքն  
 ինչպէս որ չեն հնարած զՊատուամ , մարդ-  
 կային բնկերութիւնք , հոգւոյն իրենց մարմ-  
 նոյն հետ ունեցած միաւորութիւնն , և այլն ,  
 Հարկաւորք չը նմարուիր , զանն զի հարկա-  
 ւորն անմիջապէս առարկային հետ կայ ու  
 կը կենաց , որ զայն հարկաւոր արած է .

Գարձեալ , մարդն չէ կարող հնարել ոչ գաղափարներն , ոչ իւր ծանօթութիւններն , ոչ իւր բնութեան և իւր գործողութեանց օրէնքները . ապա թէ ոչ ինքզինքը հնարած կը լինէր : Եւ ասկէ կը տեսնուի որ մեր ծանօթութեանց աստուածային սկզբնաւորութիւնն մի անգամ որ ընդունուի , կրօնքի և ընկերութեան աստուածային սկզբնաւորութիւնն ալ անկէ կը հետեւի . սոյն երկու հարցերը սերտիւ կապուած են իրարու . աւասիկ այս է սրտաձառն որ մի միայն Աստուած ճանչցողները կրօնքի յայտնեալ լինելը հերքելով , կը հերքեն նաև մեր գաղափարաց յայտնութիւնը :

Հեղինակները սովոր են երեք հարցեր առաջարկել յայտնութեան վերայ (1) . վասն զի կը նկատեն զայն 'ի նախընթացէն՝ անկախ 'ի գործոյն :

Ա . Յայտնութիւնը կարելի՞ է նկատմամբ վարդապետութեան , բարոյականի և սաշտաման . այսինքն՝ Աստուած կարէ՞ պահանջել մեզնէ հաւատ մեր մտաց անհասեղող առ խորհրդաւոր ճշմարտութիւնս .

(1) Յայտնութեան վարդապետութեան վերայ աւելի բն. գարձակ ծանօթութիւն կարէ գտնել ընթերցողը . « Քրիստոնէութեան աստուածային ծագումը » անուն գրքին մէջ . ԳԼ. Գ—Ե . Տղ . 'ի Կ . Պօլիս 1880 .

հնազանդութիւն՝ առ դրական պատուիրանս ,  
 և հաւատարմութիւն՝ առ արտաքին մի պաշ-  
 տամունք իրմէ հրամայուած :

Սոյն հարցմանս պատասխանելու համար ,  
 կարեմք եւ ՚ի գործոյն առ իրաւունս եզրակա-  
 ցնել . քանզի Աստուած չք կարէ իւր կա-  
 րողութիւններէ անդին անցնիլ , Ուրիշ կող-  
 մանէ , այդ պահանջմունքով մեր մտաց կը  
 մնասէր , որ չէր կարող զօրաւոր պատճառ  
 ունենալ հաւատարու քան Աստուծոյ խօս-  
 քէն աւելի . ոչ մեր կամաց , որ պէտք չէ  
 բաւականանայ միայն հարկաւորք գործելու ,  
 այլ և պիտի օրօնէ օգտակարն և վայելուչը<sup>(1)</sup>,  
 այն քանին մէջ որ իւր պահպանութեան  
 և երջանկութեան կը վերաբերի . և ոչ մեր  
 ուրիշ մի կարողութեան և մեր իրաւանց կը  
 մնասէ , որովհետեւ կարօտ եմք պաշտաման  
 զոր չեմք կարող մեք մեզէն հնարել :

Բ . Յայտնութիւնը հարկաւոր է նկատ-  
 մամբ վարդապետութեան , բարոյականի և  
 պաշտաման . կամ նախընթաց հարցման

(1) Գրական օրէնքն ամենքն ալ իրենց առարկայ ունին  
 օգտակարն ու փայելուչը . սոքա կը ծագին պատահական ,  
 և կամուտ ու ժամանակաւոր յարաբերութիւններէ , վասն-  
 որոյ անփոփոխ չեն : Ար և է մի իր օգտակար նկատուելուն  
 պէս , բաւական իրաւունք կոյ զայն պատուերի տեղ դնել .  
 անմիտ է նա որ կը մերժէ հնազանդիլ այնմ :

աւելի համեմատ եղող խմաստով խօսիմ , բարի , բնական , վայելուչ և հարկաւոր է որ կրօնքի մէջ գտնուին խորհրդաւոր վարդապետութիւնք մտաց հասանելի եղած ճշմարտութեանց վերայ աւելցուած , եւ դրական պատուիրանքներ՝ բնական օրինաց վերայ աւելցուած և մի դրական և որոշեալ պաշտամունք :

Սոյն հարցման արդէն պատասխանած լինելով , գիտեմք միայն որ գործոյն ընդհանրականութենէն և մշտնջենաւորութենէն կարելի է նորա վայելչութիւնն և հարկաւորութիւնն եզրակացընել , առանց մի ուրիշ շատ պատճառներ դուրս բերելու իրաց բուն էութենէն և մարդոյն բնութենէն հանելով :

« Աւրեմն ի՞նչ դարման և նպաստ պիտի ունենան անհաւատք , կը հարցանէ նշանաւոր մի գրագէտ , փորձառութեան մի հեղինակութեան գէմ պատերազմելու , որ բոլոր երկրիս կը վերաբերի , որ չորս հազար տարի տեւեց և որ այսպէս բարձրագոյն կերպիւ կը վկայէ յայտնութեան հարկաւորութեանը : Պիտի ասե՞ն արդեօք թէ բնական լոյսը կարող է այսօր՝ ինչ որ չէր կարող աշխարհիս գեղեցկագոյն գարուց մէջ անել . թէ նա աւելի սաստիկ , աւելի

Թափանցիկ է մեր ժամանակի ռամկաց մէջ, այն մարդոց կ'ասեմ, որք ոչ ժամանակ ունին և ոչ միջոցք ճշմարտութիւնն օրոնելու ետեւէ լինել, որ չեղաւ նա, կ'ասեն այնպէս լուսաւոր հին ժամանակի մեծամեծ փիլիսոփայից մէջ, այն վսեմ հոգիներու, յորում մարդկային իմաստութիւնն իւր բոլոր պայծառութեամբ երեւցաւ : Պիտի պնդե՞ն նոքա թէ ժողովուրդը, այսինքն մարդկային ազգի բարոյական ամբողջութիւնը կարէ անձամբ անձին մի վարդապետութեան մարմին ձեւանալ, ամբողջ և կապակցեալ, այն ինչ այս հռչակաւոր մարդիկ միայն բեկորներ, երերուն կարծիքներ, մի քանի ճապաղ և ծայրակտուր ճշմարտութիւններ ստացան, առանց հետեւութեան, առանց հեղինակութեան :

Թող չասուի, թէ անարժան է Աստուծոյ՝ որ մարդոյս միտքը չը հասնող իրաց հաւատալ պահանջէ, վասն զի տիեզերաց մէջ ամեն ինչ լի է ճշմարտութեամբք, որք միանգամայն անտարակուսելի և անհասկանալի են : Այսը, օղը, կրակը, հոգին եւ մարմինը միաւորող կապն, եւ բնութեան ուրիշ այնչափ սքանչելիքներ պարտին մարդկային մտաց յանդուգն վստահութիւնը զսպել և իւր տկարութեան վերաց համոզել

զինքը մշտապէս ։ Իսկ եթէ բնութեան կարգին մէջ արդէւքներ պատահին , որոց բոլոր մեր ճիգերը չը կարենան յաղթել անցնիլ , եթէ մարդկային տգիտութեան գոռոզութիւնը կաթիլ մի ջրի , խոտոյ մի շիւղի , աւազոյ մի հասիկի գէմ փշուրի , պէտք է զարմանալ եթէ ուրիշ բարձրագոյն կարգի մէջ , որ է յայանութիւնը , մեր տկար միտքը գերազանցող ճշմարտութիւններ գտնուին ։ Ասեմք ուրեմն Րուսոյի հետ .  
 « Ոչ այնչափ խելք կը հասցընեմ Աստուծոյ , որչափ որ զնա կը պաշտեմ . իմ խելացս աւելի արժանաւոր կիրառութիւնն է՝ նորա առջեւ ինքզինքս ո՛չ ինչ համարել » ։

Յայանութիւնն ոչ միայն մարդկային մտաց գոռոզութիւնը խոնարհեցընելու կը ծառայէ , այլ և նորա հանձարը կը կանոնաւորէ , կը տարածէ և և կը մտքրէ . զինքը յուզող սուտ և հակառակ անհամար կարծեաց ընդհարումէ կ'ազատէ . ցոյց կուտայ նմա ապահովապէս իւր բռնելիք ճանապարհը , կ'առաջնորդէ իրեն գէպ ՚ի նաւահանդիստ , մինչեւ անգամ չըթողլով որ նաւահոծութեան երկիւղ կրէ ։ Եւ նոյն իսկ այս խելքն երբ ապահով լինի թէ Աստուած է խօսողն , այլ և և ոչ ինչ ունի՝ բայց եթէ ասել մարդոյն . Մտիկ արա տիրոջ մի որ

քան զիս վերագոյն է , նմա միայն մտիկ արա , իմ հրամանաւս է , որ դու զիս կը լքանես , և լոյս մի է որ դէպ ուրիշ մի լոյս զքեզ կը տանի , Երաւացի է որ ես գիտնամ թէ Աստուած է որ իւր կամքերն եւ գաղանիքները կը յայանէ , վասն զի նմա միայն պարտիմ հաւատալ և նորա ճշմարտութեան միայն վստահիլ , բայց երբ ստոյգ լինիմ որ նա է խօսողը , պէտք է որ մտիկ անեմ նմա և լռեմ :

Բայց , կը հարցանեն , թէ ինչո՞ւ համար Աստուած հակասական իրեր կ'առաջարկէ մեզ որ հաւատամք , ստուգելու համար , թէ հակասութիւններ կան կրօնական խորհրդոյ մէջ կը պատասխանէ մի մատենագիր , հարկ էր յայանապէս տեսնել զանոնք կազմող բառից իրարու հետ ունեցած ներհակութիւնը , սոյն բառից վերայ որոշ և կատարեալ գաղափարներ ունենալ , և նոցա վերայ գաղափար ունենալու համար պէտք կը լինի որ միտքը զառարկաններն իջեցնէ մինչեւ իւր կարողութեան սահմանը , կամ ինքը մինչեւ անոնց բարձրութեան հասնի , Արդ , ո՞վ կարէ համարձակիլ պնդել՝ թէ մէն մի խորհրդոյ վերայ պայծառ , և բաւական կատարեալ ծանօթութիւններ ունի , նոցա բուն իսկութիւնն եւ յարաբերու-

Թխենք ճանշելու համար : Նորա սրբ կը գտանեն թէ մեր կրօնական խորհրդոց մէջ պարանակեալ գաղափարներն անմիտքան և ներհակ են իրարու : նորա ուրեմն կը գտանեն ինչ որ չեն տեսներ և ինչ որ չեն ճանշեր : Աւրեմն իրենց խելքը շարաշար կը բանեցրնեն , պարտոյ պատճառ բռնելով թէ զայս անելով նորա գործածութիւնը կը պահպանեն :

Գ. Հարցումն . Յայտնութիւնը կոյ իրապէս , և ի՞նչ նշաններէ կարեմք ճանշել թէ Աստուած է որ կը խօսի իրմէ զրկուած անձի մը բերնով :

\* Այնքէ մի մարդ Աստուծոյ կողմանէ զրկուած եմ կ'աակ և իւր առարկելութեան յայանի ապացոյցներ կուտայ , պէտք է առանց երկրայելու մտիկ անել նմա յարգանքը և հնազանդել : Բազց այս ապացոյցներն այնպէս պէտք է լինին որ խարերայից կողմանէ չը կարենան տրուիլ , և երկնային առարկայը պարտի ունենալ այնպիսի կարգութիւն , զոր միայն Աստուած կարենայ գործածել : Չոր սրինակ , հեռու որ պատահարներ կախում ունենան , սրոց անսոցջութիւնը միասեղ մարդկային մտայ տեսութեան տակ անկարելի լինի ընկնիլ , բնական



կարգին ընկժացքք առ կախ թողուլ, առանց  
 սղնու թեան արհեստի հիւանդ մի բժշկել,  
 մեռեալ մի յարուցանել, առասիկ սրանչե-  
 լիքներ զոր Աստուած կարող է գործել, ե-  
 սով որ իր սրտանն սպաւոս գրնելու համար  
 առանց նեանք կը գործէ, փաստ է զի որ  
 Աստուծոյ կողմանէ առաքեալ է, Գալով  
 հրաշից կարելիութեան, մտիկ անեմք Բու-  
 սոյի (1) :

Հրաշքը կը սահմանի, յայտնի մի բազա-  
 ստիան բացերեալսն նանչուած ընդհանուր  
 մի սրինաց, արարեալ յանուն Աստուծոյ մի  
 յայնպիսի մարդոյ, որ զինքը նորա սրտան-  
 իսն կ'անուանէ, Կը տեսնուի առկէ որ մար-  
 գարեութիւնը հրաշք մի է, որովհետե-  
 սոյն ընդունուած կանանէ ս բազաստութիւն  
 մի է, որ մեր սահմանափակ միայրը չէ կա-  
 րող թափանցել սպաւոսին մէջ՝ բայց ելի  
 ենթացութիւններով, Արեմն հրաշքը  
 մարդկային գորութիւնները կը գերազանցէ :

(1) « Աստուած կարող է հրաշքեր գործել, սոյնին  
 կար իր հաստատած սրտանն փոխել, Այս հոգին ան-  
 կեցծարեն մէջ բերուած, էիլ ոչ անտեղի ստեղծուած  
 երկնք, Ավ որ բազաստարը յանդէս լինէր զոր, էիլ  
 չսրտանէր, իրեն մեծ ստափա եղան կը լինէր, բաւ-  
 կան էր յարելչունս գնէլ սնա, Բայց ստեղծն ոչ մարն  
 էրը ուրեան է Աստուծոյ ընդհանր կարող ընդհանր  
 էրը ուրեան է Աստուծոյ ընդհանր կարող ընդհանր »

որովհետեւ չեմք կարող բնութեան ընդ-  
հանուր օրէնքներն ընդհատել խափանել :

Ճամարիտ մի հրաշք ճանչելու համար  
ոյք են յատկանիշերը : Մին միայն բաւական  
և անհրաժեշտ է . պէտք է որ մարդոց բով  
ես Աստուծոյ պաշտօնեայն եմ ասող անձը  
այն հրաշքը գործէ իւր պաշտօնին աւ-  
տուածային լինելը ցոյց տալու համար :

Դեւն ալ չէ՞ կարող հրաշքներ գործել  
և գալիքն իմանալ : Դիւին կարողութիւնն  
ինչ որ ալ լինի , մեք կարեմք ապահովել  
որ Աստուած չէ տուած նմա կարողութիւն  
որ իւր երկրպագելի անունը գործածելով  
զմեզ խաբէ . նա ինքն Աստուած զմեզ խա-  
բած կը լինէր , որովհետեւ հրաշքն անդի-  
մադրելի կերպիւ մեր հաւատոյն կը հրա-  
մայէ :

Գալով մի հրաշքի գոյութիւնը ճանչե-  
լու միջոցներուն , սորա են , որպէս թէ  
բնական դիպաց գոյութիւնը հաստատելու  
համար լինի . զգայարանաց վիպյութիւնն ,  
աւանդութիւնը , պատմութիւնը , յիշատա-  
կարանք : Պատճառն՝ ստոյգ է որ մի և նոյն  
չէ , բայց վիպյութիւնը գործը կը հաստա-  
տէ և ոչ պատճառը : Մի շատ գործեր կան ,  
որոց գոյութիւնը չ'ուրացուիր . ինչպէս են՝  
բնական աշխարհի ներդաշնակութիւնը ,

հոգւոյ և մարմնոյ միաւորութիւնը . քանի որ վկայութիւնը նոցա գոյութիւնը կը հաստատէ , ինչ փոյթ թէ պատճառը չը գիտցուի . էր շնորհակամբ նոյնպէս հրաշալի գործեր : Բայց պիտի ասեն՝ թէ այդ քո ասած գործերը հնարաւոր են , — Աստի՛ գիտէք նոցա հնարաւոր լինելը . վասն զի կը տեսնէք , Արեւի է նմանապէս հրաշալի գործերն տեսնել . նոքա պէտք չ'ունին ոչ արտաքոյ կարգի ասպացոյցներու , ոչ գերբնական վկայութեան , վասն զի բանը գործ մի հաստատելու վերայ է , մտօք դուրս հանելով պատճառը կամ գործոյն բնութիւնը :

Սրինակ թող լինի մեռելոյ մի յարութիւնը , մի մարդ տեսնուեցաւ գերեզմանին մէջ , անշարժ և անկենդան . Աստուծոյ մի պաշտօնեայ կը մօտենայ և կ'ողջնցընէ զնա . մեռեալն ոտք կ'ելնէ , կը քայլէ , կը գործէ . լաւ , այս եւս ո՛չ ասպքէն նոյն վկայութիւնն է որ կը հաստատէ թէ այս մարդը մեռեալ էր , և թէ յետոյ Աստուծոյ պաշտօնէին ձայնովն ՚ի կեանս կոչուեցաւ : Աւերջին իրողութիւնն առաջնոյն պէս կ'ապացուցուի . ուրեմն ինչպէս միոյն՝ նոյնպէս միւսին վերայ ոչ եւս երկբայութիւն կը մնայ . Ար կամիք գործն ուրանալ հրաշալի լինելուն համար . պէտք է ընդունել մի

բարոյական հրաշք, այսինքն՝ ենթադրել որ զգայարանաց յարաբերութիւնը կարէ խաբել երբ նա ստուգութեան ամեն նշաններն ունի :

Քրիստոնէական կրօնքի աստուածային լինելը Յիսուսի Քրիստոսի հրաշքներով հաստատել կամենալով, որք մասնաւորապէս Աւետարանաց մէջ կը գտնուին, հարկաւոր է քննել թէ սոյն գրքերն ունին ճշմարտութեան բոլոր նշանները զոր անաչառագոյն քննադատութիւնը կը պահանջէ. ուստի ապացուցանեմք սոցա վաւերականութիւնը, արժանահաւատութիւնն և հարադատութիւնը :

Աւետարանաց վաւերականութիւնը <sup>(1)</sup> :

Չորս Աւետարանները գրողք Յիսուսի չորս աշակերտքն էին. սուրբն Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս : Այնքրիստոնէից ընդհանուր աւանդութիւնը դրականապէս կը հաստատէ զայս : Ստոյգ է՝ որ սոյն արտաքին գրքերէն և ոչ մին, որոյ վաւերականութեան ոչ որ կը հակառակի, չէ կարող այս մասին ասանց չափ

(1) Տես սոյն խնդրոյն վերայ ընդարձակօրէն գրուած «Քրիստոնէութեան աստուածային ծագումը» գրքին մէջ : Գլ. 2 :

միօրինակ , հաստատուն եւ ասոնց չափ  
 ընդհանուր մկայութիւն մէջ բերել : Արդ ,  
 բոլոր աշխարհ միաբան կ'ընդունի թէ մի  
 աւանդութիւն որ իրողութեան մի թուա-  
 կանէ սկիզբ կ'առնու , և որ չէ բնաւ ընդ-  
 հատեալ , անյաղթելի կերպիւ նորա գոյու-  
 թիւնը կ'ապացուցանէ : Անհաւատք ոմանք  
 'ի զուր առարկեցին թէ նախնի դարուց մէջ  
 չորս Աւետարանք ուրիշ անթիւ նոյն տե-  
 սակ անընդունակ գրքերէ շէին խտրեր .  
 սոցա պատասխան արուեցաւ որ անընդու-  
 նելի Աւետարանք ամեն Եկեղեցեաց մէջ  
 չընդունուեցան , թէ՛ աներկբայելի չէ որ  
 ոմանք հարք զանոնք իրենց գրքերուն մէջ  
 յիշատակած են , և թէ՛ որչափ այլ շատերը  
 խաբուած լինէին նոցա վաւերականութեան  
 վերայ , մի կարճ ժամանակամիջոցի մէջ ,  
 այս սխալմունքը նոցա վաւերականութիւնը  
 չէր ջրեր . վասն զի սոքա միայն ընդունուե-  
 ցան ամեն եկեղեցիներէ և բոլոր քրիստո-  
 նեայներէն առաջին դարու մէջ , և թէ՛ երկ-  
 րորդին մէջ աւանդութիւնն որոշեց զանոնք  
 բոլոր միւսներէն , որք գոնէ սոյն բոպէէ  
 սկսեալ իբր սուտ և անհաւաստի նշանա-  
 կուեցան հաւատացելոց քով :

Սոյն իսկ քրիստոնէութեան թշնամիք  
 աւանդութիւնը կը հաստատեն : Հրեայք ,

որ այնքան մեծ շահ ունին սխալանքը յայտնելու, եթէ կար Աւետարանաց նկատմամբ, հերետիկոսք, որ սոյն գրոց մէջ իրենց դատապարտութիւնը կը գտնէին, առաջին դարուց մէջ նոցա վաւերականութեան դէմ չը հակառակեցան, եթէ ՚ի բաց հանեմք Մանիքեցիներն, որք Ս. Ղուկասու Աւետարանը կ'ընդունէին, չեմք գիտեր ինչ պատճառաւ, ըստ որում նոյն աւանդութիւնը հաւասարապէս միւսներն ալ կ'ապացուցանէր: Աեղսոս, Պորփիւր, Յուլիանոս ուրացող, որք կը ծաղրէին զքրիստոնէայս որք Ս. Գրոց մէջէն քրիստոնէութեան դէմ ձեռնարկութիւններ կը հանէին, ոչ մի տարակոյս հանեցին Աւետարանաց բուն ծագման վերայ, և սակայն ապացուցանելով թէ նոքա առաքելոց գործը չէին, քրիստոսական կրօնքը ՚ի հիմանց կը տապալէին, և նորա հետևողները ամօթով կը ծածկէին:

Ճշմարիտ է որ կրօնքի թշնամիք չը կարէին Աւետարանաց վաւերականութիւնը վիճի տակ ձգել, եթէ ոչ թուական մի որոշելով, յորում խաբեբայ մարդիկ զանոնք հրատարակած լինին, և մինչեւ ցայսօր ոչ որ կարողացած է այս թուականը գտնել և ոչ այն յանդուգն վարպետորդի և կեղծուպասիր մարդոց անուանքը նշանակել:

որք այսպիսի մի սուտ հրատարակութիւն գլուխ հանեցին : Սոյն թուականը Առաքելացը չը պիտի լինի . եթէ լինէր , նորա չէին լռեր , պիտի բողոքէին . ոչ նոցա մահուանէն յետոյ յաջորդող դարը , վասն զի նոցա աշակերտք և նոցա ձեռնադրած եպիսկոպոսք և սոցա ձեռք ՚ի հաւատս եկող ժողովուրդք ձայներնին պիտի բարձրացընէին այնպիսի խաբէութեան դէմ . ոչ , վերջապէս , այն թուականը յորում սուրբ հաւատքը բոլոր աշխարհիս երեսը տարածեցաւ , վասն զի այն ժամանակ առաջին դարու աւանդութիւնն ունէին եւ նոյն իսկ Առաքելաց ձեռագրքերն , և սովորած էին չորս Աւետարանագրքերն իբրեւ անսնցը յարգել : Բոլոր այս ասածներէս կ'եզրակացընեմք՝ թէ նոցա վաւերականութիւնն վիճի տակ չը կարէր բնկնիլ :

Ի՞նչպէս կարելի է ճշմարիտ մի մատենան իբր սուտ՝ կասկածի ներքեւ ձգել , կ'ասէ մի մատենագիր , երբ կը տեսնեմք որ հին հեղինակներ ընդունած և յիշատակած են իրենց գրոց մէջ , և մի շատ իրարու համեմատ վկայից անմիջահատ մի շղթայի վերայ հիմնուած է . մանաւանդ եթէ սոյն շղթայն այն ժամանակէ կը սկսի , յորում սոյն գիրքը գրուած է կ'ասուի , և մինչեւ մեր օրերը

հուգաց կը հասնի : Գարձեալ շէն եղած  
 բնաւ գրբեր այն ժամանակաց մէջ որք մի  
 ուրիշ գրբէ հատուածներ մէջ բերած լինին  
 իբր այս նիշ հեղինակի , որով նոցա վաւե-  
 րականութիւնը կը ճանչցուի , բաւական  
 կը համարէի ես՝ եթէ զայն հասուցած լի-  
 նէին ինձ հեղինակին անուամբը , անգիր  
 աւանդութեամբ մի հաստատուած առանց  
 միջահատութեան իւր թուականէն սկսեալ  
 մինչեւ իմ օրերը մի շատ կողմնակի գիծե-  
 բու վերայ : Բաց աստի , կան գրբեր որք  
 շատ թագաւորութեանց , ամբողջ ազգաց  
 նպաստաւոր գրուածքներ են , այսու ամե-  
 նայնիւ՝ իբր ճշմարիտ շէն համարուած .  
 ոմանք ազգին տարեգիրքն և նորա պատուա-  
 նունները կը պարունակեն . այլք նորա  
 օրէնքներն և սովորոյթքը , վերջապէս կան  
 որ նոցա կրօնքը կը պարունակեն : Որչափ  
 որ կը մեղադրուին մարդիկ ընդհանրապէս  
 աւելորդապաշտ լինելնուն համար , այնչափ  
 առաւել պէտք է խոստովանիմք , թէ նոքա  
 աշուրնին բաց ունին այն բանին վերայ որ  
 իրենց կրօնքին նպաստաւոր է . . . . Ժողո-  
 վուրդ մի ամբողջ չէ կարելի որ մի գրբի  
 թուականի մասին առէտ լինի , գիրք մի՞ որ  
 իւր հաւատքը կը կանոնաւորէ և նորա բո-  
 լոր յոյսերը կը հաստատէ :



« Գարմանալի՛ բան , այս ժամանակիս  
անհաւատք կը համարձակին վիճի ներքեւ  
ձգել մի իրողութիւն , որում չորրորդ դա-  
րու ուրացողք և փիլիսոփայք սարսաւու-  
րուած էին միաբանիլ : Այժմու անհաւատք  
Յուլիանոս կայսեր անձանօթ մնացած մի  
ասրացոյց գտա՞ծ են արդեօք : Կարե՞ն հա-  
մոզուիլ թէ անօրմէ աւելի լաւ կը ճանչեն  
Եկեղեցական պատմութեան նախնի արձա-  
գբքերը : Անշուշտ ո՛չ , բայց ցաւօք սրտի  
կ'ասեմք , որ Յուլիանոսի բրիստոնէութեան  
դէմ սրատերազմած եղանակին մէջ կը տես-  
նուի դեռ մի բիչ պատկառանք , ամօթ և  
ուղղամտութիւն , զոր ՚ի զուր ինդրած կը  
լինիմք մեր փիլիսոփայից գրուածոց մէջ » :  
( Ղիւզուազէն ) :

Աւետարանաց արժանահաւատութիւնը :

Առաքեալք ոչ կարացած և ոչ կամեցած  
են խաբել զուրիշներն իրենց պատմած իրու-  
ղութեամբքը : Սոյն գործերն իրենց բնու-  
թեամբ պէտք էին ուշադրութիւն գրաւել  
եւ վկայից հետաքրքրութիւնը շարժել ,  
որովհետեւ հրաշքներ էին , չարկ էր կաս-  
կածալից ուշադրութեամբ քննել զանոնք .  
լստ որում Յիսուս Քրիստոս նոյն գործերէն  
իւր աստուածութեան ասպացոյց կը հանէր ,

հետեւապէս և իւր կրօնքին . և թէ այն  
 ժամանակէ սկսեալ հարկի մէջ կը գանուէին  
 կամ մերժել զանոնք , կամ , թէ որ ճշմարիտ  
 կը համարէին զանոնք , ընդունել զնա իբր  
 Աստուած և իբր հիմնադիր մի պարտաւո-  
 բիչ կրօնքի : Այն գործերն հրատարակա-  
 էին . Յիսուս Քրիստոս գրեթէ իւր բոլոր  
 հրաշքները ժողովրդոց մէջ տեղ կը գոր-  
 ծէր , իւր թշնամեաց տոջեւ , որք կը հա-  
 կատակէին իրենց շահուն համար : Աւասիկ  
 նոցա բնութիւնը , կարեւորութիւնն որք  
 ՚ի բոց կը մերժեն ամեն կասկած թեթեւա-  
 մտութեան , նախապաշարման կամ սխալա-  
 նաց զորս պատմութիւնը գրողներէն կարե-  
 մարդ կասկածել :

Այն գործոց պատմութիւնը մի և նոյն  
 իրաւամբ քննուած պէտք է լինի խնամօք՝  
 նոյն ժամանակ որ սկսաւ յերեւան գալ ,  
 Հրեայք և հեթանոսք այն ժամանակ միայն  
 գարձան ՚ի հաւատս , երբ Առաքելաց վի-  
 յութեան ճշմարտութեանը ըւ համոզուե-  
 ջան . ինչպէս որ իրենց սխալանաց մէջ  
 մնացողներն եւս ստիպուած պէտք է լինին  
 տարակուսի ներքեւ թողուլ այն վիպու-  
 թեան զօրութիւնը , որպէս զի քրիստոսնե-  
 ութիւնը հերքելուն իրաւունք ունենան ,  
 Հրեայք Առաքելաց ժամանակ Աւետարանաց

մէջ պատմութեամբ գործոց զէմ չը բողոքեցին ,  
 և շատ հեթանոս հեղինակներ սոյն գործոց  
 շատերուն վերայ կրխօսին , կրբացաւորեն  
 զանանք , ստոյգ է , իրենց արհամարհանաց ,  
 ատելութեան և նախապաշարմանց համե-  
 մատ , բայց այսու ամենայնիւ սոյն կարեւոր  
 խօսատուութեամբ վերջապէս հակառա-  
 կութենէ ազատ կրմեան : Յիսուս Քրիստոս  
 Պիլնիոսէ , Տակիրոսէ , Սուեաննէ և այլն ,  
 իրր մի մեծ մտք նկատուած է : Յետ մա-  
 մանակի կամք կրլինի տաճարներ կանգնել  
 նմա ՚ի Հսով , և նորա պատկերք կրտեանուի  
 հեթանոսական շատուածոց պատկերաց  
 կարգին կայսերաց պալատներուն մէջ :

Պարելի շէր որ մարդ չը գիտնաց թէ  
 քրիստոսն էից գոյութիւնն , որ կայսերու-  
 թեան երկրի բոլոր երեսը ծածկած էր ,  
 Յիսուսի Քրիստոսի , նորա հրաշից և պաշ-  
 տօնին հետ կապուած է , և թէ այն հրաշք-  
 ներն աւրանալ՝ կրնշանակէ գործերը կա-  
 մենալ առանց պատճառի : Ղլանն զի Յիսուս  
 իւր առաքեալներն , աշակերտներն և Հրե-  
 իցմէ մի քանիսն առ ինքն ձգեց մի միայն  
 հրաշքներով , և սորա , ըստ իւրեանց կար-  
 զի զուրիշներն ՚ի հաւատա րերին ապու-  
 չուցանելով նոցա սոյն հրաշից գոյութիւնը ,  
 Այսպէս սկսաւ Աւետարանաց ճշմարտու-

Թեան վերայ եղած աւանդութեան առաջին շղթայն, որ մինչև մեր օրերը շարունակաբար ամեն ժամանակաց մէջ հաստատուած գրոշմուած կը տեսէ :

Այլ սպշած մնացած չէ չորս Աւետարանաց նմանութեան վերայ որ ցոյց կուտայ թէ նոցա հեղինակները ճշմարիտ խօսած են, և իրողութիւնները տարբեր կերպիւ պատմելուն վերայ, որ կ'ապացուցանէ թէ իրարու հետ խորհրդակցած չեն զմարդիկ խաբելու համար : Աւ էր այսպիսի մի ամբարիշտ գաղափար պիտի կազմեն նոքա, Զայս անելով նոքա, ուրիշ բան տրած չըպիտի լինէին, բայց եթէ իրաւամբ սպասէին արհամարհանաց, ատելութեան, մահուան՝ իբր արդար պատիժ իրենց խաբերացութեան : Այ, նոքա չեն կամեցած խաբել զմարդիկ, կարդացէք Աւետարանները, չըպիտի գտնէք բնաւ նոցա մէջ մի խորգախ լեզու, մի խաբերաց խօսք : Ամեն ուրեք կարգ, պարզութիւն և համարձակութիւն . Յիսուսի գործերը պարզապէս մէջ կը բերեն . իւր հրաշքներն առանց յուլման հոգւոյ, և իւր մահն առանց սրամբտելու շրէից, Պիղատոսի և նոքա գահիճներու գէմ :

Եթէ նոքա չեն խորհիր իրենց տիրոջ

գործերը բարձրացրնել, ոչ ալ իրենց ան-  
 ձանց համար փառք կը խնդրեն. իրենց  
 ազխութիւնը, տկարութիւնը, նախանձը,  
 սխալանքը չեն ծածկեր. ոչ հարուստներն  
 եւ ոչ զօրաւոր մարդիկը կը շողբորդեն.  
 այլ մի սրբազան կրօնք կ'առաջարկեն հա-  
 մարձակագոյն և խիստ աներկիւղ յարատե-  
 ւութեամբ, առանց կեղծելու նորա խոր-  
 հրդաւորութիւնքը, առանց տկարացրնելու  
 նորա օրէնքները և առածները: Եւ եթէ  
 կամիք դարձեալ որ Աւետարանի սրտմու-  
 թիւնը շինծու եղած լինի. «Շինծու սրտ-  
 մութիւնն այսպէս չըլինիր, կը սրտասխանէ  
 Բուսոյ: Ստիրատոյ գործերն, որոց վերայ  
 ոչ որ կը տարակուսի, Յիսուսի գործոց չափ  
 հաստատուած չեն»: Այլ կ'ըստայ Առաք-  
 եալք Աւետարանի քարոզութենէն թող որ  
 բնաւ ամենեւին ժամանակաւոր մի շահ  
 չը տեսան, այլ և ամեն տեսակ վիշտեր  
 կրեցին, շատերն իրենց կեանքն ալ վերայ  
 տուին, հաստատելու համար նորա մէջ  
 սրբունակուած հրաշից ճշմարտութիւնը:  
 Հարկ է եզրակացրնել Պասկալայ հետ.  
 «Յօժարակամ հաւատ կ'ընծայեմ այն սրտ-  
 մութեանց, որոց վկաները թողուցած են  
 խեղդամահ առնել զիրենք»:

Աւետարանաց սպարունակած հրապարակային վկայութիւնք զոր Առաքեալք առին Յիսուսի վարդապետութեան եւ սքանչելեաց, հաստատելէ յետոյ, կը մնայ մեզ ապացուցանել թէ սորա առ մեզ հասանաւանց այլայլութեան, խօսքերնիս այն թեթեւ զանազանութեանց մասին չէ, որ գրքի մի խտիութեան չեն մնասեր, և որ հարկաւորապէս կը սպրդին գրուածոց մէջ որչափ ալ երկիւղածութեամբ պահպանուին, միայն զայս կը պնդեմք որ Աւետարանագիրք ոչ մի փոփոխութիւն կրեցին որ կարենայ պատմութեան ճշմարտութեանն և վարդապետութեան սրբութեանը մնասել, եւ թէ՛ նկատմամբ այն իրաց, որ կրօնքի ապացոյցներու և բուն էութեան նպաստաւոր է, այնպէս ունիմք՝ ինչպէս որ ելած են Առաքելոց ձեռքէն :

Արդարեւ բրիստոնեայք զԱւետարանները կը նկատեն իբր գերազանց մատեան, Նորա մէջ կը գտնեն Յիսուսի կեանքը, իւր վսեմ հրահանգներն, անհամար հրաշքները, միով բանիւ, կրօնքը, և յարգեն մինչև անգամ խօսքերն որպէս ՚ի Հոգւոյն Արքայ ներշնչեալ: Նոցա պահպանութիւնք հզօր

կերպով կը նպաստէ հաւատացելոց բարե-  
 պաշտութեան . այսպէս՝ Առաքելոց ձեռ-  
 քէ երկիր զածութեամբ ընդունելէ յետոյ ,  
 սուրբ խորհուրդը մատակարարելու միջոցին  
 կը կարգացին . աներու մէջ նոցա վերայ կը  
 խորհրդածելին , նոցա մէջ կը հետադռօտելին  
 հաւատոյ մխիթարութիւններն և վարույ  
 ու բարույ կանոնները : Քրիստոնեայք ան-  
 կէ կը ծծելին կ'առնուին իրենց ցո՛ր հալա-  
 ծանաց ժամանակ . կը մեռնելին՝ քան թէ  
 կը թողուին զանոնք որ հեթանոսաց ձեռաց  
 մէջ պղծուին : Արդ , Աւետարանաց համար  
 եղած այս մեծարանքն , այս սէրն և այս  
 յարգանքը ցոյց կուտան մեզ՝ թէ մեծ հոգ  
 և խնամք կը տանելին որ ամեն կերպ այլոյ-  
 լութենէ զանոնք պահպանեն . ո՞վ կարող  
 էր ուրեմն խարդախել զանոնք մարդոց առ-  
 ջեւ , որ պաշտպանելու համար նոյն գրքերը՝  
 մահն աչքերնին կ'առնուին :

Բայց եթէ հաւատացեալք խաբուած  
 անգամ լինելին , սուրբ հարք , ջատագովք  
 և եպիսկոպոսունք՝ եղած ամբարիշտ սխալ-  
 մունքը կը նշանակելին : Սոքա հաւատարիմ  
 պահապան գոյով կրօնքի և ամենաթանկ  
 ու պատուական յիշատակարանաց , մեծ մա-  
 սերնին մարտիրոսական պսակի փափաքելով ,  
 պարտաւորեալ լինելով Աւետարաններն

ուսումնասիրել, մեկնել ժողովրդեան եւ զաննել նոցա մէջ հերետիկոսաց դատապարտութիւնը, միշտ ձեռաց մէջ կը կրէին զանոնք, իրենց մտածութեան առարկայ կ'անէին, եւ իրենց սրտին և մտաց մէջ կը դրոշմէին. այս ասածներուս համոզուելու համար, պէտք է նոցա գրեանքն աչքէ անցընէք :

Գարձեալ, հերետիկոսք ոմանք, հեթանոսք, Հրեայք կամ քրիստոնեայք եթէ կարացած լինէին Աւետարանաց մի քանի օրինակներն այլափոխել, մեծաթիւ մասը միշտ ազատ պիտի մնար : Առաքեալք զանոնք գրելնէն անմիջապէս յետոյ շատ օրինակներ առնուեցան այլ և այլ եկեղեցեաց և հաւատացելոց համար, ամենքն ալ սաստիկ փափաքող այսպիսի մի անգին գանձ ձեռք բերելու : Արօնքը որչափ կը տարածուէր, նոյնչափ եւս հարկ կը լինէր օրինակները բաղմնապատկել, և ըստ որում քրիստոնէութիւնն ամեն երկիր կը մտնէր, նորեկ խաչապաշտից գործածութեան համար Աւետարանագիրք կը թարգմանուէին : Ոչ մի գիրք այսչափ ձանջողուած և այսչափ տարածուած է : Արդ, մտաց դէմ է կարծել թէ՛ այսքան անհամար թուով գրուած և այսքան լեզուաց թարգմանուած օրինակներն միան.



գամայն փոխուած լինին . որք այնքան գաւառաց և այնքան ժողովրդոց քով պահուած են , որոց մեծ մասն իրարու հետ յարաբերութիւն անգամ չունին :

Եթէ , արհամարհելով այսչափ ապացոյցները , անհաւատք դարձեալ յամառութեամբ պնդելու լինին թէ Աւետարանագիրք այլափոխուած են , թող ուրեմն ցոյց տան որ ժամանակի մէջ պատահած է այդ . թող ցոյց տան թէ Առաքեալք ինչպէս կը համբերէին եթէ իրենց սղջութեանը լինէր . ինչպէս իրենցմէ յետոյ նոցա աշակերտք և եպիսկոպոսուներ կը լռէին . ինչպէս կարելի էր բոլոր հին օրինակները ջնջել և նորեր փոխանակել ամեն տեղ , լի անձանօթ գործերով եւ վարդապետութեամբ . ինչպէս հերետիկոսք , հեթանոսք , Հրեայք , հերձուածողք որ և է մարդոց կողմանէ խարդախուած սոյն գրքերը կը թողուին որ տարածուին : Թող այս տեղ մեք մեր դաւանած հաւատոյն տէրն լինիմք , որ հիմնեալ է քրիստոնէից տուած յարգանաց , Եկեղեցւոյ հաստատուն աւանդութեան , հերետիկոսաց և ճշմարիտ կրօնքի միւս թշնամեաց լռութեան վերայ . և հաստատենք առաւել քան զառաւել մեր հաւատքը սոյն պարզ ապացոյցով . « Եթէ այսօրեայ օրս մի մարդ

կամենար սյըլտիտիսել Աւետարանները, անհնարին իրի ձեռք զարկած կը լինէր : Անհնարին երեկ, անհնարին եղաւ յառաջ, ուրեմն նոյնն եղաւ ամեն դարու մէջ, ապացոյցը մի և նոյն է " : (Ֆաւդէա) : Աւրեմն Աւետարանագիրք արժանահաւառ ատեմեան և վաւերականութեան վերայ կ'աւելցըրնեն նաեւ հարազատութիւնը, ուրեմն անաչառագոյն քննադատութեան պահանջած ճշմարտութեան բոլոր հանգամանքն ունին <sup>(1)</sup> : Վերջացընեմք Յ. Յ. Բուսոյի նա գեղեցիկ հատուածով. « Կը խոստովանիմ ձեզ որ Ս. Գրոց վսեմութիւնը զիս կ'աւելցըրնէ : Աւետարանի սրբութիւնը իմ սրբտիս կը խօսի : Տեսէք փիլիսոսիացից գրեանքը բոլոր իրենց պայծառութեամբը, քանի՛ փոքր են նորա քով : Կարելի՞ է որ այսպիսի մի վսեմ միանգամայն և պարզ գիրք մարդոց գործ եղած լինի : Կարելի՞ է որ նա, որոց պատմութիւնը կ'անէ, ինքն եւս մի մարդ եղած լինի : Յնորամիտ մարդոց և փառասէր ազանդաւորի խօսուածքի ձեւ է այս " :

« Ասեմք թէ Աւետարանի պատմութիւնը ըստ հաճոյս հնարուած է : Բարեկամ, այս-

(1) Գիտելի է որ Աւետարանաց վաւերականութեան, արժանահաւատութեան և հարազատութեան ապացոյցք թէ հին և թէ նոր կտակարանաց կը ծառայեն :

պէս հնարել չը լինիր , և Սոկրատոսը գործերն , որոց մասին ոչ սք կը տարակուսի , Յիսուսի Քրիստոսի գործոց շարքի վկայուած հաստատուած չեն : Ստոյգն նայելով , այդ կերպով , գժուարութիւնն ոչ թէ ( հնարուած է ըսելով ) կը ջնջուի , այլ մենք անկէ կը խուսենք : Աւելի հաւատարի է , թէ շատ մը մարդիկ միաբանած ըլլան այս Ս . Գիրքը շարագրելու , քան զայն որ առանձին մէկը պատրաստած ըլլայ զայն միայն մի մարդոց տուած նիւթովը յօրինուած : Եւ աւետարանը ունի այնպիսի մեծ , աչքի զարնող եւ կատարելապէս նմանը չըլլալիք ճշմարտութեան հանգամանքներ , որ հնարողը քան զնայն ինքն զիւցաղնն աւելի զարմանալի պիտի լինէր : » ( Էմիլ . Հո . Ա . ) :

Յիսուսի Քրիստոսի աստուածութեան ապացոյցք :  
— Նորա հրաշքներն և մարգարեութիւնքը :

**Ա**ԻԵՏԱՐԱՆԱՅ ճշմարտութիւնն ապացուցինք , որոց մէջ պատմուած գործոց կարգին կը գտնեմք հրաշքներ և մարգարէութիւնք . սոյն հրաշքներով և սոյն մարգարէութիւններով ցոյց կուտամք Յիսուսի Քրիստոսի պաշտօնէութեան աստուածային լինելը :

Յիսուս հաղիւ սկսաւ իւր պաշտօնին  
 ընթացքն և ահա Յուդայի ամբողջ երկրին  
 մէջ շրջեցաւ՝ սքանչելի հրաշքներ գործե-  
 լով ամեն ուրեք : Հիւանդները կը բժշկէր ,  
 կուրաց աչքերը կը բանար , խլից լսել եւ  
 համերց խօսիլ կուտայր , եւ անդամալոյծ-  
 ները կը քալեցընէր . երեք մեռեալ ողջնե-  
 ցուց , Ղազարոսը՝ որ երեք օրից ՚ի վեր  
 թաղուած էր և սկսած էր հօտիլ : Ո՛վ որ  
 կ'ուրանայ թէ Աւետարանք սքանչելի գոր-  
 ծեր շնն պատմեր , սպուշ կը համարուի :  
 Ո՞չք են սպաքէն ճշմարիտ հրաշքներ ,  
 եթէ ոչ անոյս հիւանդներ բժշկել , հինգ  
 հացով բազմաթիւ անօթի մարդիկ կշտացը-  
 նել , մեռելներ յարուցանել . սորա կամ  
 հրաշք են և կամ բնաւ տեղի ունեցած շնն :

Չայս գիտնալէ յետոյ թող ամեն սք  
 դատում անէ Աեղսոսի պարզմտութեան  
 վերայ , որ այս գործերն ընդունելով հան-  
 դերձ՝ իւր գրոց մէջ յիշելէ յետոյ կ'ատէ  
 լրջութեամբ . « Ի՛հ , լաւ , չը կայ ասոնց  
 մէջ մի բան որ շաղակրատ բժիշկներն եւ  
 ձեռնածուք ամեն օր չը գործեն » . նոյնպէս  
 Հերովիլէսի վերայ , որ քրիստոնեայները կը  
 ծաղրէր Յիսուսի գործած հրաշքները մեծ  
 բանի տեղ դնելնուն , կուրաց աչքը բանա-  
 լուն եւ ուրիշ սորա նման սքանչելիքներ

գործելուէ համար գովարանելուն վերայ ,  
 թող դատեն Յուլիանոս կայսեր սա աչքի  
 զարնող խոստովանանքը . « Յիսուս իւր կե-  
 նաց մէջ ոչ ինչ նշանաւոր գործ արաւ ,  
 միայն եթէ կաղերն ու կոյրերը բժշկելը  
 մեծ հրաշքի տեղ չը գրուի » : Աւ ուրիշ  
 ի՞նչ հրաշք կը կամենային որ գործէր Յի-  
 սուս եթէ սոքա հրաշք չեն :

Աւրեմն Տուսոյ կը մեղանչէ երբ կ'ասէ  
 թէ մեռելոյ մի յարութիւն առնելոյն չեմ  
 հաւատար թէեւ Քարիզու բոլոր բնակիչք  
 վկայելու լինին , որովհետեւ վկայք ընդ-  
 հանրապէս մի և նոյն կիրքերն , մի և նոյն  
 շահերն չ'աւնին , և ոչ իսկ զիրար կը ճան-  
 չեն . կան շատերն որք զիրար իսկ չեն տե-  
 սած , ուրեմն կարելի չէ որ մէջերնին գաղտ  
 միարանութիւն եղած լինի : Քարիզու նման  
 քաղաքի մէջ այս օրինակ մի վատ միաբա-  
 նութիւն առանց իրաւանց , առանց շահու ,  
 առանց սլատճառի իրարու անձանօթ մտր-  
 դոց մէջ աւելի դժուար է հաւատալ քան  
 մեռելոյ մի յարութեան : Յարութիւնը  
 բնական աշխարհի օրինաց դէմ է , այս միա-  
 բանութիւնը բարոյական աշխարհի օրինաց  
 դէմ է : Հարկ է մի հրաշք թէ միայն և թէ  
 միւսին համար , սա տարբերութեամբ որ  
 մին քան զմիւսը իրստ մեծ լինի : Աստուած

իւր բարութիւնը յայանելու կամ մի մեծ ճշմարտութիւն կնքելու համար մի մեռեալ կը յարուցանէ, այս աեղ անհուն կարողութիւն մի կը ճանչեմ. բայց թէ Աստուած ընկերութեան կարգը տակնուվերայ կ'անէ, թէ բարոյական պատճառաց գործողութիւնն առ կախ կը թողու, թէ զմարդիկ կը բանադատէ՝ սքանչելի մի տարւորութեամբ, իրենց բոլոր սովորական ընթացից կանոնները դրժելու, և այս մի միայն մէկ մասնաւոր անձն խաբելու համար. սորա մէջ արդարեւ կը ճանչեմ իւր անհուն կարողութիւնը, բայց բնաւ չեմ տեսներ իրեն սոյն գործողութեանց մէջ իմաստութիւնն առաջնորդ. ուրեմն աւելի հնարաւոր է որ մի մեռեալ յարութիւն առնու, քան թէ բոլոր Բարիդ զիս խաբէ սոյն հրաշից մասին:

Յիսուս մարգարէութիւններ եւս արաւ. ամենէն աւելի հաշակուածն է իւր մահուան, իւր յարութեան, Առաքելոց բարողութեան յաջողութեանն, Երուսաղէմի աւերման վերայ արածներն, եւ պատմութիւնը մեզ ցոյց կուտայ սոցա բոլորին կատարուիլը: Արդ, սոյն հրաշքներն ինչպէս և մարգարէութիւնը կ'ասպացուցանեն նորա պաշտօնին աստուածային լինելը. վասն զի Աստուծոյ անունը կանչելով արած է,

կամ մանաւանդ նոյն ինքն Աստուած լինել-  
լով արաւ, ուրեմն իրապէս Աստուած է,  
փասն զի մտաց գէմ է որ Աստուած օգնէ  
և թոյլատրէ խարեքացութեան: Սոյնպէս  
Հրեայք և Փարիսեցիք եւս կը ճանչէին Յի-  
սուսի հրաշագործութիւնները, որ ցոյց  
կուտայ նորա զօրութիւնն և իւր թշնամեաց  
անկարողութիւնն որով չը զօրէին երկբայու-  
թեան տակ ձգել զանոնք: Արօնքի բոլոր հե-  
տեւութիւնը սոյն ապացոյցը կը հաստատէ:

Նորա չարչարանաց, մահուան և յարութեան սրանշէլերը:

Թէ Յիսուս ֆրիստոս հրաշքներ գոր-  
ծեց, և է Աստուած, այս հասկանալի է,  
բայց թէ չարչարեցաւ և մեռաւ, այս չար-  
չարանքն եւ այս մահ իբր ակարութիւն,  
իբր նաւաստութիւն կը նկատուի: Այսու-  
ամենայնիւ իւր չարչարանաց պատմութիւնը  
լի է հրաշիւք և մարգարէութեամբք, եւ  
այնու ցոյց առաւ նա իւր աստուածու-  
թիւնը մինչեւ այն բաներուն մէջ որք  
աւելի կը մթազնէին զայն: Եւ յիրաւի,  
ինչպէս կ'ասէ Բուրգալու, մի մարդ՝ որ  
կը մեռնի իւր մահուան հանգամանքները  
ամենայն ճշգութեամբ գուշակելէն յետոյ.  
մի մարդ՝ որ կը մեռնի արգեամբ հրաշքներ  
գործելով, որ ցուցընէ թէ իւր մահուան

մէջ ամեն ինչ աստուածային է . մի մարդ՝ որոյ մահը, մի լաւ մտածելով, ամենէն մեծ հրաշքն է . վերջապէս մի մարդ՝ որ անարդ մահուանէ ամենաբարձր փառաց կը հասնի, եւ որ Խաչի վերայ Հոգին աւանդելով, կը յաղթանակէ նոյն իսկ Խաչիւ աշխարհիս անհաւատութեան, ո՞չ ապաքէն է մարդ մի որ կը մեռնի որպէս Աստուած, եւ կամ, եթէ կը հաճիք, որպէս Աստուածամարդ . Արդ, այս է Յիսուսի Քրիստոսի չարչարանաց պատմութիւնը : (Կարդացէք Աւետարանը) :

Յիսուս յարութեամբ հաստատեց իւր աստուածութիւնը . իւր մահուանէ շատ յառաջ նախագուշակած էր զայն . ՚ի կեանս կոչուեցաւ իւր յատուկ զօրութեամբ, ինչ պէս որ մեռած էր իւր յատուկ կամքով :

Յիսուս յարեաւ . աւասիկ իրողութիւն որոյ ասոցոյցք յայանի են : Հաստատող վկայք են ականատեսս, թուաւոր, անբսադիւտ, որք չարչարեցան եւ մեռան իսկ զայն հաստատելու համար, չը կայ արդարեւ պատմական մի գործ որ ասկէ աւելի ստուգութիւն ունենայ :

Յիսուսի յարութեան վկայողք ականատեսս անձինք են : Եւ ստոյգ է որ ոչ ոք կը տարակուսէր Յիսուսի մահուան վերայ .



Հրէայք կը փառաւորուէին նորա չարչարա-  
նաց վերայ : Երեք աւուր յետոյ Առաքեալք  
ողջ առողջ կը տեսնեն զնա . քառասուն օր  
իրենց մօտ կը մնայ , զինքը ցոյց կուտայ  
նոցա , կը շօշափի , եւ կը տեսնեն որ առ  
աչօք մարմին չէ : կը խօսակցի նոցա հետ ,  
կ'ուտէ , կ'ուսուցանէ , կը մօտիմարէ և կը  
պատրաստէ զիրենք երթալ յաշխարհ քա-  
րողելու և ՚ի ճշմարիտ կրօնս հրաւիրելու  
զմարդիկ : Առաքեալք , սուրբ կանայք ,  
հինգ հարիւրէ աւելի աշակերտք քառաս-  
նօրեայ միջոցի մէջ կը տեսնեն զնա :

Վկայողք անսողիւտ են , նոքա չարչա-  
րեցան կամ մեռան Յիսուսի յարութիւնը  
հաստատելու համար : Հրէայք ամենեւին  
Առաքելոց վարուցն ընթացից դէմ յարձա-  
կում չարին , մեղադրանք չբտուին : Նոքա  
ցոյց տուին խիստ սրտաշարժ համարձակու-  
թիւն . խիստ ազնիւ անշահասիրութիւն .  
խիստ անյողթելի հաստատամտութիւն , և  
գերութանչելի պարզմտութեան վերայ դիւ-  
ցազնահան մի արիութիւն աւելցրնելով .  
առաւել զմահ յանձն կ'առնուն քան թէ  
Յիսուսի յարութիւնն ուրանալ . հրաշք մի  
որ հիմն է իրենց քարոզութեան (1) :

(1) Երեք բան կան անհաւատացի : Թէեւ իրօք եղած  
են : Անհաւատացի է թէ Քրիստոս յարութիւն առած լինի

Պիտի գանուին ասողք՝ թէ Առաքեալք Յիսուսի յարութիւնն իբր ստոյգ եղած ցոյց տուին, թէ իրենք նորա մարմինը գուցայն եւ յետոյ կամեցան հաւատացընել թէ Յիսուս յարեաւ. ինչ, այն վախկտու տկար մարդիկը, որք առ ահի Հրէից իրենց տիրոջ չարչարանաց միջոցին թողուցին զինքն ու փախան. այն մարդիկն երեք աւուր յետոյ արտաքոյ կարգի արիութեամբ զինուած, ոչ մի երկիւղ բանի տեղ գնելով, խիստ ու անաչառ սրահապանաց զէմ կը ճակատին սինակոկայի կնքով կնքուած տասպանի մէջ եղած մեռեալ մարմինը վերցընել

մարմնով եւ յերկինս համբարձեալ մարմնով: Անհաւատացի ե որ բոլոր աշխարհ հաւատացած լինի մի չը հաւատալի իրի: Անհաւատացի է նոյնպէս որ աննշան, յետին ուամիկ, փոքրութիւ եւ ազեա մարդիկ կարողացած լինին ազգուապէս համոզել զաշխարհ այնպիսի իրողութեամբ, որ անհաւատացի է: մարդկորեն խօսելով զիտուն մարդոց անգամ: Այս ասած երեք անհաւատացիքներէ սորա շէն կամենար առաջնոյն հաւատալ, բայց կրտսիցին հաւատալ երկրորդին, այն՝ զոր չը կարեն զիտնալ թէ ինչպէս յաջողած է, եթէ չը հաւատան երրորդին: Քրիստոսի ճշմարտա յարութիւնն եւ նորա նոյն մարմնով՝ սրով յարեաւ, յերկինս համբարձեալն, այս բանս արզեն կը հաւատացուի եւ կը քարոզի բոլոր աշխարհիս մէջ. եթէ անհաւատացի է, էր ուրեմն ամեն ուրեք հաւաս կ'ընծայի: Է՞ր չը հաւատան զեռ փոքրութիւ կամակորներ, երբ աշխարհ ամենոյն իւր հաւանութիւնք տուած է արզեն: (Ս. Ա. գ. ստ):

տանեւոյ Համար : Բայց զիցուք թէ Առաքեալք մի այսպիսի դժուարին գործ փորձելու ելած լինին , կարելի է որ յաջողընելին : Ի՞նչպէս պիտի կարենային խարել պահապանաց հսկողութիւնը , և մի ահագին քարով ծածկուած գերեզմանը բանալ : — Բայց իրողութիւնը հաստատ է . Հրեայք կ'ասեն թէ մարմինը գողցուեցաւ . պահապանք կը վկայեն թէ՛ գիշեր ժամանակ եղաւ այս բանը երբ մեք քուն էաք : — Եթէ պահապանք քուն էին , ի՞նչպէս կարեն վկայել մարմինը գողցուելուն . նաև , էր Հրեայք չը հրամայեցին որ այս բանիս համար քրննութիւն բացուի ամենայն խստութեամբ : Յատեան կը կանչեն զառաքեալները . էր չեն ասեր նոցա . Պէտք է անպատճառ որ մարմինը գտնուի . այս ոճրին պատիժը պիտի կրէք : Աչ այսպէս , այլ անորոշ ճապաղ հարցումներ կ'անեն , կ'արդիլեն զանանք որ յարութեան մասին ոչ ինչ խօսին , ոչ ինչ քարոզեն . և սպառնալով ետ կը ճամբեն : Այսպէս կը դատուին դատական ատենի կնիքը խորտակելու յանցանօք ամբաստանեալ մարդիկը , կառավարութեան պահապանները նեղը խօթող և այս կերպով ամբողջ մի ազգի վերայ աստուածասպանութեան սոսկալի յանցանք դնելու իրաւունք

որանոց սճրագործները . և պահապաններն՝  
որք սասկի կերան սուտ խօսելու համար  
թէ քնացած էինք երբ այս իրողութիւնը  
պատահեցաւ . էր չը պատժուեցան ինչպէս  
որ արժանի էին այսպիսի մի ծանր յանցա-  
նաց համար . և ոչ ամենափոքր յանդիմա-  
նութիւն կ'ընդունին .

Յետ ամենայնի . ի՞նչ օգուտ պիտի լինէր  
Առաքելոց մարմինը գողնալով , մի այսպիսի  
անհեթեթ խարեբայութիւնը : Հրէից կամքն  
այս էր որ ցոյց տան թէ՛ Առաքելոյք զաշ-  
խարհ խարելու համար միտքանամ են իրենց  
մէջ , եւ յաջողած են . Տասներկու խեղճ  
ողորմելի արարածներ , որք իբր ազէտք  
կը յանդիմանուին , կարողացան լինին այս-  
պիսի մի լու կապակցեալ եւ այսպիսի ըն-  
դարձակ մի դաղանի հնարք շինել շիակել  
և ՚ի գործ դնել : Բայց սասի ի՞նչ բարիք  
պիտի ստանային . Հրէից ատելութիւնը ,  
մահուան ստուգութիւնը , աշխարհի ար-  
համարհանքն եթէ խարդախութիւնն իմա-  
ցուէր , ամենասոսկալի տանջանքները ,  
Աւելի պարզ չէ՞ ասել , որ եթէ Յիսուս  
խարեբայ որ լինէր . Առաքելոյք տեսնելով  
որ երբորդ օրը չ'ողջննար , ինչպէս որ նա-  
խագուշակած էր իրենց , կը թողութիւն զնա ,  
իրենց առջի կենաց ընթացքը ձեռք կ'առ-

նուին, Հրէից գիտաց կ'ելնէին, կը խոստա-  
վանէին նոցա՝ թէ Յիսուս խաբամ էր զե-  
րենք և թէ կը ճանչեն իրենց սխալմունքը :

« **Չէ** կարելի տարակուսիլ, կ'ասէ  
Տը-Ամենէ, որ Առաքեալը վերջին աստիճան  
դժուարութիւն կրամ չը լինին Յիսուսի  
յարութեան հաւատալու մասին, Չիրենք  
համոզելու համար պէտք եղաւ ստուգել  
զայն իրենց զգայարանքով, որ տեսնեն,  
լսեն եւ ձեռք շօշափեն իրենց Փրկիչը,  
ուրեմն նորա ցնորամիտ և երազատես մար-  
դիկ չէին: Չէ տարակուսելի նոցա հաստա-  
տամտութիւնք եւ ոչ անկեղծ հաւատքը  
զկնի տեսնելու, լսելու և շօշափելու Յի-  
սուսը, յազմողն գերեզմանի, որովհետեւ  
նորա յարութեան ճշմարտութիւնք վկայե-  
լու համար ամենքն ալ մեռան, Աւրեմն  
խաբերաներ չէին, Արդ հարցուցէք բոլոր  
աշխարհի, եթէ տասներկու վկաներ, Պո-  
զրոս Առաքելոյ հետ խօսիմք, եթէ հինգ  
հարիւր վկաներ, որք չը կարեն կասկածուիլ  
ոչ իբր ցնորամիտ, ոչ իբր խաբերաց, կը  
հաւատացուին իբր վկայելու լինին թէ  
ու չի ու շով քննելէ և քառասուն որ կրկնելէ  
յետոյ՝ տեսան, լսեցին, շօշափեցին, մէկ  
խօսքով՝ ճանչեցին իրենց ամեն զգայարանք-  
ներով այն մարդն, որոյ հետ շատ տարիներ

ընտանեքար ապրած էին : Հարցուցէք թէ այս վիաները կարելի է որ խարուին թէ ցնորք մի իբր իրական մարմին բմբռնելով, թէ ուրիշ մի մարդ այն անձին տեղ որոյ հեա կենցաղավարած էին, և որ տակաւին կը կրէր իւր ստից, ձեռաց, խոցուած կողին վերայ նոյնը լինելուն նշանները, որոյ անկարելի է նմանութիւնն ունենալ, անկարելի է չը ճանչցուիլ : Անտարակոյս սա սրտասխանը տայ սխալի բոլոր աշխարհի, թէ հարկաւորապէս կամ պէտք է հաւատ ընծայել սոյն վկայից եւ կամ հերքել ամեն տեսակ վկայութիւն : Աւրեմն եթէ կամք չըլինիր վկայութիւնը ջնջելով՝ բոլոր ստուգութեան հիմն ալ քանդել, կը ստորաւորիմք ընդունիլ թէ Յիսուս յարեաւ, և թէ ասկէ աւելի ստուգագոյն իրողութիւն չը լինիր ո՛ր ( Հատ . 9 . ) :

Սոյն հատուածը աչքէ անցուցած ժամանակնիս դիտողութիւն անեմք՝ որ ասկէ աւելի մի ճշգրտագոյն իր չեմք կարող որոնել, դէմ դնելու համար մեծանուն հեղինակիս դրութեան, այն ստուգութեան վերայ զոր կ'ընծայեմք զգայարանաց յարաբերութեան, ներքին զգացմանց, փաստերու յայանութեան և ուժգնութեան :

Հարցումն կը լինի թէ՛ էր Յիսուս իւր

աշակերտաց միայն երեւցաւ . իւր մահն հրապարակաւ եղաւ , նոյնպէս պէտք էր իւր յարութիւնն ալ լինել : — Բայց Աստուած միթէ պարտաւորեալ է անդադար հրաշքնէր գործել , երբ հան արդէն ըստ բաւաւ հանին : Պարձեալ , եթէ յարութիւնը հրապարակաւ լինէր , պիտի դառնային 'ի հաւատս աւելի Հրեայք : Ներելի է մեզ երկբայիլ . Յիսուս Քրիստոս մեծ սքանչելիքներ արած էր , զոր նոքա իրենց յամառութեամբը դիւայ կ'ընծայէին : — Բայց կարելի է որ սոյն հրաշքով դառնային : Կարելի է . բայց Աստուած պարտաւոր չէր նոցա սոյն բանն անել . յարութեան գործն ըստ բաւահանին ապացուցուած էր Առաքելոց ձեռօք և նոցա գործած հրաշքներով . Աստուծոյ արդարութիւնը քան զայն աւելին գործելու պարտաւոր չէր :

Յիսուսի աստուածութեան նպաստաւոր եղող միւս ապացոյցներու մասին , ինչպէս են կրօնքի ծաւալումը , Պօղոս Առաքելոյ դարձը , անհամար նահատակաց արիւթիւնը , քրիստոնէութեան անփոփոխ եւ յարատեւ հաստատութիւնը , և այլն . սոցա ամենուն տեղ բաւական կը համարիմք Հրէից ներկայ վիճակի փաստը (1) :

(1) Չորրորդ յօդուածիս մէջ նոր ձեռնարկութիւն նոր

Հրեկց ջերուցան լինելը և պատիժները :

Աստուածային պատգամաց համեմատ Հրեայք մնացած են առանց տաճարի , առանց խորանի , առանց զոհի աշխարհիս ամեն կողմ ցրուած կը թափառին , աչքէ ընկած բոլոր ազգերէ : Եգիպտացին , Քաբէլացին , Մարաստանցին , Պարսիկը , Յայնը , Հայը , Հռոմայեցին ամենքն ալ շատ դարերէ 'ի վեր ժողովրդոց խռան մէջ խառնուած են այնպէս որ չեն կարելի ճանչցուիլ : Միայն Հրեայն է որ ուրիշ ազգաց հետ չը շաղուիր եւ ամեն տեղ կը ճանչցուի : Տեսնելով այս ազգն որ միշտ կը ցրուի և միշտ կը փափարի իբր մի ազգ միաւորիլ , չը կարծուիր լսել իրենց աստուածասպան հարց եւ իրենց սերնդին դէմ արտասանած սա սոսկալի անէճքք . Արիւն դորս 'ի վերայ մեր և , 'ի վերայ որդւոց մերոց : Ոչ ապաքէն Նախախնամութեան կողմանէ է որ սոյն հրաշքը միշտ կը կենայ , որ ամեն որ համոզուի քրիստոսնէութեան աստուածային կրօնք լինելուն , և չը թողուլ անհաւատից որ զիրենք անմեղադիր կացընեն :

---

Փաստ պիտի հանուին Յիսուսի Քրիստոսի Աստուած լինելու հաւատոյ մէջն զոր դաւանած են երեք զարուց մեծ հանճարոյ տեր մարգիկ :



Մեծի դիտողութեան արժանի է արդարեւ, որ երբ ներկայ դարուս լուսաւորութիւնն և քաղաքականութիւնը տեսնելով կը կարծուէր թերեւս որ սոյն նշովից դատաւճիտը խաբաւ ջնջուած, կամ զգալապէս տկարացած պէտք է լինի, որով և կը տկարանայր Աւետարանի վաւերականութեան ճշմարտութիւնը, և Հրեայք՝ ինչպէս Յւրոպիոյ՝ նոյն և Ասիոյ մէջ դատած լինին իրենց խաղաղութիւնն և ընդհանուր մարդկութեան վայելած յարգն ու հանգրստութիւնը, թէեւ միշտ տարաշխարհիկ, եւ ահա յանկարծ կը լուռի Աուսիոյ մէջ իրենց կրած հալածանքն ու հարստահարութիւնը և մասամբ մի եւս Վերմանիոյ մէջ, Հաղար ինն հարիւր տարին կը մտանայ և սոց վճիտը դեռ գործադրութեան մէջ է, և կարող է ամեն ցեղ անհաւատից ուսուցանել անհերքելի ճշմարտութիւնն Աւետարանի ամեն մի խօսքերուն և պատմած իրողութեանց :

Չեւք անուժք կրկին մեր հարցմանց շարունակութիւնը : (Տէ՛ս յէրէ՛ս 73) :

Գ. Հարցումն. Արժեքը հարկաւոր է, պարտաւորի՞չ է :

Սոյն հարցն ինձ՝ կը թուի, կ'ատել ջլտա, թէ հետեւեալները կը պարունակէ :

Ա. Մարդս յեւ աստի կենաց յոյս ունի՞ մի  
 երջանեկութեան : Բ. Սոյն երջանեկութեան  
 բաղձալն եւ զայն ձեռք բերելու համար  
 աշխատիլը լա՞ւ է , իրաւացի՞ է , հարկաւոր  
 է : Գ. Այս բանիս համար Աստուծոյ մեղ  
 տուած միակ միջոց կրօնքն է : Դ. Աստուած  
 կարէ՞ր կամ պարտ էր տալ մարդոյ մի ուրիշ  
 աւելի դիւրին միջոց : Ե. Կրօնքին անհա  
 ւատարիմ եղող անձը , առաքինութիւնն  
 այս աշխարհիս մէջ գործադրուելէն պատ  
 ճառուած ամեն ցաւերէն աւելի մի մեծ  
 թշուառութիւն կրելու երկիւղ ունի :

Կը տեսնեմք որ չորրորդ հարցը տեղի  
 չը պիտի ունենայ , վասն զի , թէ եւ ապա  
 ցուցուելու լինէր թէ Աստուած կարէր  
 և պարտ էր աւելի դիւրին միջոց մի տալ ,  
 բնաւ չէր հետեւեր թէ իւր արդի կամացս  
 յարմարիլ ոչ ինչ օգուտ ունեցած լինի մեղ  
 Այսու ամենայնիւ մի աստուած միայն դա  
 ւանող անկրօնք շատ անգամ կը կրկնեն ,  
 իբր թէ իրաւունք է որ մարդ արդէն ու  
 նեցածը ձեռքէ հանէ , ճիշդ նորա համար  
 որ չունի եւ չէ կարելի ունենալ ինչ որ  
 պէտք է :

Արդ , կրօնքի ճշմարտութենէ և հար  
 կաւորութենէ աւելի ոչ ինչ կայ անվիճա  
 բանելի , մարդկային ազգի ձայնն այս մասին

համամիտ է . և եթէ հարկաւոր չէ կրօնքը , աշխարհ ուրեմն առ եղծուած մի է սոսկալի , միտքը կոյր է . Աստուած չիք , կամ չէ նա Աստուած , որ մի և նոյն բանն է :

Արօնքը յԱստուծոյ կուգայ , ուրեմն հարկաւոր է այն . ամեն մարդիկ հաւատարեցած են այսմ , և եթէ նորա խաբուած էին , չը կայ ուրիշ կարելի ստուգութիւն մը :

Գ . Հարցումն . Ուստի՞ յառաջ կուգայ կրօնքի բազմակերպութիւնը :

Արօնքի բազմակերպութիւնը ընդհանրապէս սրարտիմք մի և նոյն պատճառաց վերադրել . յորոց կը ծագին մեր ամեն սխալմունքը . ճշմարտութիւնը կարէ մուցուիլ , այլափոխուիլ , քիչ շատ աւրուիլ ներքին և արտաքին անհուն պարագայից համեմատ , զորս հարկ է աստ բացատրել :

Հաւանական է որ հեթանոսութեան մէջ չը կայ մի մոլորութիւն , որքան ալ անհեթեթ այլանդակ երեւի մեզ այն , որոյ մի զուտ և ճշմարիտ ծագումը չը գանուի քրիստոնէութեան մի որ և է վարդապետութեան մէջ :

Արօնից բազմակերպութեան մասնաւոր պատճառներն եղած են լեզուաց պէսպիսութիւնը , անգիր աւանդութեան անբաւականութիւնը , մարդոց բոլոր աշխարհիս

երեւոր ցրուիր, հռչակաւոր անձանց դէմ  
երախտագիտութիւնն և այլն,

Ե. Հարցումն. Ա՞յն կրօնք լա՞ն են <sup>(1)</sup> :

Աստուծա՛յ ծագումն առնող կրօնքն  
և եթէ կարէ լինել լաւ և ճշմարիտ կրօնք :  
Մարդիկ համանման իրարու, մի և նոյն ծա-  
գումը, մի և նոյն վախճանական նպատակն  
ունին. ճշմարտութիւնն ամենուն համար  
մի է և նոյն. ինչ որ ճշմարիտ է Կ. Պօլսոյ  
մէջ, չը կարէ սուտ լինել Զմիւռնոյ մէջ :  
Ուրեմն չը կան ճշմարիտ շատ կրօնքներ :  
ուրեմն միայն մի հատ կայ, արտաքոյ որոյ  
չիք փրկութիւն. ապա թէ ոչ մարդիկ կը  
փրկէին ինչպէս որ կամենային. Զիք այլով  
խիք փրկութիւն. զի եւ ոչ ամուսն այլ գոյ  
ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ՝ որով  
արժան իցէ կեալ մեզ : (Գործ. Գ. 12) :  
Մի է Տէր, մի հաւատ եւ մի մկրտութիւն :  
(Եփե. Գ. 5) :

Պէտք չէ տարբեր կրօնից տեղ առնուլ  
կրօնի տարբեր վիճակները, որոց մէջ ճշմարիտ  
կրօնքը կարողացաւ լինիլ և հարկ եղաւ որ  
լինի. նա պէտք չէր որ լինի ընտանեաց  
համար ինչ որ յետոյ եղաւ ընկերութեան

(1) Այս տեղ մեր ասեցիքը այն մարդոց չը վերաբերիլ, որք բարեմտութեամբ որ և է մի կրօնք կը դաւանին :

համար , և ոչ , աւելի իրաւամբ , ինչ որ  
 եղաւ երբ մարդկային ազգն՝ երկրիս երեսը  
 տարածուելով բազմապատկելով , պէտք ու-  
 նեցաւ մի ընդհանուր և ուղիղ պաշտաման ,  
 բոլոր մարդիկ միաւորելու , մի ջնկերութիւն ,  
 մի ընտանիք կազմելու , և այսպէս մօտեցը-  
 նել զանոնք իրենց ծագման և վախճանական  
 նպատակին : Բանականութիւնը հաւատոյ  
 հետ միաբան ցոյց կուտայ մեզ ուրեմն եր-  
 բեակ յայտնութիւն ( Ադամային , Մովսի-  
 սական , Քրիստոսական ) , վասն զի հարկաւ  
 ւոր եղաւ , ոչ թէ ճշմարիտ կրօնքի մէջ  
 արդէն գտնուած մի բան փոխելու , այլ  
 յաւելցընելու ինչ որ կը պահանջէին մարդոց  
 մէջ նոր յարաբերութիւնք :

Բացայայտ է որ ամեն կրօնք , որ չունի  
 զԱստուած իւրեան հեղինակ , չը կարէ  
 խիղճերը կապել , վասն զի մարդս իրաւունք  
 չունի օրէնքներ դնել մարդոց , այլ և կարող  
 չը պիտի լինի բաւականին հաստատութիւն  
 տալ նոցա , եթէ Յիսուս առաքեալ է յԱս-  
 տուծոյ , նախագուշակեալ ամեն ժամանա-  
 կաց մէջ՝ մի ընդհանուր կրօնք հաստատե-  
 լու համար , կը հետեի որ միւս կրօնքները  
 սուտ են . խափանեալ կամ անզօր : Այսպէս  
 է բազմաստուածութիւնը և այլակրօնու-  
 թիւնը , որք , թող որ իրենց հիմնադիրք

շեն կարող ունենալ մի աստուածային սաշ-  
 տօն , այլ և իրենց այլանդակութեան համար  
 պէտք է որ հերքուին : Մովսիսական կրօնքն  
 և բնական օրէնքը ճշմարիտ է որ յերկնուստ  
 իջած են , բայց Մովսէս Հրէից միայն կը  
 խօսի : Արօնք մի՛ որ մի ժողովրդի համար  
 միայն ստեղծուած է , այնու իսկ առժամա-  
 նակեաց է և պիտի դադրի՝ երբ ընդհանուր  
 կրօնքն հաստատուի : Սակայն Աստուած ոչ  
 իւր խորհուրդներն , ոչ իւր Նախախնամու-  
 թեան կարգը կը փոխէ : Միայն մէկ կրօնք  
 կայ , այն է Փրկչինը , բայց ժամանակին և  
 բարուց համեմատ բարեփոխած է զայն ,  
 նորա վերջին կերպարանքը տալէ յառաջ :  
 Գալով բնական օրինաց կամ կրօնքին , այժ-  
 մու ժամանակիս անզօր է այն , որովհետեւ  
 նորա վաւերացումը բաւական որոշ կնքով  
 չէ բացայայտուած , և բաւական ճշգուած  
 կանոններ՝ մանաւանդ մի փոքր դժուարին  
 պարագայից մէջ , չը ներկայացընէր այն ,  
 որ ընդհանուր բոլոր մարդկային ազգէն  
 նշմարուի : Գարձեալ , այն կրօնքը , առանց  
 յատկապէս կոչուած պաշտօնէութեան ,  
 այլակերպուած էր ( վկայ հեթանոսութեան  
 նողկալի յիմարութիւնները ) , և իւր սկզբ-  
 բունքներն օր աւուր աւելի մթին կը լինե-  
 ին , երբ քրիստոնէութիւնը զանոնք կրկին

հրատարակելով առջի մարտութիւնը սրբութիւնը տուաւ նոցա :

Զ. Հարցումն . Ո՞չք են ճշմարիտ կրօնի նշանները :

Սոյն հարցման գոհացուցիչ պատասխան տալու համար կ'առնեմք թէ՛ երեք ինչ հարկաւոր են . Ա . Պէտք է որ այն յայտնեալ լինի յԱստուծոյ , և նորա հաստատութիւնը հրաշքներով միացած լինի . որովհետեւ հըրաշքը Աստուծոյ զործ է , և յայտնութիւնը նորա խօսքը . արդ խօսքի ճշմարտութիւնը գործէն աւելի ուրիշ բան չը կրնար տալուցանել . Բ . Որ և է մօլի կամ անկարգ միտում պէտք չէ նա պաշտպանէ . Գ . Մշտնջենասար և անսխալ միջոց մի ունենայ որ պահպանուի այնպէս՝ ինչպէս յայտնեցաւ և հաստատեցաւ յԱստուծոյ . ուստի կ'եզրակացընեմ . Ա . Թէ պէտք է որ գրուած լինի այն <sup>(1)</sup> , գոնէ հիմնական եղած ամեն մասերով ( նկատմամբ մարդկային ազգի արդի վիճակին ) . Բ . Թէ՛ ճշմարիտ կրօնքին

(1) Խօսքը տեղական և Թռչոց է , գիրն է հաստատուն և մտայուն . և կարէ ամեն ուրեք տարածիլ . ամեն ուրեք կր մնայ , և միշտ նոյն է : Խօսքը՝ բարի է ընտանեաց համար , որ է մի տեղի . ուր ամեն մարդիկ զիրար կր տեսնեն և կր խօսակցին միշտ , բայց ընկերութեան համար բաւական չէ :

մէջ պէտք է լինին հմուտ մարդիկ, որ ժողովրդոց ուսուցանեն և բացատրեն զայն. որովհետեւ որ և է գրուածք ինքնին չբացատրուելով, զայն կարգացող անձը մի մասնաւոր իմաստ կարէ գանել անդ. այլ եւս չէ կարելի միութիւն գտնել դասանութեանց մէջ, ոչ եւս միաւորութիւն զգացմանց մէջ, ոչ եւս միակերպութիւն գործոց. միով բանիւ՝ ոչ եւս կրօնք :

Է. Եւ վերջին Հարցումն. Որն է ճշմարիտ կրօնքը :

Քրիստոնէական ուղղափառ կրօնքն և եթ կը կրէ ճշմարիտ կրօնքի նշանները . . . . Եւ յիրաւի, Ա. Յայտնեալ է այն, վասն զի յայանապէս և բացարձակապէս անկարելի է, որ ոչ իւր վսեմ վարդապետութիւնքը, ոչ իւր մարտը բարոյականը, ոչ իւր վեհապանծ և անիմանալի պաշտամունքը հնարուած լինին մարդոցմէ. Բ. Հաստատուած է այն անթիւ հրաշքներով, յորս ամենէն զարմանալիքն են նոյն իսկ իւր հաստատութիւնը հակառակ այն արգելքներու որոց մարդկային ուժը չէր կարող յաղթել, եւ նահատակաց արիութիւնը. Գ. Ոչ մի կրից չը նպաստելէն զատ, կը պատերազմի եւս նոցա դէմ թէ սաստիկ պատուէրներով եւ թէ ամենակատարեալ խրատներով.



Գ. Գրուած է այն ոչ միայն առաջին Առաքելոց գրքերուն մէջ, այլ և նոցա յաջորդող Ս. Հարց գրուածոց մէջ, որք աւանդութիւնները հաւաքեցին և այսպէս հաստատեցին իրենց վարդապետաց վարդապետութիւնքն ընդ միշտ. Ե. Վերջապէս ունի այն զինքը կառավարող գլխաւորաց մէջ հագեւորականաց (՝) մի ժողով, ում խոստացաւ Աստուած մշտնջենապէս օգնել եւ տալ նմա անսխալութիւն այն բաներուն մէջ որ հաւատոց վարդապետութեան, բարոյականի, սրաշտաման և հրահանգաց կը վերաբերի, այն է Եկեղեցական Հարց տիեզերական ժողովը, որու վերայ վստահ եմք թէ աստուածային խոստման համեմատ բնաւ չըխաբուիր եւ չը բաժնուիր իւր միակ գլխէն, որ է Յիսուս Քրիստոս :

(՝) Հայոց ուղղափառ Եկեղեցին իւր ժողովոց մէջ կ'ընդունի նաև յաշխարհականաց կարգէ կրօնագետ և Ս. Գրոց հմուտ անձինք, գործվ նոցա անգամք մի և նոյն Եկեղեցւոյ առանց իտիր դնելու երկու կարգաց մէջ. ըստ որում Քրիստոսական Եկեղեցին կը կազմուի յեկեղեցականաց եւ թէ յաշխարհականաց, և Քրիստոս իւր ներկայութիւնը խոստացաւ Եկեղեցւոյն, զոր կը ներկայեն յայնժամ Առաքեալք փոքրաթիւ աշակերտք :

## ՅՕԴՈՒԱԾ Բ .

## Պաշտամունք :

ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆ է տուրք Հաւատոյ ,  
 յարգանաց , երախտագիտութեան , սիրոյ  
 և երկրպագութեան , զոր բանական արա-  
 բածն իւր Արարչին կը նուիրէ : առանց  
 պաշտաման չիք կրօնք : Պաշտամունքն երեք  
 կերպ կարէ մտածուիլ , որովհետեւ սէպք  
 է նա որ պարունակէ երեք յարաբերու-  
 թիւնք մարդոյ ընդ Աստուծոյ . յարաբերու-  
 թիւն մտաց , յորմէ պաշտամունքն ներքին .  
 մտաց յարաբերութիւն մարմնոյն գործարա-  
 նաց միջոցաւ եղած , յորմէ պաշտամունքն  
 արտաքին . յարաբերութիւն ընկերութեան  
 զոր Աստուած Հաստատած է մարդոյ մէջ ,  
 յորմէ պաշտամունքն հրապարակային կամ  
 ընկերական :

Հաւատ , յոյս , սէր , նուիրել Աստու-  
 ծոյ բոլոր իւր անձր , մտային ազօթք , եւ  
 այլն . սոքա են ներքին պաշտամունքը կազ-  
 մող գլխաւոր յօդուածները , որովհետեւ  
 սոքա մտաց բոլոր կարողութիւնքը , հոգւոյ  
 բոլոր զօրութիւնքը կը բանեցընեն : Հաւա-  
 տով՝ մարդ իւր միտքը կը խոնարհեցընէ Աս-  
 տուծոյ իմացականութեան առջեւ . յուսով

կը հանգուցանէ յԱստուած իւր բոլոր վըստահութիւնը, որում կը յանձնէ ներկայի հոգերն որով պաշարուած էր իւր միտքը, եւ ասպագային շահերն՝ որում կ'ակնկալէ սիրով՝ կուտայ Աստուծոյ իւր սրտին խանդերը, հոգւոյն միտումները, Աստուծոյ՝ որ զամեն ինչ իւր երջանկութեան համար արած է: Սէրն իւր մէջ կը բովանդակէ բոլոր պաշտամունքը, բոլոր կրօնը, վասն զի այն է որ սովորական տրամադրութեան մէջ կը դնէ զմարդ Աստուծոյ ամեն օրէնքը պահպանելու. եւ այս մտօք է որ սէրը, առարկայ եղած է այն մեծ պատուիրանին, որում միւսները բացատրութիւն մի են ստակ: Ով որ ստուգիւ զԱստուած կը սիրէ, նմա կը հաւատայ, կը յուսայ, կը պաշտէ, նորա անունը կը կարգայ, կը սիրէ նա նոյնպէս զամեն մարդիկ, ըստ որում նորա եւս իրեն նման Աստուծոյ որդիք են: Ներքին պաշտամունքը կրօնական մտածմունք կուուած է:

Բայց ինչպէս որ մտածմունքը խօսքը յառաջ կ'ածէ, նմանապէս ներքին պաշտօնը զարտաքինը յառաջ կ'ածէ, որ է կրօնական խօսքը, Արտաքին պաշտօնն է ուրեմն այնչափ հարկաւոր կրօնական զգացման, որչափ որ խօսքը հարկաւոր է մտաց.

վասն զի սոյն երկու պաշտամունք չըկարեն  
 իրարմէ զատուիլ, Հոգին՝ հաւատոյ, եր-  
 կրպագութեան, երախտագիտութեան եւ  
 սիրոյ զգացմամբ թափանցեալ, զանոնք  
 երկար ժամանակ իւր մէջ չըկեզրոնացրնէր.  
 հարկ է որ զանոնք ՚ի դուրս յայտնէ, այս-  
 քան սերտ ներդաշնակութիւն կը տիրէ  
 մտաց եւ զգայարանաց մէջ, Գարձեալ, ա-  
 ռանց արտաքին պաշտաման, Աստուծոյ հեռ-  
 մեր ունեցած յարաբերութիւնք անկատար-  
 են, մարդ յամենայն կարողութենէ, յամե-  
 նայն անձնէ յարգանք չը մատուցանէր նմա:

**Ա**ւելին կայ, արտաքին պաշտօնը հար-  
 կաւոր է ներքին պաշտօնը պահպանելու  
 համար, օրինակ մի է այն, կ'ասէ փիլիսո-  
 փոյ մի, որ կը հրաւիրէ, կը գրգռէ, կը  
 քաջալերէ, մտազրութիւն արթնցրնելու,  
 շօշափելու, վարժեցրնելու համար տաճար-  
 ներ, քահանայներ, սեղաններ, հաստա-  
 տուն եւ նշանակիչ արարողութիւնք պէտք  
 են, Մեր շուրջք տեսնուած բարեպաշտու-  
 թեան նշանները, մեր ներսիդին եւս ճնել  
 կուտան, կ'աճեցրնեն կամ կը պահպանեն  
 բարեպաշտութիւնը, Ներքին պաշտաման  
 զգացմունքներն եւս կ'աւելցրնէ նա, եւ կար-  
 ձեւ թէ հոգւոյ գործունէութեան աւելի  
 մի բան կուտայ, Մարդս չէ մի պարզ հոգի:

գերի է նա իւր զգայարանաց , ծնած է նմանող լինելու . ուրեմն պարտի ուսանիլ կրօնքը , ինչպէս կ'ուսանի միւս ընկերացին օրէնքներն ու կարգապահութիւնքը : Ի դուր կրկնած պիտի լինիք մի մանկան , մի սահմանափակ միտք ունեցողի , թէ պարտ է յարգել զԱստուած , եթէ վարժեցնէք զնա ճերպողութիւն անել նորա ներկայութիւնը ցոյց տուող նշանակներու առաջը : Ի՞նչ մեծ տպաւորութիւն չեն աներ մեր սրտերու վերայ արարողութեանց գեղեցկութիւնը , կարգաւորութիւնն և վեհութիւնը , երգոց վսեմութիւնը , նոյն իսկ զանգակաց հնչելու ձայնը , որում այնքան անոյշ յիշատակներ կապուած են , Յայտնի չէ , կ'ասէ Ֆենելոն , որ մարդիկ աւելի պէտք ունին մի տեսարանի՝ աներեւոյթ և իրենց բոլոր կրից հակառակ վեհութեան մի յարգանքը նոցա մտաց մէջ տպաւորել տալու համար , քան յարգել տալու տեսանելի մի վեհութիւն , որ նոցա տկար աչկունքը կ'առնու և այլանդակ անմիտ կիրքերնին կը շոյէ :

Արտաքին պաշտօնը՝ քրիստոնէութեան կրօնքին մէջ , կը կայանայ ձայնով եղած աղօթից , հաւատոց դաւանութեան և օրբազան խորհրդոց մասնակցութեան մէջ :

Հրապարակային և հանդիսաւոր պաշտօնը այնչափ անհրաժեշտ է, որ եթէ մի կրօնք չըստատուիրէ զայն կատարել, բաւական է զայն սուտ կրօնքի տեղ անցընել տալու : Մարդն, որ և է նկատողութեամբ ալ մտածուի, ինչ վիճակի մէջ ալ գտնուի, մի պաշտօն պարտաւոր է մատուցանել Աստուծոյ : Եթէ ներքին մի պաշտօն պարտաւոր է նմա իբր իմացական և ազատ էակ, արտաքին մի պաշտօն իբր մարդ, պարտաւոր է նաեւ հրապարակային մի պաշտօն իբր անդամ ընկերութեան :

Ապարէն ընկերութիւնը մի բարոյական էակ է, որ Նախախնամութեան բարիքներով և պաշտպանութեամբ կ'ապրի եւ կը զարգանայ, ուրեմն պարտաւորութիւններ ունի կատարելու առ Աստուած, և զանոնք չը կարէ կատարել՝ բայց եթէ հրապարակային պաշտօնիւ : Իւր պարտաւորութեանց կատարմանէ կախում ունի նաև իւր անձը : Ի կորուստ կ'երթար նա առանց կրօնքի, որ իբր խարխիս կը ծառայէ իւրեան, եւ նոյն իսկ կրօնքը չը կարէր պահպանուիլ առանց հրապարակային պաշտաման : Մարդս իւր ամենակարեւոր շահուց հոգ տանող ու մտածող չէ : Աստուծոյ պարգեւած բարեաց յիշատակն իւր յիշողութեան մէջ

կը կորնչի . իւր միտքը գիւրաւ կը ցրտանայ  
բարեպաշտութեան և սիրոյ մէջ . անհրա-  
ժեշտ է մի արտաքին և հանդիսաւոր հան-  
դերձանք որ նորա երեւակայութիւնն ամ-  
բասնդէ , իւր պարտիքը յիշեցնէ և զգաց-  
մունքը զօրացնէ : Արդ , չէ ինչ երկբայե-  
լի , որ հաւատացելոց համընթացութիւնը ,  
բարի օրինակը զօրեղասպէս չը ծառայեն  
պարտաւորութեան մէջ հաստատ մնալ տա-  
լու և եթէ հեռացած են անոր մօտեցնե-  
լու :

Եկեղեցին սոյն պատճառներն լաւ ըզ-  
գալով մասնաւոր կերպիւ կը հրամայէ հրա-  
պարակային պաշտօնը , որ միւս երկուսն  
կ'ենթադրէ . նա հաստատեց տօներ , նա  
կը կոչէ զբրիատնեայս սուրբ խորհուրդներ  
ընդունելու , նա զարդարեց պաշտամունքը  
պատկառելի հանդերձանքներով : Եկեղե-  
ցին՝ աւանդապահ եւ անսխալ թարգման  
Ս . Գրոց և իւր աստուածային հիմնադրին  
վերջին կամաց , կը յիշեցնէ Յիսուսի Քրիս-  
տոսի սա խօսքերը , որ հրապարակային  
պաշտաման հարկաւորութիւնն և օգուտ-  
ները ցոյց կուտայ . Եթէ երկու, կամ երկը  
'ի մէնջ ժողովեացին յանուն իմ , անդ եմ ես  
'ի մէջ նոցա .

Հրապարակային պաշտօնը կը կայանայ

սրբազան խորհուրդներ՝ ընդունելու, պատարագ մատուցանելու, Եկեղեցւոյ սահմանած տօները կատարելու մէջ:

### ՅՕԴՈՒԱԾ Գ.

**ԲԱՅՑ** Ընչ է Եկեղեցի սասանիս: Հաւատացելոց ժողով, որ սւնի իւր մէջ յատուկ պաշտօնեայք, որոց յանձնած է հաւատացելոց հոգեւոր պիտոյից և Յիսուսի Քրիստոսի կրօնքը քարոզելու և յարատւութեան մէջ պահելու հոգը: Երբ սոյն ժողովը միով սրտիւ և միով հոգեւով իւր կրօնքի հիմնադրին աւանդած պատուերները պահելու լինի, կը մնայ Եկեղեցին անքակտելի և անսխալ, որ երկու յատկութիւնք են ճշմարիտ Եկեղեցւոյ:

**Մ**ովսէսի եւ Մարգարէից պաշտօնը դադրեցաւ. վասն զի նորա օրինակ սահմանուած էին, աւետարանական պաշտօնութիւնը պատրաստելու և Վերանորոգչին յոյսը մշտնջենաւորելու: Սոյն վերանորոգչին եկաւ, նա է կեդրոն ամենեցուն. իւր կրօնքը կատարեալ է, ամեն մարդոց համար է այն:



Բայց Եկեղեցին է մի ընկերութիւն . և լաւ օրինադրուած ընկերութեան մէջ հարկ է իշխանութեան միութիւն լինի, մի գլուխ եւ կառավարող ունենայ, ուստի Յիսուս Առաքելոց տալով մի և նոյն իշխանութիւնը քարոզելու աղատօրէն եւ հիմնելու իւր կրօնքը, միացուց կապեց զանոնք եղբայրական սիրով, աղօթելով առ Հայր . Ձի եպիցին մի, որպէս եւ մկր մի եւք . և թէ՛ զվառսն զոր ետուր ինձ՝ ետու, նոցա զի իցեն մի . . . եւ կառարեալք ՚ի մի : Յիսուսի տուած փառքն էր որդիութեան պատիւն և սէրն որով զամենքը կապեց, իշխել այնու բոլոր հաւատացելոց վերայ : Ուրեմն Եկեղեցւոյ իշխանութիւնն երկոտասանից միասո՛հ և միակրօն եղբայրակցութեան եւ դաւանական միութեան վերայ հիմնած լինելով իբրու երկոտասան քարինք բարոյական տաճարին, ինքն Յիսուս իւրեան պահեց իւր Եկեղեցւոյ գլխաւորութիւնը, ինչպէս կը գրէ Առաքեալն Պօղոս . Քրիստոս զլուխ է Եկեղեցւոյ, և ինքն իսկ խոստացաւ չը բաժնուիլ անկէ մինչեւ իսպառ :

Ուրեմն ոչ մի առանձին մասնաւոր Եկեղեցի, թէեւ Առաքելական, չ'ունի իրաւունք միւս Եկեղեցիքն իրեն հարատակեցընել, պնդելով իբրու կեղբուն միութեան

լինել իւր Աթոռը : Եկեղեցական իշխանութեան միութիւնը , զոր ստարախմբ հասկանալ բոլորովին հոգեկան և բարոյական , կը կայանայ , բաց ՚ի դաւանութեանց միութենէ , առաւելապէս Առաքելական սիրոյ վերայ , և իւրաքանչիւր Առաքելական Աթոռոյ փոխանորդք , Պատրիարքունք , կաթողիկոսք , Պապք , ստարախն իրենց իշխանութիւնն այս կերպ միացնել , և և այնպէս փոխանորդաբար կառավարել Քրիստոսի Եկեղեցին , օրինակ հեղութեան , խաղաղութեան լինելով յաւէտ քան բռնաւոր եւ տիրող խզմից : Այսպէս պէտք է իմանամք հաւատացելոց ընկերութեան հարկաւոր եղած իշխանութեան միութիւնը :

Լարրիւյէր Գաղղիացի մատենագիրը դեղեցիկ և յաղթահարիչ կերպով կը յայտնէ կրօնքի վերայ ունեցած իւր համոզումը : “ Եթէ սուտ լինէր իմ կրօնքս , կը խոստովանիմ , որ խիստ վարպետութեամբ լարուած մի սրողայթ է հազիւ մարդոյս մտքէն անցնող . անխուսափելի է որ մարդ նորա մէջ չընկնի չը բռնուի . որպիսի վսեմութիւն , որպիսի պերճութիւն խորհրդոց , որպիսի հետեւանք և միահետ կասկակցութիւն վարդապետութեան , որպիսի մտաց բարձրութիւն , որպիսի ամբժութիւն , բա-

բուց անմեղութիւն . քանի՛ դժուարատար  
 և անյաղթելի զօրութիւն ունին այն վկա-  
 յութիւնքն որք հետզհետէ արուեցան ամ-  
 բողջ երեք դար <sup>(1)</sup> միլիոնաւոր իմաստուն  
 անձինքներէ , համեօտ վարուք , զորս միակ  
 ճշմարտութեան զգացմունքը անվրդով կը  
 պահէ շղթայից մէջ յետին տանջանաց տե-  
 սարանին դիմաց : Աշխարհիս պատմութիւնը  
 ունի սորա նմանող մի բան : Եւ նոյն իսկ  
 Աստուած զիս խաբելու համար ասկէ աւե-  
 լի դիպողական մի բան կարո՞ղ էր գտնել :  
 Ուստի՞ փախչիմ , սուր երթամ , սուր գլուխս  
 զարնեմ , չեմ ասեր թէ ասկէ լաւագոյնը  
 գտնելու համար , այլ այնպիսի մի բան ,  
 որ քիչ շատ սմա մօտենայ : Եթէ հարկ է  
 որ կորնչիմ , ասով կը կամենամ կորնչիլ ,  
 Աւելի քաղցր է ինձ ուրանալ զԱստուած  
 քան թէ փոխանակել զնա մի այսպիսի խո-  
 շոր , տարածուն և կատարեալ խաբեբայու-  
 թեան . բայց ես իսկութիւնը լաւ հասկա-  
 ցայ , չեմ կամենար անաստուած լինել .  
 ուրեմն կրկին կը դառնամ կը մտնեմ իմ  
 կրօնքիս մէջ . ահա լրացաւ " :

(1) Կ'ակնարկէ առջի երեք դարերը քրիստոնէութեան ,  
 յորում ապրեցան Ս . Ագոստինոս , Կիլիքիանոս , Իրենե-  
 ոս , Պրոպերտս , Թեոփորոս , այնչափ վկայք և անբախ-  
 րոսք :

« Կրօնքը կամ ճշմարիտ է կամ սոււա, կը յաւելլու նոյն մատենագիր, եթէ պարսպ ու շինծու է, աւասիկ, եթէ կամիք, վաթսուն տարիներն ՚ի կորուստ գնացին քարի մարդոյն համար, կարթուսեանի կամ մի ճգնաւորի համար, որք ուրիշ վասնդի չեն հանդիպիր. իսկ թէ որ կրօնքը ճշմարտութեան վերայ հիմնուած է, այն ժամաւ նակ սոսկալի թշուառութիւն մի է մոլի մարդոյն համար: Մի միայն հանդերձեալ շարեաց յիշատակն իմ երեւակայութիւնս կը խռովէ. միտքը շատ տկար է զանոնք հասկանալու և խօսքերը խիստ պարսպ են զանոնք արտաբերելու համար: Սոցդ է որ, ենթադրելով թէ աշխարհիս մէջ նուազ և զած լինի ստուգութիւնը կրօնքի ճշմարտութեան մասին, այսու ամենայնիւ մարդոյ համար չը կոյ ուրիշ աւելի պատուական իր ձեռնարկելիք քան զառարինութիւնը »:

### ՅՕԴՈՒԱՄ Դ.

ԲՈՎԱՆԴԱԿԵՄՔ ասածներս այն հաւատոյ դաւանութեամբ զոր տուաւ մի քանաստեղծ փիլիսոփայ, և և մի ընդհանուր

ակնարկ ձգելով՝ կրօնական ճշմարտութեան վերայ իւր զանազան երեւոյթներու և մի քանի դժուարութեանց լուծմանց մէջ :

« Ընկերական կարգին մէջ , ընտանիքը յորում ծնաւ ժամանակաւ ընկերութիւնը , և յորում՝ միայն կարող է նա ոգեւորել իւր ծերութիւնը այսօր . ամեն ինչ կարեն ձեռնտու լինել նորա (ընկերութեան) ծնընդեան՝ ձեռնտու լինելով կազմել շխակել բարբերը , բարբերն ալ կը վերակազմեն զընտանիքը և ընտանիքն ալ զընկերութիւնը :

« Սոյն ընկերական վերածննդեան միջոցքն են , օրինակը , գործը , խօսքը , վերին դասու մարդոց անձնանուիրութիւնն այլոց դէմ , աշխատութիւնը , մարդասիրութիւնն , որք են բրիտաննէական առաջնորդք մեր սպառաքինն :

« Իմացական կարգին մէջ , Աստուած՝ սակզնող հարկաւոր , մարդոց ազատութիւնը՝ որ ընդունելու կամ մերժելու համար վեց հազար տարիներէ ՚ի վեր ըսուած եւ զգացուածներէն հեռեող հարկաւոր յատկութիւն է . բարոյական կարգին մէջ է մեկնակէտ նիւթոց վերայ եղած ամեն արամաբանութեան , ինչ որ են բնական կարգին մէջ ժամանակի և միջոցի դադափարները :

« Այն այլ և այլ հարգաց մէջ վերածը-  
նոցը Յիսուսի Քրիստոսի կրօնքին սիւսած  
լոյսն է » :

Աւասիկ արդարեւ մի գեղեցիկ հորիւ  
զան , և երեւակայութիւնը պակաս չըմնար  
այն տեղ իբր միջոց <sup>(1)</sup> : Փոխանակ սոյն ըն-  
դարձակ տեսակէտին , իջէք իմաստակու-  
թեան և կրից մտորագնդին մէջ , ինչ պիտի  
գանէք այն տեղ . տաւր անհաստականու-  
թիւնն , որ բնաւ չը պատասխաներ մի ընդ-  
հանուր գաղափարի , ոչ յերկրէ գէտ ՚ի վեր  
կը բարձրանայ , և ոչ անձուկ չըջապատեն  
դուրս կ'ելնէ , ուր որ կ'երերայ կը մնայ :  
Գու , ևս . մեք երկուքս . աւասիկ սոյն կար-  
ծեցեալ իմաստասիրութեան բոլոր անձնա-  
ւորութիւնը , որ մի միայն նիւթական շա-  
հերով կըզբաղի , զերկիրը միայն կը տեսնէ ,  
ինչպէս այն կրից բանաստեղծութիւնն որ  
միշտեր և երկրային ուրախութիւններ կ'եր-  
գէ , առանց երբէք մի քանի աստիճան գէտ  
յերկիրնք ելնելու : Մինչդեռ քրիստոսնէու-  
թեամբ ոչ միայն գիտութիւնն և արհեստը  
կ'ընդհանրանայ , այլ և սորա հանձարամը-  
տութեան գործ կը լինին , հոգին կը բարձ-  
րացընեն , սիրար կը շարժեն , երեւակայու-

(1) Espace .

Թիւնը կը բեզմնաւ որեն, միով բանիւ՝ կուտան մարդոց այն մեծութիւնն, այն ազնուականութիւնն որում արժանի են իւր երկնային ծագումն եւ իւր վախճանական անմահ նպատակները: Աւրեմն խիտ արգասատելի ողբալի են նորա որ իրենց ասելութեան ոգւով Յիսուսի հիմնած պաշտամունքը կը հարուածեն եւ կը հալածեն:

Տասն եւ ութ դարուց ՚ի վեր չէ կըզած ընկերական մի յառաջագիտութիւն որոյ պատճառ քրիստոնէական կրօնքը չը լինի մասնակից կըզած է նա ամեն յեղափոխութեանց իբր ասոցեան աղետալի նպատակ ունեցողներուն եւ իբր օգնական այս յեղափոխութեանց, որք մարդկութեան վիճակը բարւոքելու կը նկրտէին. նա մարբեց սրբեց հեռոզեալէ Հռոմէական աշխարհը, քաղաքակրթեց բարբարոսական աշխարհը, քաղցրացոյց աւատական աշխարհը, դէմ դրաւ կայսերաց սրբապիղծ պահանջմանց եւ յամառութեան, եւ ցրուեց շիտթեց հերեափկոսութիւնը ամեն դարու մեջ. միով բանիւ, միշտ եւ ամեն ուրեք ուրիշ նպատակ չ'ունեցաւ՝ բայց եթէ մարդոց երջանկութիւնը, եւ արժանի կըլաւ ընդունել ամենաբարձր հանձարներու հպատակութիւնը: Այսպիսի իրողութեանց դէմ վե-

Տոզ՝ միայն տգիտութիւնն եւ չարամտութիւնը կարող են լինել :

1. Վերջին երեք դարուց մէջ եզոզ ամենամեծ փիլիսոփայից գրուածքը կ'արտացոլցանեն կրօնքին աստուածային լինիլը :

Վերջին դարու փիլիսոփայք հոգ տարած են , գիտողութիւն կ'անէ մի պատմադիր , Նեւտոնի , Բակոնի , Վէյսնեյի , Վոգի , Ելէրի , և այլոց գրուածոց մէջէն այն կտորները միայն 'ի լոյս հանել , որք բնական կամ չափազիտական գիտութեան կը վերաբերէին , և ամենի աչքէն թաքուցած են նոցա կրօնական գործերը , որոց նուիրած են այդ մեծ մարդիկը իրենց կենաց մի մասը : Քրիստոնէական կրօնքի ջատագովք շատացած էին զեռեղէլ սոյն մեծ մարդոց անուանքը այն հեղինակաց կարգին մէջ որք կրօնքն 'ի գործ դրած էին . բայց նոքա սոցա գրութիւնքը չէին ծանօթացուցած հասարակութեան , և շատ անգամ սոյն կիսագիտուն մարդոց ձեռք կը լսուէր ասելնին , կիսագիտնոց՝ որովք այսօրեայ օրս լեցուն է Գաղղիա . Սոյն մարդիկ , կ'ասէին , աւանդութեամբ կը հարատային , եւ ոչ բանաւորապէս : Սոյն կարծեաց հաստատութիւնը



է կարող պաշտպանութիւն գանկէ նոցա կողմէ որք կը կամին կարգալ Քրիստոնէութեան միտքը (¹) կոչուած գիրքը :

Վերջին երեք դարուց սոյն սրայծառագոյն հանձարաց միութիւնը, Յիսուսի աստուածութիւնը խոստովանելով, մի փաստ է յաւելցուած ՚ի վերաց մարգարէութեանց, հրաշից, Հռոմէական կայսերութեան դարձին, Հրէից ցիրուցան լինելոյն և այլն :

Աստուծոյ գոյութիւնը, Յիսուսի Քրիստոսի աստուածութիւնն, Եկեղեցւոյ միութիւնն և անսխալութիւնը այնպիսի կէտեր են, որ սոյն յիշեալ մեծամեծ մարդոց գրուածներով երկբայութենէ ազատ կը մնան :

Այս գրուածներն աչքէ անցընելէ յետոյ կը պարտաւորի մարդ խոստովանիլ, որ երկրի բոլոր ժողովրդոց աւանդութիւնքը Մովսիսի գրոց հետ կը միաբանին, և թէ՛ մինչև մարդկային ազգի ցրումը, սոյն աւանդութեանց մարդկային ծագման վերայ ունեցած բուն խկութիւնը նոյն է բացարձակապէս : Արարչագործութիւնը, հրեշտակաց անկումը, մարդոյս անկումը, երկրիս ամլութեամբ պատժուիլը, անմահութեան յաջորդող մահը, ջրհեղեղը, Բաբել-

(¹) Raison du Christianisme .

լնի աշտարակը, այս մեծամեծ գործերն  
 ամեն ուրեք կը գտնուին, նոյնպէս եւ մի  
 ազատչի, մի միջնորդի խոստումն Աստուծոյ  
 և մարդոց մէջ: Քանզի լեզուաց խառնա-  
 կութենէ յառաջ գէպքերը հասարակ էին  
 ամեն ժողովրդոց, յետոյ նոքա մասնաւորե-  
 ցան, եւ իւրաքանչիւր ազգ կղզիացեալ  
 այլայլեց և քիչ շատ աւրեց սոյն նախնական  
 աւանդութիւնները, նախ այլաբանութիւն-  
 ներ համարելով զանոնք, զոր յետ ժամա-  
 նակի կամեցած լինին մարդիկ երեւակայա-  
 կան պատմութեանց մէջ իրականացընել  
 զանոնք: Սոյն կերպով ժողովուրդք իրերը  
 գաղափարաց փոխեցին, յետոյ սոյն գաղա-  
 փարներն իրողութեանց փոխակերպեցին,  
 ամեն տեղ դիցաբանութիւնք յաջորդեցին  
 այլաբանական կրօնից: Մարդկային միտքը  
 յԱստուծոյ զատուելով՝ անդադար օրօր-  
 ուած մնաց բնազանցականին և առասպելին  
 մէջտեղ:

Բայց եթէ կը հասկանամք որ ցիրուցան  
 եղած, հասարակային լեզուէ զրկուած եւ  
 անկման հետեւանաց մատնուած ժողովրդ-  
 դեան ձեռքը նախնի գործոց սոյն եղծումք  
 եղած է, նմանապէս խիստ լաւ կ'իմանամք  
 թէ մարդկային ազգի դիւանաց յանձնուած  
 աւանդը հարկ էր որ սահուի երկրիս վերայ:

այսպէս կը մեկնուի հրէական ժողովրդեան սրտածնը, զոր Աստուած հաստատուն սահէց մինչեւ ցժամանակ փրկութեան յարատեւ հրաշագործութեամբք: Նմա արուած օրէնքներն եւ սահմանուած սրտիժները սոյն աւանդի պահպանութեան կը վերագրին, յորմէ պիտի ծագէր քրիստոսնէութիւնն և նորա հետ աշխարհի փրկութիւնը:

Ուրեմն ի՞նչպէս ուրանալի է ուղղափառ ճշմարտութիւնը, երբ կը տեսնեմք որ Նահապետաց միջոցաւ յԱդամայ մինչեւ ցՆոյ, և Նոյէ մինչեւ ցԱբրահամ, և յԱբրահամէ ցՄովսէս, և ՚ի Մովսիսէ քահանայապետաց ձեռք մինչեւ ցՔրիստոս, և ՚ի Քրիստոսէ՝ Առաքելական անընդհատ յաջորդութեամբ կը հասնի մինչեւ ց'այսօր:

Ի՞նչպէս կարելի է ուրանալ Յիսուսի Քրիստոսի Աստուած լինելը, երբ կը տեսնեմք՝ թէ ինչ որ ծանուցած էր նա թէ պիտի լինէր՝ իբր արդիւնք իւր մահուան, տառական ճշգութեամբ կատարուեցաւ: Ուրեմն Աստուծոյ զօրութիւնը կայր նորա մէջ, ասաց ինքը թէ Աստուած է, և արդարեւ անկարելի կը լինէր որ տան և ութ դարէ ՚ի վեր իւր խօսքը աշխարհիս վերայ իրագործուի՝ եթէ չէր նա Քանն կամ նոյն իսկ բանաւորութիւնն Աստուծոյ արարչի:

Եթէ նա ըսկ մարդ լինէր, Աստուած դէպ-  
քերը Յիսուսի կանխատեսութեանց հետ  
յարաբերութեանց մէջ չէր դնէր, կամ  
հարկ էր ասել թէ Աստուած մի մարդոյ  
վերայ հրաւիրած էր մարդկային ազգի պաշ-  
տամունքը, ասել է նոր տեսակ մի կառ-  
պաշտութիւն արտօնած էր :

Յիսուսի պաշտօնին բոլոր ապացոյցները  
բացատրուած են մեր յիշած նշանաւոր  
հեղինակաց գրեանց մէջ :

Այսպէս՝ պետութեանց յեղափոխու-  
թեանցը, խռովութեանց կամ փոփոխու-  
թեանց մէջտեղ, զոր ամեն ընկերութիւնք  
կրեցին, կայ մի բան անփոփոխ, այն է  
ուղղափառ ճշմարտութիւնը. Աստուած,  
մարդոյ անկումը, փրկութիւնը, այս է  
մարդկային ցեղի կրօնքը : Այլ հազար տա-  
րիէ ՚ի վեր սոյն ջահը ՚ի տեսիլ աչաց բռնած  
ունի ՚ի ձեռին ընդհանրական Ակեղեցին :

Քացոյցայտ է համեմատ խօսից և գրուա-  
ծոց թէ բողոքականաց, թէ պապագաւա-  
նից և թէ արեւելեան Ակեղեցեաց հեղե-  
նակաց, որ քրիստոնէութեան հրաշալի գոր-  
ծերն ստոյգ են այնչափ՝ որչափ ստոյգ են  
կեսարու մահը եւ Սոկրատոց դատապար-  
տութիւնը : Քրիստոնէութեան հաստա-  
տուիլը և Հրէից երկրիս երեսը ցրուիլն են

նմանապէս երկու մեծ սքանչելիք զոր այսօր  
 մէք մեր աչօք կը տեսնեմք, այս սքանչելիքն  
 այնչափ աւելի շքեղ եւ հանդիսական են  
 քան զոր չէին նախագուշակած Ս. Գրքերը,  
 զոր այնքան մեծ յարգանքօք կը ստանան շքե-  
 ից ժողովուրդք, և որ Յունարէնի Թարգ-  
 մանեցան երեք հարիւր տարի նախ քան  
 զՔրիստոս :

Արեւն երկայ դարու անհաւատք, որք  
 ապիրատութեան հաշուով՝ վերջին դարու  
 անհաւատից պէս չեն, բայց իրենց սկեւ-  
 տիկականութիւնը ճնունդ առած է այն  
 միակ դրուածոց մէջէն որք մէկ դար գրե-  
 թէ շրջանի մէջ էին, չունին և ոչ մի փաստ  
 այն ապացոյցներու գէմ որք կը պարունա-  
 կին մեր յիշատակած մատենագրաց մէջ,  
 վասն զի այն գրքերը, որոց մէջ գտան իրենց  
 հակաքրիստոնէական կարծիքները, շարա-  
 գրեցան սոյն ապացոյցներու մօտ ժամանա-  
 կի մէջ՝ առանց զանոնք բանի տեղ գնելու,  
 Գաղով անտարբերներու, որոց թիւը դժբաղ-  
 դաբար օր աւուր շատնալու վերայ է, և թէ  
 կան նոցա մէջ ոմանք որ տակաւին կը փա-  
 փաքին ճանչել իրենց ծագումը, պարտա-  
 ւորութիւնքը, վախճանական նպատակը,  
 որք դեռ կը սիրեն ճշմարտութիւնը, թող  
 կարգան բարեպաշտ հեղինակաց, ողջամիտ

փիլիսոփայից գրեանքը , որք ըստ մեծի մասին Գաղղիացի մատենագրաց գործերն են , և մեր արդի թարգմանիչք դժբաղդարար զասոնք թողլով իբր անշահաւոր , սիրաւիէպնէր թարգմանելու աւելի միտած են , Ասած Գաղղիացի մատենագրաց մէջ նշանաւոր են սոյն նկատմամբ՝ Նիկիոյ , Արնոյդ , Բասիւէ , Ֆենեւլոն և այլք :

Աչ քրիստոնէայ ազգերն , որոց մէջ զուրիշները թողլով՝ ասեմք , օրինակի համար , Հրեայք , որոնք կոչուած են բաժանորդ լինել արդի Նւրոպական քաղաքակրթութեան բարեաց , պիտի կարենան հերքել Գեկարաի , Նեւտոնի , Լէյբնիցի , Պասկալայ , Լոզի , Ալարքի նման մարդոց փաստերը , զոր 'ի մէջ բերած են 'ի հաստատութիւն Յիսուսի Քրիստոսի աստուածութեան և նորա կրօնքին ճշմարտութեան :

Մեր երիտասարդաց սւշադրութիւնը կը հրաւիրեմք մարդկային ազգի 'ի նպաստ քրիստոնէութեան արած այն սոյցճառ ու ճօխ յայտարարութեանց և բոլոր այն խոստովանութեանց , զոր ճշմարտութեան ուժը իղած առած է փիլիսոփայից բերնէ , ըստ համոզուած լինելով որ ամեն անոնք որ անկեղծօրէն ճշմարտութիւնը կը հետադատեն , կրօնքի սա երեք էական կէտերու

վերայ պիտի հաստատեն իրենց ունն, այն է՝ Աստուած, Յիսուս Քրիստոս և Եկեղեցի, առանց մնալու իրենց՝ արդարամիտ մարդու արժանի եղող միակ առարկութիւն մի :

Եստ ժամանակէ ՚ի վեր ապացուցուած է թէ՛ կամ ուղղափառ բրիստոնեաց լինել պէտք է, կամ անաստուած : Սոյն երկու վիճակաց մէջ չըկայ միջին, որոյ մէջ մարդկային միտքը կարենայ կանգ առնուլ, եւ անաստուածութիւնը մարդկային մտայ և իմացականութեան յուսահատութիւնն է, այս է փիլիսոփայական անձնասպանութիւն ասածը : Վերջին դարուս մէջ՝ ճշմարտութիւնը փոխանցելու համար Աստուծոյ ՚ի դուրձ դրած եղանակին դէմ խօսեցան, և այն իբր թէ բանավարութիւնը վերաւորելով : « Ինչո՞ւ համար, ասացին, Աստուծոյ և մարդոյս մէջ մարդիկ մանեն, ինչի՞ պէտք է քահանայութիւնը » : Խիստ կարեւոր եղաւ ճանչել հասկանալ թէ Քիսուս, ազատարարութեան այն Աստուածը, այս բանիս մէջ իբր բնութեան Աստուածը վարեցաւ, ըստ որում ճշմարտութիւնը քահանայութեան միջոցաւ կը փոխանցէ, ինչպէս կեանքը հայրութեան միջոցաւ : Ճշմարտութիւնն և կեանք մի և նոյն աղբիւրն ուրեմն ունին և իրենց փոխանցումն ուրեմն մի և նոյն

օրինաց ենթակաց է, Ուրեմն նոյն Աստուած է որ հիմնեց փեղեբքն եւ ուղղափառ կրօնքը :

Էջր մարդիկ իրենց նախահօր մեղաց պատժոյն կ'ենթարկին : Էջր Մովսէս հրաման կ'անէ ազգութեանց մի մասն սրով կտորել, որոց մէջէն կ'առաջնորդէ կը տանի Հրեաց ժողովուրդը : Սօքա այնպիսի գործեր են որ կը թուին թէ՛ հակասութեան մէջ են Աստուծոյ բարութեան հետ իւր արդարութիւնը : Բայց նոքա որ հաւատալով ՚ի մի Աստուած արարիչ եւ վարձատրիչ սոյն առարկութիւնն հանեցին, ուշադրութիւն չէին աներ, որ բնութեան կարգին մէջ կան անհասաներ որ իրենց ճնամ ժամանակ ձեւոյ եւ կերպարանաց թերութիւններ հետերնին կը բերեն, որ իրենց հօրն անբարոյականութեան եւ խառնակեցութեան կը վերադրին, թէ՛ միլիանաւոր արդոյք մահու ճարակ կը լինին, թէ՛ անհամար պատուհասներ, որոց մէջ առաջին տեղ կը բռնէ պատերազմը, անդուլ կտորած կուտան մարդկային ընկերութեանց, եւ թէ՛ բնութեան Աստուածն եւ Աստուածաշնչի Աստուածը մի եւ նոյն եղանակաւ կը վարին այս բանիդ մէջ, եւ թէ՛ եթէ մին ընդունիմք, հարկ է միւսն ալ ընդունել :



որովհետեւ Նոր Կտակարանը նայնպէս սեր-  
տիւ կապուած է Հին Կտակարանի հետ ,  
ինչպէս այն վերջինը կապուած է բնու-  
թեան գրքին հետ :

Յաճախ կրկնուած առարկութիւններէն  
մին զոր կ'անեն մարդիկ , այն է զոր Բէռ-  
արած է Աստուծոյ նախադիտութեան ,  
հրեշտակաց եւ մարդկան անկման վերայ :  
Աստուած կ'ասեն , գիտէր որ մարդս շա-  
րաշար սխախ բանեցրնէր իւր ազատ կամքն .  
ասցա էր սակզձեց զնա : Սոյն ձեռնարկու-  
թիւնը , ինչպէս արդէն տեսանք , քիչ ար-  
ժէք ունի ազատութեան յարգը ճանաչող  
մարդոց մօտ : Աստուած ինքնագոյ է , կու-  
մեցաւ իւր նմանութեանը սակզձել զմարդ :  
Արդ , ս'ը յաակութիւնն առաւելայլէս կա-  
րէ բարձրացրնել զմեզ քան զազատութեան  
ստորգէւն որ մեր ձեռաց մէջ կը դնէ մեր  
վիճակը , ե որ՝ չը կարենալով իբրեւ զԱս-  
տուած մէք մեզ գոյութիւն տալ , անով՝  
սոսինքն ազատ կամօք մէք զմեզ կըստեղծեսք  
յաւխտենապէս կամ երջանիկ կամ թշուառ :  
Մի անգամ որ ազատութիւնը արուեցաւ ,  
հարկ եղաւ որ մարդս արժանաւորութիւն  
ունենայ կամ անարժանութիւն . ուստի կը  
ծագի Աստուծոյ ծրագիրը . իւր սէրը հարկ  
եղաւ որ կանգ առնու մարդոց ազատակա-

նութեան վճառն առջեւ : Եւ ո՞վ արդարեւ  
 պիտի հաւատար նորա անձնիչխանութեան,  
 եթէ չը կարենար շարաշար վարուիլ անով .  
 և եթէ ամեն ստեղծուածք մշանջենապէս  
 երջանիկ լինէին, որո՞յ մտքէն պիտի անցնէր  
 թէ նորա կարելի է որ սխալին մի օր : Աս-  
 տուծոյ նախախնամութիւնը մարդոյս գոր-  
 ծերն բնաւ չ'որոշէր : Աստուած գալիքը  
 կը տեսնէ ինչպէս մարդ զանցեալը կը տես-  
 նէ : Յրուատտի վերայ ինչ որ գիտեմք, ամե-  
 նեւին ոչ ինչ աւելի ներգործած է նորա  
 որոշման վերայ քան զայն զոր Աստուած  
 գիտէր 'ի յաւիտենից :

Մեղիք է թէ քրիստոսնեական կրօնքէ  
 դուրս գանուող մարդիկ փրկութենէ զնրկ  
 են՝ թէ ոչ : Սոյն խնդիրը կը յուղուի ստեղ-  
 ոչ միայն աստուածաբանից, այլ և մեր սա-  
 միկ անուս ժողովրդոց մէջ, որոց բաւական  
 գայթակղութիւն իսկ տուած է : Լատին  
 Եկեղեցին մի վճիռ ունի ոչ սակաւ գայ-  
 թակղեցուցիչ, այն է : Արտաքոյ կաթողիկէ  
 (ընդհանրական) Եկեղեցոյ չիք փրկութիւն .  
 Շատերը այն խօսքը կը յեղեղեն բառա-  
 կան մտքը առնելով, այսինքն նա որ Լատին  
 Եկեղեցոյ չը վերաբերիր, նմա փրկութիւն  
 չը կայ : Իսկ նոյն Եկեղեցոյ անգամ եզոզ  
 աստուածաբանք և ողջամիտ իմաստասէրք :

ընդ որս և սոյն թարգմանութեան բնագրին հեղինակը կաթողիկէ Եկեղեցի ասելով կ'իմանան ընդհանուր ժողովն հաւատացելոց կամ բարեհաւատ մարդոց, և ոչ թէ քրիստոնէութեան արտաքին դաւանութենէ դուրս գանուող անձինքը. եւ հակառակ կրօնամուտ Վատինաց՝ Եկեղեցին ոչ միայն քրիստոնեայ՝ այլ և ընդհանրական (կաթոլիկ) կոչուելով իւր ծոցէն դուրս ձգել կամեցած չէ բոլոր այն մարդիկն որք ապրեցան, կ'ապրին և պիտի ապրին երկրիս վերայ. Հրեայք որք հաւատք ունեցան, նահապետք, Ադամայ եւ Սեմայ որդիքն որք իրենց ծանօթ եղած օրէնքը պահեցին. նոյնպէս նորս որոց երկրին մէջ քրիստոնէութիւնը դեռ չը քարոզեցաւ, սորս ամենքը պիտի դատուին բնական օրինաց համեմատ, որ ըստ Պաւղոսի (Հռմ. Բ. 15.) գրուած է նոցա սրտին մէջ.

Ենթադրեմք մի վայրենի մարդ, որ իւր տեղական վիճակի պահանջմամբ բացարձակապէս անբաւական և զուրկ լինի այն տեսակ կրթութենէ որ միայն ընկերական կենաց մէջ կը գանուի, այնպիսին, եթէ հարկ է, կ'ասէ մի Վատին աստուածաբան, Աստուած անդունդները վեր կը բարձրացընէ, երկիրը կը զզոզեցընէ և յերկնից հրեշտակ

կ'իջեցրնէ փրկելու համար զայն որ իւր սիրելին եղած է : Ոչ, անտարակոյս, Աստուած չքնեքեր բնաւ որ կորնչի ո՛րք եւ լինի, փրկութեան հարկաւոր ճշմարտութիւնը չը կարենալ ճանչելուն համար, զոր փափարած է ուսանիլ : Անհաւատից յարձակմունքը՝ նկատմամբ կրօնքի սոյն կարեւոր կէտին, ուղղուած էին ուրեմն հերեւտիոսութեան այն անձուկ գաղափարաց դէմ, որոց աղբիւրն էր նոյն իսկ հերեւտիոսութիւնը, և չէր կարելի ընդհանրական բառին վերադրել, որոց անունն և եթ կը հերքէ այսպիսի դժբաղդ մի զրկողութիւն :

Աններողութիւն բառը կը տրուի Վատին և Յոյն Եկեղեցեաց նկատմամբ Հայոց և այլ քրիստոնեաց հատարակութեանց որք չեն իրենց դաւանակից : որչափ և մերժուի իրենց կողմանէ, և երբեմն առ երեսս անխտրութիւն ցոյց տան, մանաւանդ օրթոգոքս Եկեղեցին, այսու ամենայնիւ, ՚ի բաց առեալ մի փոքրաթիւ մասն ազատամիտ կղերաց, ստորին կարգի և անուս եկեղեցականք միշտ ցոյց տուած են աններողութիւն ՚ի մասին Հայ Եկեղեցւոյ արարողութեանց և Արբաղան Խորհրդոց կատարման, իսկ Հայաստանեաց Լուսաւորչական Եկեղեցին, որ պարծանօք կ'անուանէ զինքն

աղատ Եկեղեցի ըստ բանից նոյն խակ լուսավոր բողոքականաց, հեռի է աններսողութենէ, նորաձեւութիւններէ և եկամուտ ձեւերէ և դաւանութիւններէ, կ'ընդունի միւս ամեն մասնաւոր Եկեղեցիքն իբր քոյր-Եկեղեցի, որոց առաքելականութիւնը հաստատուած է: Ինքը պահած է և կը պահէ և պիտի պահէ անփափօխ ինչ որ ընդունած է ՚ի Թաղէ սոսէ և ՚ի Քարդողիմէ սոսէ և ՚ի Ս. Լուսաւորչէ: Իւր ուսուցած վարդապետութիւնը կը կայանայ Ս. Գրոց վերայ, ընդունելով միանգամայն տւանդութիւնները որք յԱռաքելոց առ մեզ հասած են եւ կ'օգնեն Ս. Գրոց տրուած մեկնութեան: Ըստ հաճոյս իւրաքանչիւր անհատի, որոց ողջմտութիւնը չէ ընդունուած մի ժողովրդէ, տուած մեկնութիւնը չընդունիր և կը մերժէ:

Յայտ է ուրեմն թէ մարդս Եկեղեցւոյ վարդապետութեան մէջ մի գործիք է և ոչ օրէնսդիր. նա ընդունած է աւանդը, կը պահէ զայն եւ ապագայից կը փոխանցէ: Կաթողիկոս թէ Պապ, Եպիսկոպոս, Վարդապետ, Քահանայ, հաւատացեալ, ամենքն ալ մի ամբողջի մասունք են ուրեմն, օրէնք եւ կանոնք գոյութիւն ստացած են սոցա իւրաքանչիւրմէ յառաջ, և ամենեքին հարա-

տակ են նոցա : Ուղղութիառ կրօնքին , ինչպէս և Հռոմէական կրօնքին մէջ սչ որ են թակաց է մարդոյն . Կաթողիկոս թէ Պապ , նոյն իսկ սիւնհօդոսք , երբ իւրեանց վճիւր կ'արձակեն , սարտաւոր են յենուլ Ս . Գրոց և աւանդութեան վերայ : Հոգին Սուրբ է որ նոցա բերնով կը խօսի . հետեւապէս անսխալ է Եկեղեցի , իմա ժողովն ընդհանրական , իւր՝ ՚ի պաշտպանութիւն և ՚ի յայտնութիւն ճշմարտութեան տուած որոշմանց եւ վճռոց մէջ . հետեւապէս մի անհատ , թէեւ Պապ լինի՛նա կամ Կաթողիկոս , կարէ սխալանաց ենթակաց լինել թէ՛ հաւատոց , թէ՛ բարոյական և թէ՛ աշխարհական խնդրոց մէջ , որովհետեւ Յիսուս ասաց , այն ժամանակ ձեզ հետ կը լինիմ , երբ երկու կամ երեք հոգիք ժողովիք յանուն իմ :

Խնդիր յուզուած է դարձեալ խոստովանութեան և հաղորդութեան մասին , զոր բողոքականք մինչեւ մետասաներորդ դար կը հանեն հաստատուած լինել : Կ'երևի թէ նորափառութեան հիմնադիրք ուսումնասիրած չեն , թողումք Հռոմէական , այլ արեւելեան Եկեղեցեաց Եկեղեցական պատմութիւնը և զանազան վաւերական մատեանները , զորս և թէ կարգացած լինէին , գոնէ մինչև չորրորդ դար կը հանէին նոցա

Հաստատութիւնը . այն է Հայոց , Յունաց ,  
 Ասորւոց և այլ քրիստոնեաց ազգաց ընդու-  
 նած լինելը յիշեալ երկու խորհուրդները .  
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ շորթորդ գա-  
 բու սկիզբները երեւցաւ , և այն ժամանակ  
 կէն կը սկսի իւր հաւատոյ վարդապետու-  
 թիւնքն և հրահանգներն որոց վերայ վեր-  
 հաստատեց Հայաստանեայց Եկեղեցին , Նա  
 ընդունած է խնդրոյ տակ եղած յիշեալ  
 երկու խորհուրդներն այն մտօք այն հաւա-  
 տով՝ որով ըմբռնած է մինչեւ ցայսօր նոյն  
 Եկեղեցին Հայոց . և ինչ որ ուսած է ինքն  
 եօթն խորհրդոց վերայ ՚ի Կեսարիա , չէ  
 ներմուծած իւրահաստատ Եկեղեցւոյ մեջ  
 առանց դիմելու Ս . Գրոց և Առաքելական  
 աւանդութեանց , և չիք ուրեք նշանակուած  
 յանուանէ թէ այս ինչ անձը հնարած է  
 զանոնք յընթացս նախկին երեք դարուց  
 այն մտօք և նշանակութեամբ զոր կուտան  
 այսօր թէ արեւմտեան և թէ արեւելեան  
 Եկեղեցիք :

Ինչ որ խօսեցանք խոստովանութեան  
 և հաղորդութեան մասին , նոյնը կարէ վե-  
 բարեբիւ նաեւ Արքոց բարեխօսութեան ,  
 ննջեցելոց համար եղած աղօթից , վերջա-  
 պէս բոլոր այն երկրորդական հաւատալեաց ,  
 որոց դէմ ընդդիմախօսութիւնք կը լինին :

Քրիստոնէսաց աղգերքը թէեւ իրենց մէջ բաժնուած են, սակայն հաւատարիմ գոյով քրիստոնէական պաշտաման և նորա կենսատու սկզբանց, ոչ դոյզն զարգացոյց մարդկային մտաց կարողութիւնքը: Պիտութիւնք, գրականութիւն, արհեստք, ճարտարութիւն, խիստ մեծ յառաջադիմութիւն արին. նորանոր գիւտեր մարդոյս հանձարոյ սահմաններն ընդարձակեցին և նորա գործօնութեան աւելի ընդարձակ ասպարէզ բացին: Շոգին, այն զօրաւոր գործիչը, որ ժամանակի և հեռաւորութեանց վերայ կը յաղթանակէ, բնակաւոր երկրի ամեն մասունքն իրարու մօտեցոյց: Մեքենականութիւնը միջոցներ տուաւ մամլոյ իւր աշխատութիւնքը բազմապատկելու և թարգմանելու մտաց խորհուրդները նոյն իսկ մտաց արագութեամբը: Հեռագիրը, հեռաձայնը ամենէն հեռաւոր ժողովուրդը գրեթէ անմիջական հաղորդակցութեան մէջ դրին: Քաղաքականութեան սոյն գործիչներն իմացական մի մեծ յեղափոխութիւն պատրաստեցին, դիպաց, այսպէս ասեմք՝ ընդհանրականութիւնն ստեղծելով: Այսօր աշխարհ բոլոր իւր մասանց մշտնջենաւոր հաղորդակցութեան մէջ լինելով, ընդ փոյթ, ինչպէս կը փափաքի մեր հեղինակը, մի



մարմին կարելի է կազմեն, մի և նոյն կեանք,  
մի և նոյն կրօնք ունենալու համար:

Գիտութեան արած գիւտերու մէջէն  
կամեցան դարձեալ առարկութիւնք հանել  
կրօնքի ճշմարտութեան դէմ: Ժամանակա-  
գիրքն, երկրաբանութիւնն, աստղագի-  
տութիւնը, բնագիտութիւնը, պատմու-  
թիւնը, նոյն իսկ բժշկականութիւնն իրա-  
բու ետեւ հարցափորձեցան. անհաւատու-  
թիւնը պնդած էր նոցա մէջ հաւատոյ դէմ  
զէնքեր գանել, այլ ՚ի զուր. ժամանակը  
քայլ մի առաւ, և եղած առարկութիւնք  
ամբողջ յօդս ցնդեցան, և Սրբազան մատ-  
եանք կրկին կը փայլին իրենց բոլոր պայծա-  
ռութեամբ և հեղինակութեամբ ասպագայ  
սերնդին համար: Ժամանակն ուրեմն ճշ-  
մարտութեան իբր յաղթանակը միշտ կը  
ծառայէ, և այն ձեռքն որ զաշխարհ հիմնեց  
եւ զոր հաստատուն կը պահէ, նոյն է որ  
զեկեղեցին հաստատեց և անսասան դիմա-  
ցաւ ամեն փոթորիկներու մէջ:

Ան շատ դէպքեր ուրք իբր ստոյգ չա-  
րիք կը թուին մարդոցս աչաց, բայց սոքա  
միջոցներ են որով Նախախնամութիւնն իւր  
աստուածային գործը կը կատարէ: Վկայ  
անցեալ դարու վերջին քառօրդի մէջ պա-  
տահածը: Իմաստակութիւնն իւր կարճ

լնթացից մէջ աթոռներ և օրէնքներ կոր-  
 ծանեց, տանջանաց և գելարանի գործիքներ  
 խորտակեց, տաճարներ սղծեց, օրինաց  
 մէջ բարբարոսութենէ ինչ որ կայր մնա-  
 ցած, զանոնք ալ անհետ արաւ, ու յետոյ  
 ինքն եւս անհետ եղաւ: Քայց իւր սուրբ  
 միայն զեղծմունքներն և նախապաշարմունքը  
 կարողացաւ ջնջել, և ճշմարիտ կրօնքը կր-  
 կին ձեռք առաւ իւր իշխանութիւնը: Ու-  
 րեմն սոցա մէջ առաւելապէս պէտք են  
 փիլիսոփայք իրենց ցանկացածը հետազո-  
 տել գտնել, և ոչ թէ արհեստից, ոչ թէ  
 պատմութեանց, ոչ փիլիսոփայութեան,  
 ոչ գիտութեանց և ոչ անձին մէջ: Վասն զի՝  
 ճշմարիտ կրօնքը գտնելու համար, բաւա-  
 կան չէ, ինչ որ ալ ասէ երեւելի մի փիլի-  
 սոփայ, այն հին առածին հետեիլ որ Գել-  
 փեայն տաճարի ճակատին վերայ գրուած  
 էր. Ծանիր զքեզ:

Յիսուս յերկիր իջած ժամանակ իմաս-  
 տունք կ'ասէին, ինչպէս կ'ասեն և այսօր  
 իսկ. Ուսիր զքեզ. Ծանիր զքեզ. այսու ա-  
 մենայնիւ ՚ի զուր կ'ուսանէին նոքա, վասն  
 զի՝ ոչ աւելի երջանիկ կը լինէին և ոչ աւելի  
 լաւ: Եւ յիրաւի, զի՛նչ կարող է մարդ  
 իւր անձին մէջ գտնել, բայց եթէ՛ մի շատ  
 ազխտութիւն, մի շատ վատ կիրքեր, մի

մեծ թշուառութիւն. իսկ ճշմարտութիւնը,  
 եթէ նորա մէջ լինէր այն, ապիտութիւնը  
 կը լինէր այն տեղ. իսկ առաքինութիւնը,  
 եթէ նորա մէջ լինէր այն, կիրքերը կը լի-  
 նէին այն տեղ. հասցա երջանկութիւնը,  
 եթէ այն մեր ներսիցին բնակէր, թշուա-  
 ռութիւնը կը տեսնուէր այն տեղ. Ուրեմն  
 այս ասածներս ուրիշ տեղ հարկ է որոնել.  
 և ո՛ւմ գիմեմք, եթէ ոչ նմա՝ որ յաւիտե-  
 նական կենաց խօսքեր ունի, այն է սուրբ  
 Եկեղեցին: Որովհետեւ հեռի լինելով Եկե-  
 ղեցին մարդկային իմաստութեան նմանե-  
 լու, որ՝ ըստ իւր խոստովանութեան, չըզի-  
 տէ կրօնքին ուր լինելը և կ'ասէ մթին մէջ  
 թաղուած մարդոյն. Փակէ աչկուձքդ, կա-  
 րելի է որ մի բան ունիս քո ներսիցիդ . . . .  
 Այ ինչ չէս տեսներ, բայց համբերէ, գուցէ  
 ապագային մէջ յոյսք փայլի այն ժամանակի  
 մէջ ապրողներում: Եկեղեցին, կ'ասեմ, այս  
 օրինակ կատակաբանութեամբ չը ծաղրէր  
 մարդկութիւնն, ինքն իւրաքանչիւր օրդւոց  
 մօտ կ'երթայ, կը տանի նորա քով ոչ թէ  
 գժգոյն մի աղօտ լոյս, այլ զարեգակն իւր  
 բոլոր սոյցճառութեամբ թէ՛ մեծին և թէ՛  
 փոքրին, թէ՛ գիանոյն և թէ՛ տգէտին. Ես  
 յոյս յաշխարհ եկի, ասաց ճշմարտութեան  
 արեգակը. նորա միայն որ զլոյս շէն սիրէր,

ազատ են աչքերնին խփելով խաւարին  
մէջ ծածկուելու, ինչպէս ազատ են անձ  
նատուր լինել չարին և դահալէժ ընկնիլ  
յանդունդս :

### ՄԻ ՈՒՐԻՇ ԱՊԱՑՈՅՑ ԿՐՕՆԻ

**Ի**ՆՊԱՍՏ քրիստոնէութեան հանած իմ  
ամեն փաստերս, կ'ատէ փիլիսոփայից մին,  
հին կրօնից եւ օրէնսդրութեանց բազդա-  
տական քննութենէ յառաջ կուգան, Նրկու  
խօսքով ասեմ, ես քրիստոնէութիւնն ապա-  
ցուցած եմ իւր բարիքներով : Նա ամեն  
ինչ փոփոխեց կամ բարւոքեց, անկէ յա-  
ռաջ պաշտամունք եւ վարդապետութիւն  
չէին ինչ որ են այժմ : Հին քաղաքն ուրիշ  
կերպ կարգաւորեալ էր քան զքրիստոնեաց  
քաղաքը, տղայոց, կանանց վիճակը ցաւա-  
լի էր նախնեաց օրէնսդրութեան օրով,  
մարդոց դերութիւնն օրինաւոր համարուած  
էր, բարքերն անպատիւ եղած էին : Յի-  
սուսի գալտունէ յառաջ իշխանութիւնն  
իրաւունք մի եղած էր, քրիստոնէութիւնն  
զայն մի սարտաւորութիւն արաւ և քան  
զամեն սարտաւորութիւնքը մեծ, թացա-  
տրեմք այս զանազան առաջարկութիւնքը :

Ի՞նչ էին հեթանոսական հին ժամանակի բոլոր ժողովրդոց շաստուածները, Մարգիկ, կենդանիք, մետաղք, մի քանի գայլախաղք և այլն : Բազմաստուածութիւնը զամեն ինչ պաշտեց : Իսկ եթէ շաստուածոց վերայ եղած գաղափարներն սուտ և անտեղի էին, ի՞նչ պէտք էր ուրեմն որ լինէին նոցա պաշտօնը, կամ ծաղրական, կամ դաժան, և պատմութիւնը կ'ասէ մեզ այնպէս լինելը : Ո՞վ կարող է առանց սոսկալու մտածել մարդկային զոհերու վերայ : Ո՞վ կարէր այսօր առանց զզուելու տեսնել հին ժամանակի այն կրօնական տօներն, ուր հրասպարակաւ կը գործուէին ամենասոսկալի անառակութիւններ :

Հեթանոսական փիլիսոփայութիւնը մարդկային հոգին կը բաժնէր, եւ հոգւոց այլ և այլ բնութիւն ունենալը կ'ընդունէր : « Ազատ մարդը, կ'ասէ Արիստոտէլ, գերւոյն վերայ մի իշխանութիւն կը բանեցընէ, որ չէ նոյնը զոր ունի մի այր իւր կ'նօջ վերայ և ո՛չ այն, զոր ունի հայր մի իւր որդւոց վերայ. ՚ի վերայ այսր ամենայնի՝ հոգւոյն մասերը կան յիշեալ իւրաքանչիւր էակաց մէջ, բայց այլ և այլ են : Քերին զուրկ է մի բան որոշելու կարողութենէ, կիներ թէ եւ ունի, բայց տկար է և անբաւական :

տղայն նոյնպէս ունի, բայց անկատար և ոչ լրացեալ: Աւասիկ միակ մի հոգի և եթ բազմաց համար, եւ մի անհատ միայն՝ որ հոգւոյն ամենազնիւ մասն ստացած է իրեն: Նա միայն ազատ պիտի լինի, գերին, ինչպէս կը յայտնէ նոյն փիլիսոփայն, հոգեւորեալ ստացուածք մի է, տիրոջ մի մասը, և կանայք ազատ մարդոց կէսն են միայն, նոյնպէս են նաեւ տղայք, տիրոջ մի մասն են: Արչափ երախտագէտ ուրեմն պարտին լինել քրիստոնէութեան՝ կանայք, տղայք և գերիք: Քրիստոնէութիւնը միայն տուաւ նոցա մի հոգի: Սոկրատ, հեթանոս փիլիսոփայից մէջ միակ բարեբարոյն, կը հաստատէ որ Աստուած մարդոց ծնանելու ժաւմանակ աստուածեղէն ոսկին կը խառնէ առաջին կարգի անհատից հոգւոյն մէջ, իսկ երկրորդ կարգի մարդոց հոգին երկաթով կամ սղինձով կը բազադրէ, որք սահմանեալ են կամ արհեստաւոր և կամ երկրագործ լինել: Աւասիկ արմատական եւ աստուածային իրաւանց անհաւասարութիւն, հիմակ պիտի տեսնեմք զայն Քրիստոնեայ աշխարհի մէջ կարգաւորեալ:

Իւրաքանչիւր ընտանիք, կ'ասէ Արիստոտէլ, քաղաքին մի մասն են. բայց քաղաքը ոչ թէ միայն մարդոց բազմութեամբ

կը բաղկանայ, այլ և զանազան տեսակ մարդիկներով, և չքարէր նա կանգուն մնալ թէ ամենքն համանման եւ նաւասար լինէին: Եւ այք են համանման և հաւասար եղողները: Աւերին դասերու մարդիկը. սոցա և եթ պարտք է տալ հասարակային կրթութիւնը՝ որ զմիութիւնը կը կազմէ: Նոյն հեղինակն որոշակի կերպիւ կը յայտարարէ՝ թէ բնաւ լաւ կարգաւորեալ քաղաք մի չքախախ ընդունի մի արհեստաւոր քաղաքացւոց դասուն մէջ, Քաղաքացին այն է՝ որ պետական գործոց հաղորդակից կը լինի: Աւերմն քրիստոնէութիւնը բարոյապէս և քաղաքականապէս ազատեց ըզմարդիկ, զորս նախկին օրէնսդիրք յանիրաւի կը ձգէին ստորին դասուց մէջ, այսինքն՝ մարդոց մեծամասնութիւնը: Աթէնք քառասուն հազար գերի ունէր, եւ միայն քսան հազար քաղաքացի: Ի վախճան հռոմէական հասարակապետութեան, Հռոմ գրեթէ մէկ միլիոն և երկու հարիւր հազար բնակիչ ունէր և հազիւ երկու հազար կալուածատէր կը հաշուէր:

Հիմակ քննեմք տեսնեմք թէ կանանց, տղայոց և գերեաց հետ ինչպէս կը վարուէին, որք հոգւոյն բանական մասէն զուրկ էին. «Եթէ մի գերի, կ'ասէ Պլատոն,

մի ազատ մարդ կը սպաննէ , որ նորա վերայ  
յարձակած լինի սպաննելու նպատակաւ ,  
Թող պատժուի որպէս հայրասպան մի ,  
Հռոմէական օրէնքը գերեաց մարդոց անուն  
չը տար . գերեսպանին պատիժը նոյնն էր՝  
ինչ որ էր այլոց մի շունը կամ ձին սպանու  
ղինը :

Հռոմոցի մէջ մի հայր կարող էր իւր  
չը սիրած զաւակը դուրս ձգել . Սպարտացի  
մէջ՝ եթէ տղայք տձեւ կամ տկար կազ  
մուած ունենային , կը սպաննուէին : Սոյն  
դարու մէջ օրինաւոր երկու միջոցք կային  
մարդոց չափազանց բազմանալն արգիլելու .  
առաջինն էր տղայոց մահը ծննդէնէ յառաջ  
կամ յետոյ , դաժան դործ . երկրորդն էր  
անբնական հեշտասիրութիւն , անպատիւ  
դործ : Զասոնք իմանալէ յետոյ Թող դար  
ձեալ ասէն թէ քրիստոնէութիւնը Նա  
խախնամութիւն չէ եղած գերեաց և տը  
ղայոց . իսկ կանայք . . . :

Գիտեմք որ կանայք ազատ չէին : Գե  
րադաս լինելու յարաբերութիւնը , ըստ  
բանի Արիստոտելի , կը մնայ հաստատապէս  
արական սեռէ իգական սեռի . ինչպէս բա  
րոյականի նոյնպէս և բնականի մասին կը  
խօսի : Տեսնեմք այժմ թէ ինչ համարում  
ունէին կանանց վերայ : Նախ կնաթողու-



Թիւնք , կանանց պատիւն ազարտող այն  
 օրէնքն , ամեն ժողովրդոց քով ընդունուած  
 էր ( բայց ՚ի Պերմանացիներէ՝ ըստ Տակիստ-  
 սի ) . բայց գրեթէ ամեն օրինադրութիւնք  
 այր մարդոյն շնորհած էին սոյն իրաւունքք :  
 Երբ Աթէնացիք ձանձրանային իրենց կի-  
 ներէն , այլոց վարձու կուտային ստակով .  
 երբեմն կորովի զաւակներ ունենալու հա-  
 մար անոնցմէ , ինչպէս Լակեդեմոնացիք ,  
 Հռոմայեցիք ամենաչնչին պատճառներով  
 կ'արձակէին . շատ անգամ պառաւուրթեանը  
 համար : Սոյն թուականներուս կանայք զոհ  
 կ'երթային վայրագութեան կամ մարդոց  
 ագահութեան : Բայց զարդիս ոչ եւս է  
 այնպէս : Մեր օրինաց զօրութեամբ , կ'ասէ  
 ժամանակակից մի հեղինակ , կիներ հաւա-  
 սար է այր մարդոց , և մեր բարոյից մէջ  
 տէր է նմա : Ո՛ւմ պարտաւոր եմք տալ  
 կանանց վիճակի մէջ եղած սոյն փոփոխու-  
 թիւնք . քրիստոնէութեանն :

Աւասիկ ամբողջապէս ցոյց տուինք թէ  
 ո՞նք էին նախնի ընկերութեանց մէջ մարդոց  
 յարաբերութիւնքք : Անցնիմք ազգաց իրա-  
 ւանց : Պատերազմի արհեստը , Արիստոտէլ  
 է որ կը խօսի դարձեալ , բնական միջոց է  
 երկիր ստանալու : Յաղթողը կարող է ըստ  
 կամաց սպաննել կամ գերի վարել իւր ձեռն

ընկնող մարդիկը : Աւելին կայ . երկու ազգ-  
որք փոփոխակի զիրար կը ջնջեն , զուարճալի  
տեսարան մի կը համարին յաչս մի քաղաքա-  
կիրթ ժողովրդեան : Տակիտոս , որ Հռոմէ-  
ական պատմագրաց մէջ ամենէն բարեբա-  
րոյն համարուած է , այսպէս կը գրէ մի  
տեղ . « Կ'իմանամք որ Շամաք և Անգրի-  
վարեանք Բրուկաերաց տեղիքը զբաւած  
են զանոնք հալածելէ եւ բնաջինջ անելէ  
յետոյ . . . : 60,000 էն աւելի մարդիկ կոր-  
սուեցան , ոչ թէ մեր զինուոց ուժին ներ-  
քեւ , այլ որ աւելի մեծ և սքանչելի է ,  
զուարճալի մի տեսարան մեզ ներկայացը-  
նելու համար » : Այսօր ո՞ր մարդը կը հա-  
մարձակէր այսպիսի մի զգացմունք յայտ-  
նել , որ հեթանոսութեան հին ժամանակի  
բոլոր մարդոցն էր :

Այսպէս արդի ազգայնութիւնք , ինչ-  
պէս ամեն մի անհատ , քրիստոնէութեան  
կը պարտին զամեն ինչ . բարոյական ազա-  
տութիւն , քաղաքական ազատութիւն , քա-  
ղաքային օրէնք , իրաւունք ազգաց , իրա-  
ւունք հասարակային կենաց իսկ , ինչպէս  
որ տեսանք : Բայց ամենն այս չէ , Նա փո-  
խեց զոհարարութեան ձեւն , երբ հին ժա-  
մանակներ վերագոյն դասէ մի մարդ սոս-  
րին դասէ եզող մի այլ մարդ իրեն կը զո-

հէր, այսօր իւր իմացականութեամբը վերադաս եղող մարդն է որ կը պարտաւորի նուիրել իւր անձն այլոց բարեկեցութեան, եթէ կը կամի նա զօրութեան տէր լինել: «Որ ոք կամիցի ՚ի մէնջ, ասաց երկնաւոր օրէնսդիրը, մեծ լինել, եղիցի ամենեցուն սպասար»: Աւասիկ հաւասարեց ընկերութեան մէջ զօրութեան կամ իշխանութեան միակ ձեւը, զոր քրիստոնէութիւնն ստեղծեց:

Ինչպէս կը լինի որ քրիստոնէութեան ստեղծած այսչափ զարմանալի գործոց առջեւ դեռ զըպարտիչներ գանուին: Նորա խիստ տգէտ կամ խիստ վատ պէտք է լինին: Մի միայն սլատմութեան ընթերցումը հարկ էր առաջնորդել իրենց դէպ ՚ի սոյն վէհ և բարերար կրօնքը:

